

12
63



2004



1003

✓ ՏԵՄԱՐԻՏ

Դ Լ Պ Զ

C.

ACCURATE

Q. H. C.

2910

1995-ԱՀ



ՀԱՐԿԱՆՈՐ ՄՏԱԾԱԿԱՆԵՐ




ՎՐԵՄՆԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՎԵՐՔ

1849

241




Դ ԽՆԴՐՈՅ

ԱՍՏՈՒԱՆԱՆԿՐ ՄԵԽԱՆԻԿ ԱՂՋԱՏ

ՀԱՅԵԱՆ

Դ ԵՒՀԱՏԱԿ

ՎԱՀԱՄՄԵՐԻԿ ՈՐԴԻՈՅ ԻՒՐՈՅ



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հոգեոր գրոց մէջ անոնք աւելի
յարգի ու օգտակար սեպուած
են որ կարճ և ազդու խօսքերով
մարդուս սրսին հետ կը խօսին , ու
գրեթէ բռնի կերպով մը կը ստի-
պեն մեր ախտերուն արմատները
չորցընել , ու յաւիտենական երա-
հութեան փափառք մը ստանալ՝ որ
մարդուս մէկ հաստիկ վախճանն
է : — Այսպիսի գրքոյկ մըն է
հիմակուան հրատարակածնիս ալ .
որն որ Պոտրանս անունով Յիսու-
սեան քահանայ մը շարագրեր .

ու քիչ առենի մեջ շատ անգամ
տպուելով՝ մեծամեծ օգոստներ
ըրած է :

Յուսանք որ Ազգերնուս բարե-
պաշտ ընթերցասիրացն ալ հաճոյ
ըլլայ մեր աս փոքրիկ աշխատու-
թիւնը, իբրև հոգեսոր մանանայ մը
իրենց աստուածակաշտութիւնը ա-
ւելի կերպով մը սնուցանող ու ա-
չեցընող. ուրիշներուն ալ խթան
մը այս Տշմարտութեանց վրայ խո-
րունկ մոածելու, և իրենք զիրենք
յաւիտենական դատասլարտու-
թենեն վրկելու. որոնք հոգե-
մեր Բարերարին ու մեր ալ փա-
փաքն ու դիտած օգոստներն են :

Համար ինձ անուշաբար ու մաս
ուժաբար ու շահածազ անձ



მას-თუნა აუდირებულ არა :

{ მეგა ღდახსნაში ფო, և յա-
-խოხაში ոչ մեղիցես, կըսէ սուրբ
գերքը :

Բայց ողէտք է որ յաւխոենա
կան Հշմարտութեանց մտածո
թիւնը ըլլայ զօրաւոր և գործու-
նեայ կերպով. զատն զի թէ որ մենք
զանոնք խորունկ նայուած քով մտա-
ծելու ըլլանք, կը տեսնենք որ մե-
զի մեկ հատիկ գեղ կ'ըլլան մը

Մ'ալբհաւ շմեղանչելու։ Թէ որ շես
գիտեր թէ որո՞նք են արդեօք աս
գլխաւոր ճշմարտութիւնները, որ
կարենան մեր սիրտը ասանկ փրկա-
րար տպաւորութիւն ընել, ահա
մէկիկ մէկիկ ըսեմքեզի ։ բաւական
է որ միշտ յիշենք զանոնք, ու փո-
րագրենք մեր սրտին մէջ :

‘Նախ’ անտարակուսելի ճշմար-
տութիւն է թէ մենք աս աշխարհքս
կեցեր ենք միայն անոր համար որ
փրկութեան հասնինք, ու թէ որ
հոգինիս չփրկենք, ալ ամեն բան
մեզի համար կորսուած է, առանց
յոյս ունենալու որ մէկ դարման
մը կարենանք ընել :

Երկրորդ՝ ճշմարտութիւն յայտ-
նի, թէ միայն մէկ մահուչափ մեղ-
քով կրնանք դասապարտուիլ յա-
փառեան . և միայն մեղքն է մեր
տունը աւրողը, ուսկից պիտոր վախ-
նանք աս աշխարհիս մէջ. վասն զի
մեղքը միայն կրնայ զմեզ թշուառ
ընել անդիի աշխարհքը :

Եղբորդ՝ Տշմարտութիւն է ան-
ստելի, թէ մէկ օր մը պիտի մեռ-
նինք, և թէ՝ կրնանք մեռնիլ ամեն
վայրկեան, և չենք կրնար մահուը
նէ ապահով ըլլալ բնաւ մէկ վայր-
կեան մ' ալ. անանկ որ ամեն վայր-
կեան մեզի վերջին կրնայ ըլլալ:

Չորրորդ՝ Տշմարտութիւն է նոյն-
պէս անսոււտ, որ նոյն վայրկեանն
որ կը մեռնինք, մէկէն գատաստանի
պիտի կանչուինք. և Աստուած Ճիշդ
համար պիտի ուղէ մեր ամեն խոր-
հրդոց՝ ամեն խօսքերնուս և ամեն
ըրածնուս համար. և աս բաներն
են մինակ՝ որ մեր ետևէն պիտորդան
կեանքերնիս ըսմընցրնելն ետքը:

Հինգերորդ՝ Տշմարտութիւն է
ստուգապէս, թէ աս ժամանակէս
ետև՝ որ շուտով կը վերջանայ, պի-
տի գայ յաւիտենականութիւն մը
անվերջանալի. և ան պիտոր ըլլայ
կամ յաւիտեան մը բովանդակ եր-
ջանիկ վայելքի՝ սուրբերուն հա-
մար, կամ յաւիտեան մը թշուառ

ամեն կերպ տանջանքի՝ մեղաւորաց
համար, անյոյս՝ անմիսիթար և ան-
վախճան յաւիտեանս յաւիտենից:
Ասոնք են ահաւասիկ մէյմէկ հաս-
տատուն, անտարակուսելի և անփո-
փոխ ճշմարտութիւներ : Ուստի ա-
ղեկ մտմտա, իսելքդ գլուխդ ժողով:

Թէ որ մարդիկ խորունկ մտա-
ծեին աս մեծամեծ ճշմարտու-
թիւնները, գիտե՞ս թէ ինչ տպա-
ռորութիւններ կ'ընէին մեր սըր-
տին մշջ : Ո՞վ կրնայ ըլլալ որ ա-
ղեկ մը մտմտալէն ետքը՝ թէ ինքը
աշխարհիս վրայ կեցած է սոսկ
Աստուծոյ ծառայելու և իր հոգին
փրկելու համար, ու ետքը ելլէ
ուզենայ իր կեանքը անցընել ան-
պիտանի բաններովուաշխարհքիիս
ղալիքներով, աչքը ևտ գարձրնելով
մէկ հատիկ հարկաւոր բանէն, որ
իր յաւիտենական վիճակը սիլտի
որոշէ : Ո՞վ է որ աղեկ մը մտմտալէն
ետք մէկ մեղքով մը կրնայ գա-
տապարտուիլ, կարենայ նորիէն մեղ

քի Ետեւէ ըլլալ . և թէ որ մեղան
շեր է , կրնայ արդեօք մէկ վայր
կեան մըն ալ անհող կենալ այդ ող
բալի վիճակին մէջ , ուր Աստուած
կրնայ իր գլխուն յանկարծական
մահ բերել : Ո՞վ է որ միտքը դնէ
թէ ամէն վայրկենի մէջ կրնայ մեռ
նիլ , ու չկենայ սոսկալով դողդզա
լով դժոխքին բերնին վըայ : Ո՞վ է
որ աս օրս անկարգ կերպով սիրե
իր կեանքը և ունեցածը չունեցա
ծը , երբոր գիտէ թէ վաղը իր ձեռ
քէն կրնայ Ելլէլ ամէն բանը : Ո՞վ
է որ ստոյգ գիտնայ թէ մեռածին
պէս պէտք է որ երկնաւոր դասա
ւորին դիմացը Ելլէ , ու ցըլլայ հի
մակուընէ ինքը իրեն անաչառ դա
տաւոր , ու ոտքի տակ չառնէ մարդ
կան գուշ դատմունքները , և չկե
նայ միշտ սկատրաստ Աստուծոյ սոս
կալի գատաստանին առջեր երեւ
նալու : Ո՞վ կայ որ հաստատ Ճանչ
նայ թէ աս մահկանցու կեան
քէս ետքը կը սպասէ իրեն անմահ

յաւիտեան մը Երջանիկ կամ թը-
շուառ, ու չիջանայ բոլոր սրտով
փախչիլ այն տարսափելի թշուառ
յաւիտենականութենէն և արժա-
նի ըլլալ անպատմելի վայելից Եր-
ջանիկ յաւիտենականութեն : Ակը-
ջապէս՝ ով կայ որ մոտեալով առ
մեծ ամեծ ճշմարտութիւնները՝ չու-
զենայ ասպրիլ ու մեռնիլ սուրբ
վարքով : Աղեկ մտածէ, լաւ նայէ :

Աս ի՞նչ կուրութիւն է, ի՞նչ
խելագարութիւն, որ մենք կընենք
աս աշխարհքիս մէջ, թէ որ չենք
խորունկը մտներ սրտանց ասանկ
մեծ ու հարկաւոր բաները քննելու-
նով անմահ հոգիք որ ՚ի պատկեր
Աստուծոյ եղած էք, աղեկ մը
քննեցէք աս առջի և վերջի ճըշ-
մարտութիւնները : Աղեկ հասկը-
ցէք արթուն խորհրդով, ուսկից
էք եկեր, ուր պիտոր Երթաք . ով
տուեր է ձեզի ձեր մարդ ըլլալը .
և որո՞ն պարտըկան էք ձեր սիրտը .
Ի՞նչ բերեր էք ձեր հետ՝ աշխարհք

եկած ատենիդ , և ի՞նչ պիտի տա-
նիք հետերիդ՝ այս աշխարհէս ել-
լելու ատենիդ , ուր պանդուխո
համբորդ մըն էք . մտածեր էք աս-
բաներս , և ի՞նչպէս մտածեր էք .
և ի՞նչ կեցեր էք առանց մտածե-
լու , կամ ո՞ր ատենին կը սպասէք որ
մտածէք : Ո՞վ դուք սուրբ և աս-
տուածային ճշմարտութիւնք . դուք
ձեր երկնային լուսովք փարատե-
ցէք զրուեցէք այն մութիւնուածուա-
լը որ մեր աջքը կը կուրցընէ . զրցու-
ցէք մեզի ամեն վայրկենի մէջ՝ թէ
ի՞նչ էինք մենք առաջուց . այսինքն՝
բոլորովին ոչինչ , ամենենին ոչնչու-
թիւն . և թէ հիմա ի՞նչ ենք . այս-
ինքն՝ մէյմէկ մեղաւոր ու յանցա-
ռոր մարդիկ . ի՞նչ պիտոր ըլլանք
մէկ օր մը . այսինքն՝ կամ յաւի-
տեան երջանիկ , կամ յաւիտեան
թշուառ : Վայ մեզի , ասանկ վեր-
ջին վախճան մը երթալու համար
զմեզ պատրաստելու՝ գուցէ ուրիշ
ատեն չունինք , բայց միայն մէկ
վայրկեան մը :

Եւեք էրթանք անսպասները
քաշուինք, որ մեր միտքը ասանկ
հարկաւոր բաներով լցուի, որով
հետեւ ասոնք միայն բաւական կ'ըւ-
լան զմեզ դարձի բերելու: Անցաւոր
բաները թողունք՝ որ անցնին եր-
թան, մենք ոնոր հետ ըլլանք՝ որ
յաւիտենական է. ուրիշ ամեն բա-
ներու մնաք բարով ըսենք, ևս ձեզի
հետ բան չունիմ, վասն զի վաղը
կամ ես կամ գուք՝ ալ չենք ըլլար:
Ազատ զիս թողուցեք իմ մնացած
կենացս վայրկեաններուն մէջ, որ
Աստուած իր ողորմութեամբը ու-
զեր է զեռ ինծի պարզեւել:

Քեզ զիս կը նուիրեմ բոլորովին,
ուշը Աստուած իմ, որ ասկից ետքը
ուրիշ բան չմտանամ՝ քեզմէ ՚ի
զատ, և մէկ բանի մը հոգ չտանիմ
քեզնէ ՚ի դուրս: Երկինք և երկիր
կ'անցնին, բայց քու խօսքդ յաւի-
տեան կը մնայ: Ուստի կ'ազաշեմ որ
զայն տպաւորես իմ սրտիս մէջ, և
կը ինդրեմ որ միշտ տպաւորուած

մնայ ինչուան ետքի շունչս : Ին-
չուան հիմա աս բաներս չմըտմտա-
ցի . ասկից եռեւ քանի որ կ'ապրիմ,
անդադար պիտի մտածեմ :

Պատմութեա :

Եկեղեցական սպասմութե մէջ
գրած է որ շատ բազմութիւն սուրբ
ասլաշխարողաց բոլոր սրտանց շար-
ժելով աշխարհքիս ունայնութե-
նէ . և յաւիտենական Հըմարտու-
թեանց մ.ծութենէն , անապատ
տեղուանիք քաշուեցան որ դիւրաւ
կարենան մտածութիւն ընել : Հոն
տեղը մէկմէկէ զատուած մէյմէկէ
քարանձաւներու մէջ կը մտնեին ,
ուր գրեթե թաղուածի պէս՝ ու-
րիշ բանի հետ չելին ըլլար , բայց
միայն մամտալու աս յաւիտենա-
կան Հըմարտութիւնները . ուստի
սրտերնին անանկ կը շարժեր որ ա-
մէն կերպ խիստ ապաշխարանքներ
կը քաշէին , և ամէն կերպով զի-

ըենք կը մաշեին կը մաշեին , աղօթ-
քով քնհատութեամբ , պաք ծում
ռոնելով , քուրջ հազնելով , արիւն
թափելու չափ ճգնութիւններով .
իրենց մարմինը գերիի պէս ծա-
ռայեցընելով գեղնած գունաթափ
կը մնային և չոր ոսկոր կը դառ-
նային . կերածնին խոտերու արմատ-
ներ կամիսեղձ հացի կտոր , ան ալ
արցունքի հետ խառնած : Ասանկ
կ'անցընեին կեանքերնին՝ որ եր-
կայն մահ մը կընար ըսուիլ . ու ա-
սանկքսան , երսուն , քառսուն տա-
րիէն ետև՝ երբոր իրենց կենաց ծայ-
ը կը հասնէին , գեռ ահով գողով
կ'ըսէին . Աղէկ մտածենք , աղէկ մը
նայինք մեզի :

Այդ սուրբ ասլաշխարողներն ո-
րոնց վրայ կը զարմանանք , արդեօք
ուրիշ աւետարան մը ունեին պա-
հելու , ուրիշ հաւատք մը ունեին
հետեւելու , ուրիշ Աստուած մը ու-
նեին պաշտելու , ուրիշ յաւիտե-

Դաւկանութիւնն մը՝ յաւալու կամ
վախնալու . չէ չէ . հասրա անոնց
հաւատքը մեծ էր , մերը պղպիկ է .
անոնք իրենց հոգւոյն փրկութիւնը
կը մնած էին , մենք այդ մնածու-
թիւնը չենք ըներ . անոնք Աստ-
ծոյ և աստուածային բանելու մե-
ծութիւնը կը մնամային . մեղքին
սոսկալի գեշութիւնը , մահուան
առենին անսասուցութիւնը , Աս-
տուծոյ գասասասահաց սարսա-
փելի խորութիւնը , ապադային
ծանրութիւնը՝ որ է կամ յաւի-
տեան Երջանիկ կամ յաւիտեան
թշուսու . իսկ մենք առելի քան
դշափ կը վախնանք առանկ մեծ
մեծ Հշմարտութիւնները մնամա-
լեն : Մեկ խոզքով , անոնք սուրբի-
պես կ ապրենին , մենք աշխարհասի-
րաց պես կը վարուինք :

Հասրա մենք մեղի գանք , զմեզ
մնամանք՝ քանի որ առեն ունինք .
Ենչ կը վաստրիինք չմանաւուի ի՞նչ
մսիթարութիւնները ու ունինք

Ակ օր մը՝ մամուլուս համար :
Ուրեմն մամուանք մտածենք մենք
զմեզ, և աս ըլլայ անդադար մեր
հոգն ու զբազմունքը . որպէս զի
ետքը յափտեան յուսահատարար
շլանք թէ ինչո՞ւ շմամացինք . հա
պա ուրախանանք որ յափտե
նական սլոռող քաղեր ենք ասանել
փրկարար մտած մունքէն :

Գ. Ա. Խ. Խ.

Փ. Ե. - Ե. Ե. :

Ես փրկուիլ կ'ուզեմ: Ես կ'ըսեն
ամէնքը, և ամէնքը նոյն խեցի վրայ
են: Աղեկ է՝ իրաւունք է առ ըսե-
լը: Բայց աւելի աղեկ է առ մտա-
ծելը: և իրաւ որ՝ ի՞նչ ունինք
մինք ընելու առ աշխարհիս վրայ՝
թէ որ չհոգանք որ փրկութեան
հասնինք. ի՞նչ բան կայ մեզի համար
աւելի շահաւոր առ կեանքիս մէջ,
ի՞նչպէս մեր հոգւոյն փրկութիւնը:
Ուրեմն առ մտմտանք, ուրիշ բան
հոգերնիս չըլլայ՝ առ ամենահար-
կաւոր բանէն զատ:

Մենք մեզի անդադար ըսենք.
Ես փրկուիլ կ'ուզեմ, վասն զի
հոգւոյս փրկութիւնն է մէկ հատիկ
բանը՝ որուն համար Աստուած զիս
առ աշխարհիս բերեր է: Աստուած
մեզ չէ տեղաւորեր երկրիս վրայ

որ մենծ մարդ ըլլանք, հարուստ
մարդ ըլլանք, բարեբախտ ու եր-
ջանիկ ըլլանք. քաւ լիզի. հասկա
սուրբ ըլլալու համար, մեր յաւի-
տենական փրկութիւնը վասորկէ-
լու համար, թէ որ չփրկենք զմեզ.
ալ աղեկ եր մեզի՝ որ բնաւ ծնած
չըլլայինք. որովհետեւ եթէ ծնած
չըլլայինք, միայն մէկ մարդ մը պա-
կաս կըլլար աշխարհքէս. իսկ թէ
որ չփրկուինք. մէկ չարագործ:
Աստուծոյ թշնամի մը աւելի կըլլայ-
դժոխիքին մէջ :

Մէր հոգւոյն փրկութիւնն է
մէկ հասիկ բանը որ աս աշխարհքին
վրայ ալ կրնայ մեզի միսիթարանք
մը ըլլալ: Զբօսանք, աստին անդին
ժուռ գալ, մեր ուզածը կամ հա-
ճոցքը ընել, մեր սիրտը միշտ չեն
հանգչեցըներ, հասկա միշտ անոնց
հետ գառնութիւն մը կայ, խրզճ-
մուանքի զարնելմը, որ տանջանք Են
մարդուն: Մէկ պահ մը աղօթքի՝
Աստուծոյ հետ ըլլալով, մէկ դործ

մը հոգւոյ փրկութեան համար է
զած , անտարակոյս շատ աւելի
կ'արժէ , քանի թէ շատ տարիներն որ
անցուցեր ենք՝ աշխարհքիս փու-
ճռւմուշ բաներուն , և մեր շափա-
զանց կրիցը կամ յօժարութեանց :

Մեր հոգւոյն փրկութիւնն է
միայն այն բանը , որ կրնայ մեզի
քաջալերութիւն ըլլալ մեր մա-
հուան առենը : Դնենք թէ Ես
մօտիկ նստեր եմ մէկ հոգեվարքի
մը անկողնին քով , որ կեանքը
անցուցած ըլլայ փարթամութեան
մէջ , փառքի պատուոյ մէջ , փափ-
կութեան հեշտութեան մէջ . հիմա
ի՞նչ բաելու է . առ ամէն բաներէս
ի՞նչ կրնայ մահուան առենը , և
ի՞նչ կըլլայ իրեն առ ամէն բանս
թէ որ չարաչար բանեցուցեր է ,
եթէ ոչ մեծ բեռ մը և նեղութիւն
սրտի , սիրո ճաթեցրնելու բան և
պատճառ յաւխաւան դատապար-
տուելու : Անի ափսոս առ ան-
շնորհք անձին , որ իրեն մէկ հատիկ

ընելիքն էր առ աշխարհքիս վրայ՝
իր հոգւոյն փրկութիւնը, ու առ
եղաւ մէկ հաստիկ բանը՝ որուն ինքը
անհոգ եղաւ:

ՄԵՐ ՀՈԳԵՈՅՆ ՓՐԿՈՒԹԻՒՆՆ Է
ՄԻԱՅՆ ՈՐՈւՆ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵզ-
մէ ՀԱՄԱՐ ԱՂԻՄԻ ԽՆԴՐԵ ՚Ի ԴԱՍՏԱ-
ՏԱՆԻ. ԱՂԻՄԻ ՀԱՐՋՐՆԷ ԹԷ ԶԱՆՔ
ՌԵՆԵԳԱՅՐ ՈՐ ՀՈԳԻԴ ՓՐԿԵՄ: Առ
ԱՂԻՄՈՐ ԸԼԱՅ ԲՈԼՈՐ ԲՈԼՈՐԸ՝ ՈՐՈւՆ
ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԾ Ոյ ԱՊԱՏՈՎԻՄԱՆ ԱԳԻ-
ՄԻ ՏԱՆՔ: ՀԱՐՋՐՆԷ ԼԻՔ ՀՈՒՆԻ. ԹԷ
ԱՆԲԱւ ՄԵծութիւն շահեցայր. ԹԷ
ՈՐ ԳՈՒՆ ՔԵզի դիզեր ևս ԱՍՏՈՒԾ Ոյ
ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳԱՆՆԱԼԵՐԸ, ԲՇՆԵ շահ-
ԱՂԻՄԻ. Ընէ ՔԵզի մեծ անուն ու-
նենալդ և զարմանալի մարդ ԸԼԱԼԴ
ԱՇԽԱՐՀՔԻՍ ՎՐԱՅ, ԵՐԲՈՐ ԴԱՏՈ-
ԱՊԱՐԱՏԵԼՈԳ ԿԱՐԴՐ զքեզ խօթեցիր:
Ուստի ո՞րչափ ամօթ և նախատինիք,
և բՇնչ յուսահատութեն ԱՂԻՄՈՐ պա-
տէ զայն ՀՈԳԻՆ, որ ԱՍՏՈՒԾ Ոյ ա-
ռեանը ԱՂԻՄՈՐ ԵՐԱՆԱՅ՝ ուրիշ բան
մը շունենալով ներկայացրնելու,

բայց միայն մեղքերը և խածնող
խղճմուանքները : Միթէ ատո՞ր հա-
մար եկած էր ինքը աս աշխարհքս,
որ իր գատառորին առջև ասանկ
սեերես ելլէ :

Մէկ խօսքով, հոգւոյն փրկու-
թեան հոգն է մէկ հատիկ բանը որ
պիտի որոշէ մեր յաւիտենակա-
նութիւնը . թէ որ աշխատած ըլ-
լանք մեր հոգւոյն փրկութեանը
համար՝ Երկինքը անտարակոյս մեզի
համար է . բայց եթէ հոգերնիս
չէ եղած, դժոխքը կ'ըլլայ մեր բա-
ժինը յաւիտեան : Աս բաներուն
վրայ աղեկ մը մտածե՞ր ես :

Բայց սոսկ մտածելի ալ բաւա-
կան չէ . հարկաւ ալետք է աշխա-
տիլ ալ՝ որ ուղածնիս ձեռք ձգենք:
Աստուած քեզ առ անց քեզի ստեղ-
ծեց . բայց առանց քեզ չփրկեր
զքեզ, ինչպէս կ'ըսէ սուրբն Օգոս-
տինոս : Հիմա նայինք թէ ովկայ որ
աշխատի իր հոգւոյն փրկութեանը
համար, ովկայ որ աս բանիս դլուին

դնեւ ու զննեւ : Դնենք թէ աս ան-
մարդը կ'աշխատի աս բանիս , բայց
արդեօք բոլոր սրառվու ջանքով և
գործունեայ կերպով կ'աշխատի :

Այն ընդհանուր խօսքը մտածե-
լէն եաքը թէ Ես կ'ուզեմ փրկուիլ .
պէտք է ՚ի մասնաւորն իջնալ՝ ը-
սելով ինքնիրեն . Խրաւցրիւ ևս
կ'ուզեմ փրկուիլ . անանկ է նէ-
պէտք է ու հարկ է , որ Ես ես կե-
նամ աս ան մասնաւոր սովիթնե-
րէն . աս բանես , ան վասնդաւոր
անձէն հեռու կայնիմ , հարկ է
որ Ետ դարձընեմ իմ չարաչար
շահած ստակս ; Հարկ է որ հաշ-
տուիմ իմ թշնամւոյն հետ , Հարկ
է որ շակեմ իմ խղճմանիս աս ան-
բանին վրայ : Ամէն օր կըսեն մար-
դիկ թէ կ'ուզեմ փրկուիլ , ու
ամէն օր կ'աշխատին որ դատա-
պարտուին :

Ի՞նչ ողբայի կուրութէ է մարդ-
կան : Ես մէկ մեծ հրապարակ մը
կ'ելլեմ , բազմութիւն մարդկան կը

տեսնեմ, որ կ'երթան կուգան, ասդին անդին կը վազե՞ն, կը ցուցը-
նե՞ն թէ հարկաւոր բան մը ունին։
Մէյմը հարցուր ասոնց թէ Ո՞ւր
կ'երթաք, ուր կը վազեք ասանի
արտորնօք։ Մէկը կ'ըսէ թէ Կ'եր-
թամ սանիկ պատուաւոր աստիճան
մը ձեռք ձգելու . մէկալը՝ թէ Կ'եր-
թամ բարեկամիս հետ տեսնուե-
լու . մէկալը՝ թէ Կ'երթամ դատաս-
տանս առաջ տանելու . մէկալը՝ թէ
հարկաւոր և օդտակար բան մը ու-
նիմ : Հապս քու փրկութիւնդ .
փրկութեանդ բանը ուր մնաց :
Աս չէ աշխարհքիս բռնած ճամ-
բան : Յիրաւի աս է : Ասոնց ամե-
նուն մէջ՝ հոգ ու փոյթ մը կը տես-
նենք անցաւոր օդտի մը համար .
Ժամանակաւոր բանի մը համար ,
հազիւ մէկը կը գտնուի՝ որ ասանի
փոյթ ասնի իր հոգւոյն փրկու-
թեանը համար . բոլոր մնացածնե-
րը ընկղմած ժամանած են Երկրա-
ւոր բաներու մէջ , ընաւ չեն

Տումանար ան բանին վրայ որ միայն
իրենց ամէն ջանքը պիտոր ըլլար :

Չեմ ըսեր, թէ Աստուած դա-
տապարտելի կը սեալէ մեր ունեցած
բանաւոր փոյթը աս աշխարհքին
բաներուն համար . հապա Աս-
տուած կը դատապարտէ այն մեղա-
դրելի անհոգութեր՝ հոգւոյ վըր-
կուե վրայ : Մենք աշխարհքի գործ-
քերուն բոլորովին վառուած ենք .
կրակ դարձեր ենք . իսկ Երկնքի բա-
նին համար անտարբեր և պազ հո-
գւով կեցած : Ասանկ կը վարուին
մարդիկ, ասանկ կ'ասլրին ու ասանկ
կը մեռնին : Մարդս ասանկ է նէ,
քրիստոնէ այն ուր է, ատենը ա-
սանկ է նէ, յաւիտեանը ի՞նչպէս
պիտոր ըլլայ . թէ որ ասանկ կ'աշ-
խատի ամէն մարդ աշխարհքի հա-
մար, իր անձին բարձր տստիճանին
համար, տան ու զաւկըներուն
համար, հապա Աստուածոյ համար,
իրենց հոգւոյն վրկութեանը հա-
մար ի՞նչ բան ըրած ունի : Երբոր

մեր կենաց ծայրը հասնինք , մէյ .
մըն ալ աշուրնիս դարձըն ենք նայինք
մեր ընթացքին որը բեր ենք մեր կե-
նացը մէջ , ի՞նչպէս պիտոր սոսկանք .
ի՞նչ սրտագող պիտի քաշենք . չը-
լայ թէ յուսահատութեան մէջ ալ
իյնանք : Այս վախ պիտի ըսենք .
պէտք է եղեր առաջուց մտածել
ու պատրաստութիւն տեսնել :

Քեզի կ'ըսեմ սիրելի , քու փրր-
կութեանդ վրայ մտածէ : Քրիս-
տոսի տեառն մերոյ ըսածը յիշէ ու
զգուշացիր . Զի՞նչ օգուտ է մար-
դոյ , Եթէ զաշխարհ ամենայն շա-
հեցի , և զանձն իւր (զհոգի իւր)
տուժեցի :

Պատճենիւն :

Պալատական մը որ երկար ա-
տեն հաւատարմութեամբ ծա-
ռայեր եր իր թագաւորին , մահա-
ցու հիւանդութեամբ մը անկողին
ընկաւ : Թագաւորը իր սիրելի ծա-

ուային այցելութեան եկած ըստ
լով, երբոր տեսաւ թէ վերջի շուն
չը կուտայ, սիրոր ելաւ ու դար
ձաւ հարցուց իրեն թէ Արդեօք
բանի մը մէջ քեզի կրնամ օգնել.
ուզածդ խնդրէ ըստ որ քեզի
սկարդեեմ: Այս առեն հիւանդը
ըստ: Տէր իմ, աս խեղճ վեճակիս
առենիր մէկ բան մը միայն կ'ուզեմ
քեզմէ, որ քառորդ մը ժամանակ
խնդի շնորհես: Կ'ըսէ թաղաւորը.
Այս, ի՞նչ ընեմ որ աս բանիր իմ
ձեռքէս չդար: ուրիշ բան մը
խնդրէ, որ կարենամ ընել քեզի:
Հիւանդը վրայ բերաւ: Վայ, ա
տանկ է մի, յիսուն տարի է, որ
քեզի կը ծառայեմ, ու դուն մէկ
քառորդ առեն շես կրնար խնդի
սկարդեել. վախ ափսոս: թէ որ
ես ասանկ հաւասարիմ ծառայու
թէ ընեի առշաբի առեն: Վստուծոյ
իմ աիրոջս, անիկայ հիմա կը սկար
դեկր խնդի՝ չէ թէ քառորդ մը
կեանիք, հառա յաւիտենականու

Թիւն Երանութեան . աս ըստ ու
քիչ մը եռքը վախճանեցաւ : Երա-
նի իրեն թէ որ դիտցաւ աս գասիս
պառազը .քաղել , որով ուրիշներուն
սորվեցուց մարդկային բաներուն
փուձ ըլլալը , և թէ հարկաւոր
է աշխատախիլ հոգւոյ վրկութեան
համար :

Ասանկ պիտօր ըլլայ մէկ օր մը
մեր մահն ալ : Մէնք մեր կեանքը
կը ծախենք կը մաշենք կը զոհենք
աշխարհիս ծառայութեանը .բայց
երբոր հասնինք մեր ետքի շունչը .
ի՞նչ օգնութիւն կրնայ աշխարհիս
ընել մեզի . ի՞նչ կը մնայ մեր ձեռ-
քը այնչափ աշխարհի համար ըրած
աշխատանքներէն՝ թէ որ անհոգ
եղեր ենք Աստուծոյ ծառայելու ,
և մեր հոգին հոգալու որ վըր-
կուինք :

Ուրեմն աղեկ մամանք , ու ը-
սենք պարզ որոտվե բոլոր որտանց .
Ես վրկուիլ կուզեմ , ևս կու-

շեմ զիս փրկել . և ասկից եռքը բռ-
լոր ջանքս աս պիտի ըլլայ . ինչուան
հիմա շատ անփոյթ գտնուեր եմ :
Ասանկ որ ընեմ , Երանի ինծի .
Ասուուծոյ շնորհքով պիտի կա-
րենամ իմ վախճանիս հասնիլ .
բովհետեւ Ասուուծ ալ ատեն կու-
տայ ինծի և շնորհք ասանկ փրկա-
րար մուած ութեան մը համար :

ԴԱՍԻԽ Գ .

ՄԵՂ :

Արցունիքի աղբիւրներ սլէտք
էին մեզի՝ լալու այնչափ վնասները՝
որ մեղքը կ'ընէ մեզի , ու պատճառ
կ'ըլլայ այնչափ թշուառութեանց
հոգւոյն : Աւ զքը հոգիէն կը վեր-
ջընէ անոր ամէն աղեկութիւնը ,
փառքն ու սլարծանքը . վասն զի-
մեր հոգին շնորհքովսիրական որդի-
եր երկնաւոր հօրը , սիրուն հարսն
միածին որդւոյն , և կենդանի տա-
ճար հոգւոյն սրբոյ . իսկ մեղքով
կորսընցուց աս բոլոր անդին դան-
ձերը , ու գերի եղաւ սատանայի ,
և իր կրից և ախտից :

ՄԵՂՔԸ կը թալլէ բոլոր հոգւոյն
գեղեցկութիւնը : Ծնորհքը զհոգին
կ'ընէր հաճոյական բան մը Աս-
տուծոյացքին , որ այնպէս կընայէր
անոր վրայ՝ որսլէս թէ իր տաճարն

Երև որբութեան սրբոց առ զմբ . իսկ
մեղքը դարշելի և ահոելի բան մը
ըրտաւ զայն : Մեղքը զհոգին կը զրկե .
իր ամէն արդիւնքէն . դիր թէ ա-
ման մը ըլլայ մեծագին և անդին բա-
ներով լցուած . թէ որ կոտրի՝ մէկ
քար մը զարնուելով ծովու մէջ
ու կոտր կառր ըլլայ , բոլոր բանի
կը կորտուի , ջրին տակ կը թաղուի .
Ասանկ ցաւալի վիճակի մէջ կ'իշեայ
հոգին մեղքով . վասն զի մեղքը կը
փճացընէ անոր ամէն արդիւնքը՝ որ
ունեցեր Եր Ասուծոյ առջե , ու
ետքի ողորմելութեան կը հասցընէ .
Մեղքը կը դաշնայ կը տանիի հո-
գւոյն հանդիսան ու խազաղութիւն-
քանի որ հոգին Ասուծոյ հետ
միացած Եր , ինչ անպատճելի խա-
զաղութեան մէջ Եր . իսկ մեղքի
մէջ մոտածին պէս՝ վրան եկաւ մէկ
պղուրութիւն մը , տակնուվայ ըլ-
լաւ մը , խղճմանքի խայթ մը .
վախ մը սոսկում մը , անանկ որ՝
ինքն իրեն դժոխքը եղաւ : Մեղ-

քը զմարդը կը մատնեւ ամէն կերպ
ողորմելու կենաց, ամէն կերպ ա-
հոգողի մահուան, և ամէն տեսակ
տանջանիքի յաւիտենական թշուա-
ծութեան: Խնչ կ'ըսէս, մարդ կայ
որ աս բաներս մտածե:

Արեան արցունիք պէտք էր լա-
լու այն սոսկալի վասները՝ որ մեզ
քը կ'ընեւ մարդուս հոգւոյն, ու այն
ահուելի թշնամութիւնը Աստուծոյ
դէմ, որ մեղքէն կ'ըլլայ: Մեղքն
է յայտնի նշան առատամբութեան
Աստուծոյ դէմ: Աստուծ բան
մը կը հրամայէ. մեղաւորը անգիւն
ձայն կը հանէ, թէ Ես չեմ հնա-
զանդիր. բերնով ցրսէ նէ, իր սիր-
որ, վարքը, գործքը կը վկայեն:
Մեղքը նշան մըն է ծայրագոյն յան-
դգնութեան և ինքնադլխութեան,
երբոր գետնի որդ մը, մէկ չնչին
ստեղծուած մը կը համարձակի
գլուխ քաշել հակառակ ամենա-
կարողին Աստուծոյ, գերագոյն
եակին դէմ, որ ամէն վայրկեան

կրնայ զանիկայ ոչնչացընել։ Մէ ձ
նշան մըն ալ է ապերախտութեան,
ուր որ այնչափ և անչափ բարիք է
տեսեր Աստուծու, ու ինքը չարա-
շար կը գործած է բոլորը, ու կոնակ
կը դարձընէ իր բարերարին։ ‘Նշան
ալ է անզգամութեան և անհաւա-
տարմութեան, որովհետեւ հաղար
անգամ խօսք տուեր էր Աստուծոյ
հաւատարիմ ըլլալ բոլոր որառվ,
ան ալ գուցէ աւելի հանդիսով
շնորհօք սուրբ խորհրդոց, ու ետքը
ելլէ մատնիչ ըլլայ Աստուծոյ,
ոտքի տակ առնելով ամէն խօսա-
մունքը։ ‘Նշան ալ է վերջապէս,
զոր տռանց տարսափելու չեմ կըր-
նար ըսել, նշան կըսեմ հայրա-
սպան ու աստուծասպան ըլլա-
լու. վասն զի սրբոյն Պօղոսի ըսածին
ովէս, ամէն մէկ մեղաւոր նորէն
խաչ կը հանե, զՅիսուս Քրիս-
տոս, և կը կանգնե, իր անօրէն
սրբին մէջ անօրէն զոհարան մը,
ուր իր ստեղծողը կը զոհէ երրոր

սատանային իւր զոհէ իր հոգին։
Ո՞հ տեր Աստուած, տեզն Եկաւ՝
որ խօսքով ըսելու տեղը՝ խորոնկ
սրտէ հառաջանաց ու հեկե կանաց
ձայն մը հանեմ։ Ուստի ըսենք հա-
ռաջելով և դողալով։ Մեղքը ա-
նանկ մեծ չար մըն է, որ Եթէ մէկ-
տեղ գային աշխարհիս ամէն չարի-
քը, պատերազմ, ժանտամահ, ոռվ,
նեղութիւնք, դառնութիւնք, հի-
ւանդութիւնք, մահն ալ, բան մը
չէին սեպուեր մեղքի մը առջե։
Մեղքը անանկ մեծ չար մը նէ որ
ան չգործելու համար՝ պէտք ըւ-
լար մեր ամէն բանը, ազատու-
թիւննիս, առողջութիւննիս, կեան-
քերնիս ալ կորսընցընել, այսու-
ամենայնիւ առանց բնաւ տարա-
կուսելու պէտք էր որ արիւննիս ալ
թափէինք ինչուան վերջի կաթիլը,
կուրծքերնիս դէմ դնելու թողուլ
որ սուր խօթեն, քան թէ մեղքի մը
տեղիք առալ։ Մեղքը անանկ մեծ
չար մը նէ, որ թէ և կարելի ըլլար

անով դուրս հանել գծոխքէն բռլոր
գատապարտեալները . ու Երկինքը
տանիլ զիրենք , այլ աւելի աղեկ եր
թողուլ զանոնք կրակի մէջ , տան
ջանքի մէջ , յուսահատութեան
մէջ , քան թէ ազատել զանոնք ,
թէ որ աս բանիս համար մէկ մեղք
մը ընել հարկ ըլլօր , չեմըսեր մէկ
մահուչափ մեղք , հասրա մէկ որդուկ
ներելի մեղք մըն ալ : Ա Երջապէս՝
մեղքը այնչափ մենծ չար է , սոս
կալի չար և գարշելի , որ Երկինքին
կայծակները բաւական չեն զանի
փճացրնելու , ոչ Երկրիս խորխո-
րատները զանի կուլ տալու , և ոչ
գծոխոց կրակները զայն քաւելու-
հայց ովկայ որ ասոնք մոտածէ :

Ուստի բոլոր սրտանց ըսենք .
Նզոված ըլլայ մեղքը , որ իր հետը
կը բերէ ամէն նզովք ու անէծք .
անիծած ըլլայ յԱստուծոյ հօրէ .
որուն պատկերը սև ու մուր կը
դարձընէ . անիծած ըլլայ յորդւոյ՝
որուն արիւնը կը պղծէ . անիծած

ըլլայ ՚ի հոգւոյն սրբոյ . որուն
շնորհքը ոտքի տակ կ'առնե . նզո-
ված ըլլայ Երկնքէն , ուր նետի մը
պէս կը նետէ իր ամէն գարշու-
թիւնը . նզոված ըլլայ Երկրէս , զոր
իր անօրէնութեամբը կը լեցընէ .
նզոված ըլլայ դժոխքէն , ուր վե-
րէն վար կը ձգէ բոլոր դատապար-
տեալները . մահը զինքը նզովէ ,
յաւիտենականութիւնը զինքն ա-
նիծէ :

Կը տեսնեմ որ սուրբերը դոզ
կը քաշեն՝ սոսկ յիշելով մեղքը .
Ճզնաւորները անապատ կը քա-
շուին , որ հեռանան մեղաց վտանգ
ներէն , ապաշխարողները կը հա-
ռաշեն կը ծեծկուին ցաւելով որ
երբեմն մեղանցեր են :

Իսկ մենք ի՞նչ ըրած ունինք , և
ի՞նչ պիտոր ընենք որ մեղքերնիս
լանք՝ քաւենք ու ջնջենք : Աս-
տուած իմ , աւելի մեռնիլ՝ ու հա-
զար անգամ մեռնիլ . քան թե բնաւ
մեղք մը ընել կուզեմ . աս բանս կը

խնդրեմ քեզմէ ,ու կը յուսամ որ
քու շնորհօքդ արժանի ըլլամ : Հի-
մա է մտմտալու առենը , գուցէ
վազը մեռած գացած կ'ըլլանք :

Պատմութիւն :

Կոստանդնուպօլսոյ կայսրը շա-
րաչար սրգողելով սուրբ Յոհան
Ասկերերանին դէմ , մէկ օր մը
դւուխը տաքցած՝ ըստ իր մեծա-
մեծներուն . Կ'ուզէի առ Եսլիսկո-
սկոսէն վրէժ խնդրել : Չորս հինգ
օրէն Եսքը Երբոր խորհուրդ ընելու
եկան , իրենց կարծիքը տուին .
Առջինը ըստ . Աքսորէ զինքը ա-
նանկ հեռու տեղ մը որ ալ Երեսը
չտեսնեռ . Երկրորդը՝ թէ իր ամեն
բանը առ . Երրորդը թէ Բահամի մէջ
Դիր շղթայով . Երրորդը՝ Կեան-
քը վերցուր որ ինքզինքդ խալքուն-
իսկ հինգերորդը ամենէն խելացի
գտնուելով ըստ . Ամէնքդ կը սիսա-
միք , վրէժ առնելու ու զինքը ուստ-

ԺԵՂՈՒ ՀԱՄԲԱՆ առ չէ . վասն զի թէ
որ աքսորեք զի՞նքը . բովանդակ եր
կիրս իր հայրենիքն է . ունեցածը
շունեցածը ձեռքեն առնելու ըլ-
լաք , իրմէն բան չէք վերջներ .
Հասպատղքասներեն . բանետի մէջ որ
դնէք , անվեկոյ իր շղթաները կը
պաղնե , ու զի՞նքը բարեբախտ կը սե-
պէ . թէ որ մեռզընեքը , իրեն երկին-
քը կը բանաք : Կ'ուզեք վրեժառնել
իրմէն . ստիպեցէք որ մեղք մը գոր-
ծէ . ինքը անանկ մարդ մը նէ
որ բանե մը չվախնար աշխարհիս
վայ բաց ի մեղք գործելուն . առ
մարդը մեղքեն միայն կը վախնայ :
Ոչ աքսոր երթալեն կը վախե , ոչ
սասակը կորունցընելեն , ոչ շղթայեն .
ոչ կրակեն , ոչ տանջանքեն . միայն
մեղքեն կը վախնայ : Ի՞նչ մեծ և ի՞նչ
գեղեցիկ խելք է առիկայ . որչափ
բարեբախտ կը լլայինք մենք ալ թէ
որ կարենար մեղք համար ալ ը-
սուիլ . ինչպես Ոսկերեբանի հա-
մար . Աս մարդ ու ուրիշ բանե չվախ

նար, մեղքէ ՚ի զստ . մեղքէն մենծ
վախ կը քաշէ :

Ուրեմն մենք ալ աս մոմառնք
ու բնաւ շմոռնանք . մեղքով չենք
կրնար Երկինք մանել, որ մեր մեկ
հատիկ հայրենիքն է . մեղքով չենք
կրնար զԱստաւած տեսնել՝ մեր
մեկ հատիկ ստեղծողը և տէրը .
Թէ որ մեղքերնիս չցնցենք՝ անով
յաւխուանգժոխի կրակին, կը մատ
նուինք, տանջանքներու, խրզ
մոանքի խածուածքին, կատաղու
թեան, յուսահատութեան : Մըս
մոանք կը սեմ . պէտք ալ բլայ նէ .
ամէն բան մոռնանք, մենք զմեզ
մոածենք : Միլաքայ մէջ դրած է .
Փախիլ ՚ի մեղաց իբրու յերեսաց
օձի և քարքի :

Բոլոր սրտանց ըսենք . Հայր
մեղայ յերկինս և առաջի քո .
Մեղք իմ առաջի իմ են յամենայն
ժամ . Դարձո զերեսո քո ՚ի մեղաց
իմոց, և այլն : Դարձեալ, Տէր .

իմ մեղքերս մի յիշեր՝ պատժելու
համար, հապա քաւե ջնջէ շնոր-
հօդ իմ ամենայն անօրենութիւն-
ներս :

ԳԼՈՒԽ Դ. Պատմութեան առաջին գլուխ

Տարբարակ առաջին գլուխ առաջին գլուխ

Մահ :

Աղեկ մասմաս աս մեծամեծ Տը :
մարտութիւնները :

Նախ՝ թէ ամենքս պիտի մեռ
նի՞ք . օր մը սկսուի գայ որ մեր եաքի
օրը ըլլայ :

Երկրորդ՝ թէ մահուան ատեն
նիս մեզի անծանօթ է , ու մեր կար-
ծածէն շուտ վրանիս կը հասնի :

Երրորդ՝ թէ մեր մահուան վայր-
կենէն կախուած է մեր յաւիտե-
նական վիճակի :

Չորրորդ՝ թէ մեռնելէն եաքը
միջոց մը մեզի չկայ մեր շարեացը
դարման մը գտնելու :

Ուրեմն հիմակուրնէ աղեկ մաս-
ծենք աս բաններս :

Բան մը չկայ որ տմենուս հա-
սարակ ըլլայ . ինչպէս մահը : Ամեն
օր կը լսենիք . Այս անունով մարդը

մեռեր է, մէկալը այս վայրկենիս
հիմա հոգին փչեց, միւսը յանկարծ
իջուածքով գնաց, այն մարդը եր
կայն հիւանդութենէն ետքը անդիի
աշխարհքը անցաւ, սաքիչ մի առաջ
զարնուեցաւ մեռաւ, մէկը ջրի մէջ
խղդուեցաւ, մէկալը ընկաւ՝ նոյն
տեղը մնաց, մէկ ուրիշ մալ փլա-
տակի տակ հոգին տուաւ: Ամէն
օր մեր աշքին առջեր առանձի օրի-
նակներ կան, մէկ օր մը մէնք այ
անոնց մէկը սիրտի ըլլանք: Այս
բանս արդեօք կը մտմանք, աղեկ
մը կը մտածենք:

Մէկը դուրս չմնար՝ ամէն մարդ
մահուան իշխանութեան տակն է.
որ ամէն միհակի անձանց վրայ կը
տիրէ: Կարինք աղաստ չէ մահուան
գործանքէն, Երախան Երբեմն ա-
պրիլ չսկրսած՝ աշխարհքէս կ'ելլէ.
մահը հարուստին դուռը կեցեր
կը սպասէ, անործէ ոքը մասնուած
էն իշխանութիւններ, գրաբթա-
մութիւններ, թագեր, արքունի

գաւազաններ . անանկ կը թափանցէ կը մոռնէ մեծամեծներուն պալասը . ինչպէս աղքատին խեղճուկ տնակը . իր հաշին մէջ կը պառկէ ցընէ մեծն ալ պզտիկն ալ : Ամէն օր իրեն բիւրաւոր զոհեր կ'ուզէ . առջինը կրնայ ըլլալ մեզնէ ով որ ըլլայ նէ : Առ բանը մաքերնես Երբ անցեր է :

Ի՞նչպէս կրնան մարդիկ առանկ ողբալի կուրութեան մէջ կենալ մահուան գիմազը , որ անդադար կը սպառնայ : Գիտենք որ ամէն վայր կեան կրնանք մեռնիլ . այսու ամենայնիւ անանկ կ'ասպրինք . որպէս թէ բնաւ մեռնելու ցըլլայինք . ամէն մարդ իրը թէ հեռու աեղէ մը կրնայի մահուան վրայ , կը կարծէ թէ իրեն բնաւ հասնելիք չունի : Կը լսենք թէ մէկը յանկարծակի մեռեր է . իսկ մենք մառընիս կը դընենք թէ մէր կեանքը երկայն պիտի քընէ : Ուրիշի մեռնելուն միշտ պառհաներ կը գտնենք որ զմեզ

ապահով սեպենք : Այն մարդը
մեռաւ կըսենք , վասն զի այնչափ
առողջ մը չեր , շատ ատեն հիւանդ
կը պառկէր , զի՞քը աղեկ չեր նայեր .
անզգուշութիւններ կ'ընէր , իրեն
խրատ տուող կ'ըլլար . վախ կար
թէ գլխուն սրատահար մը կուզայ ,
բայց ինքը հոգ չեր ընէր՝ պէտք
եղած փոյթը չեր ցուցընէր : Ա
հա ասանկ պատճառներ կը փրն
առենք որ մեզնէ հեռու դնենք
մօտաւոր մահը . ուր պէտք էր որ
ասանկ ըսեինք . Անիկայ այսօր մե
ռաւ , և ով ըսեր է ինծի թէ ես
վաղը շմեռնիմ պիտի : Այս մարդը
յանկարծակիի եկեր է . գուցէ
վաղը ցաւալի զանգակի ձայն կը
սրուի իմ մեռնելուս համար ալ :
Մէկը կը կարծէ թէ իր ետքի ատենը
գեռ շատ հեռու է , ուր որ սոս
կալի կաթուածը վրան կեցեր է
որ մէկեն կեանքը վերցընէ . այսօր
զրօսանք ընել կը մօտիայ , իսկ վաղը
Աստուծոյ ատեանը պիտի կան

շուի : Ովկը մասածէ առանկ բանը :
Աւելի սոսկալին առ բանիս մէջ
այն է որ մահուընէ եռքը եկող
բաները դեղ դարձնեն չունին . և
յաւիտենական էն : Մահը մէկ
վայրկենի մէջ իր բանը կը լմնցընէ .
բայց առ վայրկեանը ամեն բանը
կ'որոշէ կը կտրէ յաւիտեան ա
նանկ մնալու : Ինչպէս գտնուինք
՚ի վայրկենի մահուան , անանկ
սկիտոր ըլլանք յաւիտեան բովան-
դակ : Ծէ որ շնորհաց օֆֆակին մէջ
մեռնելու ըլլանք՝ յաւիտեան եր-
ջանիկ ենք . Ծէ որ մահուշափ մէ-
զօք մեռնինք . յաւիտեան թշուառ ,
դատապարտեալ և անիծեալ : Եւ
ինչպէս որ սուրբ գիրքն ալ կ'ըսէ ,
ծառը մէկ օր մը սկիտոր կտրուի
կյայ . Ծէ որ աջակողմը ինկաւ ,
կը սկահուի երկնաւոր Երուսաղե-
մայ շենքին . Ծէ որ ձախակողմը՝
կրակ ձգելու համար որոշուած է .
Ուր անկցի վայտն , անդ կացցէ :
Ուստի նորէն կ'ըսէմ Ծէ մա-

հուան վայրկենէն եակ՝ յաւիտեան
գարման մը չկայ: Ոչ ցաւ, ոչ հա-
ռաշել՝ ախուվախ ընել, ոչ ար-
ցունք, ոչ առաջադրութիւնք, ոչ
խոսամունք կրնան բանի մը գալ
վերջի որոշումը մոխելու: կա-
պուած հաստատուած բանէ յաւի-
տեան, վճիռն եղած է, բովանդակ
և յաւիտեան պետք է որ ՚ի գործ
դրուի: Պէտք էր որ առաջոց
մամայինք: չէ ՚նէ՝ բանը բռւսնե-
լէն ետև առեն չկայ մտածելու:
Բոլոր կեանքերնիս պետք էր մա-
չուան զմեզ պատրաստել: թէ որ
առ բանս չէնք ըրած՝ բովանդակ
յաւիտեանը ըալու հետ սլիտի ըլ-
լանք՝ մեր գլխունեկած թշուառու-
թեանը համար, ու ախուվախ ը-
նելու յաւիտեան յուսահատու-
թեամբ: Փրկիչն աշխարհի մեզ
կ'արթընցընէ այն խօսքովը: Յո-
րում ժամաւ ոչ կարծիցէք, գայ
որդի մարդոյ:

Ահ տէր, ես առ օրէս կը սկը-

սիմաս բաներս մտածել . ու բո
լոր բովանդակ կենացս մէջ պիտի
մտածեմ , ու ջանամ միշտ պա-
տրաստ կենալ . աս օրուընէս մտա-
ծեմ թէ ամէն որ կրնամ մեռնիլ :

Պատմութեան :

Կտրին Երխուսաքարդ մը կար
սուրբ Գրիգոր պապին օրերը , ո-
րուն վրայ քահանայսպեաը մաս-
նաւոր ուր ունեցեր ու ամէն հոգ
կընէր անոր հոգւոյն փրկութեանը
համար . բայց պատահին սիրահա-
րեր Եր մէկու մը՝ անանկ որ պապին
ոչ խրասները և ոչ աղօթքը կրցան
աս բանը անոր սրտէն հանել : Աս-
սուած ալիր անքննին դատաստա-
նովը զարկաւ անոր սիրականը յան-
կարծական մահուամբ : Իսկ կտրին
սոսկաց մնաց անպատմելի ցաւով .
բայց որ սոսկալին է , ասանկ մահը
փոխանակ անոր սրտէն հանելու
իր անկարգ կիրքը , աւելի սասա-

կացուց , ու առելի բորբոքեց
ցանկութեան կրտեկը : Ան առեն
սուրբն Գրիգոր շատ ցաւելով անոր
կուրութեանը վրայ , ետքի փորձ
մը ըրաւ անոր հոգին խալքսելու :
Ուստի մէկ օր մը աղօթք ընելէն
ետքը որ Աստուած յաջողէ իր
խորհուրդը , կործին ձեռքէն բըռ-
նեց , չետու եկուր , բաւ , որ ցու-
ցընեմ քեզի քու սիրածդ . առաւ
տարաւ զինքը ան աեզր՝ ուր որ
թաղուած էր մեռելին դիակը :
Երիասասարդը աս որ տեսաւ , վա-
խով եա եա կը քաշուելը : Սուր-
բը իրեն ըստ . Կայնէ որդեակ
մի փախչիր , նայէ թէ ի՞նչ աե-
սարան է որ առջեղ կը բերէ մա-
հը . նայէ թէ ի՞նչ եղեր է ան
անցաւոր զեղեցկութիւնը , որուն
վրայ կը մեռնեիր . տես ան քե-
զը թածած դլուխը , ան սեցած ու-
կորները , ան ահռելի թաղուած
մարմինը՝ հողերու , փառւթեանց
և որդերու մէջ . աս չէ որուն .

վրայ դուն սիրով խենթեցեր էիր .
որուն համար այնչափ սիրագ կը
հառաջեր , որուն համար հօգիդ
զոհեր էիր . ատ չելք քու կեանքդ ,
քու երջանիկ կարծած յաւիտե-
նականութիդ և քու չասառածգ :

Բահանայալեաին այս զօրաւոր
խօսքերը ու այն սարսափելի ան-
սարանը՝ այնպէս խոցեցին Երիտա-
սարդին սիրտը , որ վերջապէս հաս-
կըցաւ աշխարհիս ունայնութիւնը ,
և անցաւոր գեղեցկութեան ան-
պիտանութիւնը , ուստի անկէ ետքը
Ֆէկդի դրաւ բոլոր Երկրիս փուճ-
րաները , և ուրիշ բան չեր մոմը-
տար՝ բայց միայն զինքը պատրաս-
տէլ ճշմարիտ քրիստոնէութեամբ
և սուրբ մահուամբ վախճանելու :
Աղեկ մոմաս , քու վերջդ ալ կու
զայ կը հասնի . ան առեն ի՞նչ պիտի
սէպէս ան ամէն բաներն՝ որոնք
քեզ աս աշխարհիս հետ կապեր
ին :

Մէկ նորահաս ու բարակամիտ
և խելացի խաթուն, մը տեսաւ որ
կեանքը լմբննալու վրայ է, որն որ
քնաւ մոքեն անցած չէր. առջի
բերան իր հիւանդութիւնը ջանաց
պարտրկել, վտանգ մը ունենալը
շուզեցիմացնել. բայց երբորցաւը
ծանրացու, հարկ եղաւ որ ակա-
մայ իր գէշ վիճակի մէջըլլալը իմա-
նայ ու իր խղճմտանքը հոգայ: Այս
պատճառով տակնուվրայ եղաւ և
սիրոը կոտրեցաւ. բայց Աստուծոյ
շնորհքով ինքնիրեն եկաւ, իր
հաւատքը զօրացուց, զինքը Աս-
տուծոյ կամացը նուիրեց, ու ինք-
իրմէ ուզեց որ վերջի սուրբ խոր-
հուրդները տան իրեն: Ասանկ
պատրաստըլլալէն եաքը՝ ուզեց որ
իր ճանչւոր խաթունները քովը
դան. և վերջին Ծոշակը առնելու
ատեն՝ ըստ անոնց կէս մարած
ձայնով, բայց անանկ սրտով որ իր
զվարմը աղեկ կը ցուցըներ. Զձեզ

կանչել տուի որ իմ զբաս տեսնելք
աշխարհիս ունայնութիւնը, տես-
նելով թէ ի՞նչ վիճակի մէջ եմ, և
բոլորովին ձեր սիրան ալ շարժի,
ինձմէ իսելք սորվեցէք թէ ի՞նչ
փուռքան է Եղեր աս աշխարհս.
Երանի թէ կարենայիք ձեր աչքովը
տեսնել, ի՞նչ որ Ես հիմա կը տես-
նեմ, ան ասեն կը հասկընայիք թէ
ի՞նչպէս խաբերայ Են Եղեր աս
կեանիքիս բոլոր ունոյնութիւնքը և
ստութիւնքը. և ո՞րչափ աղեկ կ'ի-
մանայիք թէ բնաւ ուրիշ հաս-
տառուն բան չկայ՝ բայց միայն
Աստուծոյ ծառայութիւնը կամ
աստուածպաշտութիւնը. իմ ա-
տենս հասեր է, ձերն ալ կուգայ
կը հանի. մի սպասէք որ ան
ասեն զձեզ մահուան պատրաս-
տէք. ահա Ես ձեզի հետ կը խօսիմ,
զձեզ կը տեսնեմ աս վերջի ան-
դամ՝ իմ կեանիքս լինցուցած։ Օդ-
նեցէք ինձի կ'աղաւեմ, ձեր աղօթ-
քովը։ Թէ որ ողորմութիւն դըտ.

նեմ, ինչպես որ յոյս ունիմ, ես
ալզձեզ կը յիշեմ Աստուծոյ առջև։
Աս ըսաց, սրբութիւն առաւ, քիչ
մը ետե հոգին աւանդեց։ Աս վեր-
ջի խօսքերը ամենուն սիրաց մտան,
անանկ որ անոնցալ յաւիտենական
փրկութեան պառող տուին։ Ար-
դեօք դու ալ որ ասոնք լսեցիր,
խրատ մը առիթ քու հոգւոյդ փըր-
կութեանը օդակար։ Մտածէ ու
մոմուա քանի որ առեն ունիու։

ան Արքան, ուստի որ սկզբան Խաչ
մատուցած ԳԵՂԻՆԵ է այս բանը յա-
նձն . առաջ առ առ առ առ առ առ առ
շնչ և Յ- ի տէնա ի ան ան նիւն : Առաջ ով
ճառան որդին և առ առ առ առ առ առ առ

Մարգա մէկ օր մը պիտի մանե
իլ յաւիտենական տունը, հոգւոյն
որբոյ ըստածին սլես Սիրաքայ բեր
նով . Գնասցէ մարգ ՚ի տուն յա-
ւիտենականութեան իւրոյ : Ու
բեմն քեզի կըսեմ ով մարգ մահ
կանացու ; սառոյդ է աս բանս՝ թէ
դուն որ աս աշխարհիս մէջն էս ,
միշտ հոս չինաս պիտոր . աս մէկ քա-
նի օրուան կարճ կեանիքէդ ետքը
ուրիշ կեանիք մը կուգայ անվախ-
հան : Ո վ մարգ մեղաւոր և անզերդ ,
սոսոյդ է աս բանս ալ որ քու չար
գործքերդ , յանցանիքներդ , ան-
կարգութիւններդ՝ առանց պատ-
ժոց չեն մնար . գժոխքին վրէ ժիրն-
իր անդունդը մէկ օր մը պիտի բա-
ցուի , որ կուլ տան լափեն զանոնք
յաւիտեան : Զեզի ալ կըսեմ ով

արդաբը, ու ըեմն աս ալ ստոյգ է որ
առանց հատուցման չեն մնար ձեր
առաքինութիւնները, ձեր քաշած
վիշտերը . Հասկա պատրաստած
կեցեր է անմտհական պսակը՝ ի
մեջ բնարելոց Երկրին կենդ անեաց :

Աղեկ մասածէ, Ժամանակը ու
ըիշ բանի համար արուած չէ, միայն
յաւիտենականութիւնը մնամարու
համար :

Ո՞վ յաւիտենականութիւն . քա-
նի մը տարի կ'անցընենք աշխարհիո
վրայ զբաղանիքներով զբօսանիքնե-
րով ուրախ զուարիժ, ու մեր հա-
ճոյիցը ետևէն ըլլալով, մեյմ ալ
աւեսնեա որ յաւիտենականութիւն
մը վրայ հասեր է դառնաւթեան,
չար խղճմանքի, և յուսահատու-
թեան: Միշտ և ոչ երբէք : Աս եր-
կու բառը պիտոր ըլլան յաւիտե-
նական մասածութիւն մեղաւորաց .
միշտ տահիքանքի մեջ, միշտ կրակի
մեջ, միշտ զարհուրանքի մեջ, և ոչ
երբէք վերջանայ պիտոր, ոչ եր-

բէք հանգիստ մը կամ միմիթարանք
մը պիտոր ըլլայ, և ոչ երբէք յուսոց
նշմարանք մը :

Ո՞հ յաւիտենականութիւն . քա-
նի մը տարիեն ետև որ կ'անցընէ մէ-
կը համբերելով խաչի, նեղութեան,
և տարժանելի կը թութեան առա-
քինութեանց, մէյ մ'ալ տեսնէ, որ
եկեր հասեր է մէկ ամբողջ յաւի-
տենականութիւն մը ուրախութե,
միմիթարութեան, երջանկութեան
և անոպատմելի փայտկութեան :
Միշտ, և ոչ երբէք : Աս յաւիտե-
նական մասն ութիւնը պիտի ըլլայ
փրկութեան հասնողին . միշտ յԱս-
տուած, միշտ Աստուածոյ հետ,
միշտ երջանիկ Երկնից փառքովը
ոչ երբէք վախ մը սիմափունքնայ,
ոչ տրամաւթիւն և ոչ վատիսուու-
թիւն, միշտ և ոչ երբէք . միշտ և
անվախճան : Վայ անոր որ շմամը-
տար, աւելի վայ որ կը մասնէ ու-
քրիստոնեաբար, և սրբութեամբ
շապրիլ :

Աս ի՞նչ անխելքութիւն, ու
իւլագարութիւն է ըրածնիս :
Ի՞նչ կ'ընենք մենք աս մեր կեան-
քին օրերը : Ուրիշ բան չենք մտմր-
տար՝ բաց ՚ի ժամանակառորդն :
Շողոր մեր մտմտուքը զբաղմունքը
աս ժամանակիս վրայ է : Ուրիշ
աշխատանք չենք ըներ, ուրիշ բանի
կեանքերնիս չենք անցըներ, բայց
միայն ժամանակի համար . և ահա
յաւիտենականութիւնը մեզ կը
սպասէ . ամէն վայրկեան՝ յաւի-
տենականութիւնը կը մօտենայ,
յաւիտենականութիւնը կեցեր է
որ մեզ իր ծոցը առնէ, և գուցէ
վաղը հոն կը մտնենք : Այսօր պար
և կաքաւ, առեն անցընել, զբօ-
սանք զբաղանք . վաղը ողբ ու լաց,
ախուվախ և հեծեծանք : Աս ի՞նչ
կուրութիւն է :

Դիտենք որ յաւիտենականու-
թիւն մը կայ, բայց արդեօք կը մտա-
ծէնք ուշագրութեամբ և սրանց:
Ո՞վ է որ մտածէ, ո՞վ կը մտմայ :

Գուցե պղամիկ տղան, որ իր ծնողաց
և իրեն կեանք տուողներուն մեզա
դրելի անհոգութեամբը հազիւ դի-
տէ թէ ուրիշ կեանք կայ. գուցե ան-
կարի ճը, որ դերի եղեր է փուռու-
մուն կենցազավարութեց և փնտ-
խոսութեան, աշխարհքիս աչք խա-
րող բաներուն և վասթար ցան-
կութեանց. գուցե ան ծերը, որ
միայն կեանքը երկրնցընելու ինել-
քը տուած է, որն որ պարտըկան
էր արցունիքի և առաջխարութեան
հետ ըլլալ իր ըրած սիսալանիքնե-
րուն վրայ :

Թէ որ մարդիկ յաւիտենակա-
նութիւնը մոմառային, գիտես ի՞նչ
փոփոխութիւն կ'ըլլար սրաից և
վարուց : Ո՞ր թշնամին կը մնար
որ չհաշտուի իր ատելոյն հետ,
ու ուղենայ Աստուծոյ ատեանը
Ելլել լեղի բերնով և գառնու-
թեամբ հոգւոյն : Ո՞վ քովք կը
պահեր ան ստակն՝ որ անիրաւու-
թեամբ վաստրկեր է : Ո՞վ կը նար

իւղնմասնիքին մէջ պահել չար խիզն
մը , և ուզենալ որ երեսն գոյ
երկնաւոր գատաւորին առեւանը .
թէ որ մէկը իրացընէ աղետք ե
զածին ալէս մամասր , միթէ ա
նանկ կեանք մը կը վարէր , ինչպէս
որ հիմա կը վարէ , անանկ բան
կը գործէր , ինչպէս կը գործէ .
անանկ կ'ապրէր , ինչպէս կ'ապրի
հիմա : Ո՞վ կրնայ ըլլալ որ աղէկ
մը մոտծելն էտե թէ աս անցա
ւոր և մահկանացու կեանքէն ետքը
կայ մէկ անմահական և յաւիտեան
դիմացկուն կեանք մը , ամէն փոյթ
ու հոգը ըընէր ասանկ ամենա
հարկաւոր բանի վրայ : Ո՞վ կրնայ
ըլլալ որ տեսնելով թէ գժոխքը՝ այն
սոսկալի անդունդը բերանաբաց
սոքին տակը կեցեր է և պատրաստ
է զինքը կուլ տալու յաւիտեան ,
հաստատ չդնէր միտքը՝ որ ամէն
բան յանձն առնու , ամէն բանի
համբերէ , ամէն բանը կորալնցընէ ,
միայն թէ զինքը անկէ խալըու : Ո՞վ

կրնայ ըլլալ որ միտքը հաստատ
գնէ՝ թէ կայ յաւիտենական փառք
և վայելք և Երջանիկ յաւիտենա
կանութիւն, ու անդադար չհա-
ռացէ ասոր հասնելու :

Այս, ի՞նչ ըսեմ. թէ որ խո-
րունկ մոտածելու ըլլայինք յաւի-
տենականութեան վրայ, ի՞նչ կը
կարծենք, անկից ետե մարդ կը
մնար որ հետեւող ըլլայ ունայինու-
թեանց և հեշտութեանց. անկից
ետե աշխարհքս զինքը սիրող կու-
նենար, անկէ ետքը մարդ կը ըլլադ
որ մեղաց գերի ըլլայ: Բնաւ չէ.
անհարակոյս Եղիք, որ անկէ ետե
աշխարհամարի. կենցազավարու-
թիւնք մէկդի կը դրուեին, վտան-
գաւոր զբօսանք կը գագրեին, ան-
սուրբ տեսարաններ բոլորովին կը
ջնջուեին. բոլոր ժողովուրդը ժա-
մերը միայն կը վազէր, ուր կը տես-
նէիր բազմութիւն խորաններու-
քով. խոստավարանները չորս
դին պատճե խոստավանորդինեւ-

բով . և ամէն մէկը մեզնէ . մէծ
մտմտուքի , մէջ մտած՝ անդադար
մեզի հետ խօսելով կը բաւենք . Յա-
ւիտենականութիւն մը կայ , կը
հաւտամ . կը վախնամ , կը ոպասեմ ,
ամէն վայրկեան իմ վրաս կրնայ
հասնիլ . իրիկուն առաւ կրնամ
կանչուիլ . ասանկ որ ըլլալու ըլլայ՝
արդեօք պատրաստ կը գտնուելի
հոն մտնելու : Վնանիլ է նէ , որով
հետեւ մէկ օր մը պէտք է որ լմբնցը
նենք աս կեանքիս ընթացքը աս աշ-
խարհիս մէջ , ու նոր կեանք սկսիլ
մէկալ աշխարհքը , խելացութիւն չէ
առանց ուշացընելու մտածել բա-
նը , և անդադար պատրաստ դրա-
նուիլ : Ուրեմն ի՞նչ ողորմելի կը ը-
լար իմ բանս թէ որ ասչափ հաս-
տառուն առաջադրելէս ետքը դար-
ձեալ նոյնպէս ապրեի՝ ի՞նչպէս որ
ապրեցայ , անսնց նմանելով՝ ո-
րոնք կը կարծեն թէ աս կեանքէն
ետքը ոչ վախնալու բան ունին և
ոչ յուսալու :

Յաւիտենականութեա մտածու
թիւնը որչափ մեծ բան է, ո՞ր
շափ մեծ պատուզ կը բերէ . բայց
ավատաբը վրան մտած ողները խիստ
քիչ են :

Մեկ վարպետ պատկեր քաշողի
մը հարցուց մեկը թէ ի՞նչ է որ
դուն այդշափ վարպետ ես արհես
տիդ մէջ, ու քիչ պատկեր կը քա
շեմ . ուր ես որ քեզնել շատ վար
եմ, բայց քիչ առենի մէջ շատ
պատկեր կը քաշեմ . Ան ալրաւ .
Պատճառը աս է որ գու ժամանակի
համար կը քաշեմ, ես յաւիտենա
կանութեան համար, իմ նկարքս
յաւիտեան կը մնան : Երաւ որ շատ
գեղեցիկ գաս է մեզի աս բանս,
ամօթ չսեպենք աղեկ մը սորվելը .
Մենք ամեն մարդ նկարք մը ունինք
քաշելու . վասն զի քրիստոնէ ըւ-
լալով թէ որ կ'ուզենք վրկութեան

Հասնիլ, պէտք է որ մեր վրայ քա-
շենք Յիսուսի կրկնին պատկերը
ու նմանութիւնը. որ է գլուխ և
գաղափար ամենայն ընտրելոց: Աս-
տուծոյ սիրոյն համար վիշտ մը կը ել.
մահացոցում մը ապաշխարանքի
մոքով, ասոնք ամենը մէյմէկ վրձին
զարնել են ու մէյմէկ դիմ քաշել
հայելով՝ ի նմանութիւն աստուա-
ծային պատկերին՝ որ առջևնիս
դրած է. բայց միշտ լիշել պէտք
է. թէ աս քաշուածքս սլիտոր ըլ-
լայ յաւիտենականութեան հա-
մար. Յաւիտենականութեան հա-
մար կը նկարեմ, ըսենք:

Ասանկ մեծ մեծ բաները մտա-
ծելով՝ գործենք ու ապրինք աս
վայրկենեսեան՝ յաւիտենականու-
թեան մտածութեամբը լցուած ու
սինդ հաստատուած յաւիտենա-
կանութեան հաւատքով և սիրտ
առած յաւիտենականութե յու-
սով. մէկ խօսքով յաւիտենական
կենաց համար սուղծած ու սահ-

մանած։ Ասուած տայ որ առ
յաւիտենականութիւնս մեզի հա-
մար Երջանիկ ըլլայ։

Ազէկ մամաս, խորունկ մոս-
ծէ, ու շախունակ գու քեզի ըսէ-
Յաւիտենականութիւն կայ առջե-
նիս։ Ես յաւիտենականութեան
համար Եղած եմ. գուցէ ես ար-
դէն յաւիտենականութե գուռն
եմ հասեր։ Ենչ վիճակ պիտի ու
նենամ Ես յաւիտենականութեան
մէջ։ Ասուած ուրիշ բանի հա-
մար ինձի Ժամանակ չէ տուեր,
բայց միայն մամալու ու խելքս
գլուխս ըերելու։ Ուստի ես ալ
առ բանիս խելք կուտամ, և առ
բանիս կը նուիրեմ բոլոր կեանքս,
որչափ որ դեռ պիտի ապրիմ։

ԳԼՈՒԽ Զ.

ԴԱՐՅԻ ԳՈՎՅ ՀԵՂԱԼԻՄՐԵԼՅ ՀԱՎԱՐՅ
ՆԵՐՆ ՀՐԱ, :

ՄԵ ՀԵՐԿՈՎՐԱՋՔԵՐ ՕՐ ՅՈՐԵ, .
ԿԵՐՈՒ ՍԻՐՈՎ : ՕՐԵ ՕՐ ՄԻ ՃԳԵՐ
ՔՄ ՊԱՐԱԴՐ : ԱՄԷՆ ՕՐ ԿՐԹԵԱՆԵՆՔ
ԱՇԽԱՐՀՔԻՄ ՎԲԱՅ ՄԵՂԱԵՈՐ ՄԱՐ-
ԳԻԿ, ՈՐ ՄԵՂՔՈՎ Կ'ԱՎՐԲԻՆ Ու մեղաց
մէջ կը մրափեն, միշտ ըսելով թէ
Դարձի կուգանք, և մառնլին գնե-
լով թէ ասեն պիտի գտնան գառ-
նալու : Առ անանկ խարեւութիւն
մը և անանկ կուրութիւն մը նէ, որ
ասով անհամար հոգիք կորսուած
էն ու պիտի կորսուին : Ով մե-
զաւորք, մի խարուիք, դուք զձեզ
մի խարեւք, վասն զի դուք որ դար-
ձը օրե օր կը ճգեք, ճեզ վասնզի
մէջ կը դնեք որ բնու չդառնաք,
ու կորսուան որդի ըլլոք : ՊԵՄՔ Ե-

որ սուրբ հաւատքնիս մեծ վախ մը
բէրէ ձեզի այդ անհոգութեանը
համար, բան մըն ալ չկայ՝ որ առ
սուտ յուսոյն մէջ զձեզ ապահովցը-
նէ: Աս ասանկ է, սուրբ հաւատքը
կ'ըսէ թէ ամէն բանէն սարսափի-
սիտի այն մեղաւորը՝ որ իր գար-
ձը կ'ուշացընէ: Աստուծոյ պատ-
գամները, առակները՝ օրինակները,
անանկ մեղաւորին համար՝ մէյմէկ
վախնալու սոսկալու նիւթեր են:
Ամէն բանը մէկ խօսքով հասկցուց
սուրբ գիրքը Աստուծոյ կողմանէ,
պատուիրելով՝ թէ Սի յերկարա-
ձգեր, մի ուշացըներ:

Ուստի ուշ դիր աս բանիս ու
աղէկ մասածէ: Սոսկալի է աս պատ-
գամն, ահաւոր էն աս բանիս վրայ
ուրիշ սուրբ գրոց վկայութիւն-
ներն ալ. Խնդրեցէք զտէր, երբ
կարելի է զինքը գտնելը. Դնացէք,
մինչդեռ զւոյսն ընդ ձեզ ունիք,
և թէ Վըթուն կացէք և աղօժոն
արարէք, զի ոչ դիտէք զօրին և ոչ

զժամին . Յորում ժամու ոչ կարծի-
ցէք , գայ որդի մարդոյ :

Ահաւոր Են սպառնալիքն ալ .
Խնդրիցէք զիս , կ'ըսէ տէրն , և ոչ
գտանիցէք . և 'ի մեղս ձեր մե-
ռանիցիք :

Ահաւոր Են բերած օրինակներն
ալ . ինչպէս գողը գիշերով վրայ
կը հասնի խորունկ քնոյ ատեն ,
առանկ կուգայ մահն ալ ձեր վրայ՝
մեղաց գիշերոյն ու քնոյն մէջ :
Քրիստոփի խօսքն է Պօղոս առա-
քելոյն ըստածն ալ . Որպէս գող .
Սոզոմոն ալ կ'ըսէ . Որպէս ձկունք
որսացեալք ցանցիւք չարեօք , և
որպէս թռչունք որսացեալք 'ի
ծուղակս :

Ահաւոր Ենմանութեան կերպն
ալ . ինչպէս մայլակը յանկարծ
կ'երենայ , և ինչպէս տասկարը ծա-
ռին արմատին քովը դրած՝ կարե-
լու ու կրակը ձգելու համար , ասոնք
Են քու կենացդ սկատկերները .
մահն ալ ասանկ պիտի հասնի վրադ :

Ահաւոր են առակներն ալ . ինչ
պէս հինգ յիմոր կուսանքն որ պա-
տրաստ էին փեսին դալուն , հարս-
նիքին դուռը դոցուելն ետքն որ
եկան . լսեցին . Ոչ դիտմ զձեզ :
Իր տիրոջը գալուն անսպատճառա-
ծառան ալ կապուեցաւ ու դրսի
մոթը քշուեցաւ :

Աս պատգամներուս նայելով .
ինչ բանի կը սպասեն այն թշուա-
ռականները , որ իրենց կենացը
մէջ խուլ անկան կեցան Աստուծոյ
ձայնին , պնդագլուխ դէմ կեցան
Աստուծոյ շնորհքին , փհացուցին
Աստուծոյ ազգեցութիւնը՝ որ զի-
րենք յապաշխարութիւն կը կան-
չեր . զհոգին սուրբ տրամեցուցին
իրենց սրտին մէջ . զանդին արիւն
Փրկչին պղծեցին , քարսիրտ կե-
ցան իսղճմանիքին զարնելուն դէմ ,
ինչ բանի սպասեն սիսոր . բայց
եթէ դարձերնին ուշացընելով զի-
րենք վտանգի մէջ կը դնեն շապաշ-
խարնելու , կամ սուս ապաշխարու-

թիւն մը ցուցընելու . ուստի ան-
ապաշխար և անզեղջ կը մեռ-
նին , ու գատապարտելոց կարգը
կը մտնեն : Վայ անոր որ չմտածեր
ու չմտար աս ահաւոր ճշմար-
տութիւնները : Կրնայ ըսել մեկը
թէ ետքէն այգին Եկող մշակներն
ալ առջիններուն հետ վարձքեր-
նին առին . իրաւ է , բայց առ
մշակները հրապարակը կեցած կը
սպասեին ու կ'ուզեին աշխատիլ-
իսկ դարձի դալու ուշացող մեզա-
ւորները ուր կեցած են . խաղի՝
զբուանքի , անկարդ բաներու հետ
են . ի՞նչ կը կարծես , ասանկները
առ բաներուն մէջ իրենց դարձին
արդեօք փոյթ կ'ունենան :

Մէկն ալ ըսե . Բարի աւազակը
մահուան առենիր դարձաւ , մենք
ալ առ յոյոր կրնանք ունենալ :
Ասիկայ՝ սրբոյն Օդոստինոսի ը-
սածին պէս , մէկ հրաշք մըն եր ,
արտաքոյ կարգի բան եր . մեզի
օրինակ չենիք կրնար առնուլ : Ով

խեղճ մեղաւորներ՝ դուք որ անհոգ
կեցեր էք . արժանի՞ էք ասանկ
շնորհաց՝ ձեր դարձին համար .
իրաւ է , բարի աւազակը մա-
հուան ատենը դարձաւ՝ որուն մէկ
հատիկ օրինակ կը դանուի սուրբ
Գրքին մէջ : Դարձաւ , գիտենք .
բայց ուր տեղ . Քրիստոսի վրկչին
մէկ կողմը կեցած՝ հոգին աւանդե-
լու մօտ , բոլոր իր արիւնովը թաթ-
խած : Հապա , մէյմ' ալ դարձէք
նայեցէք զարհուրելով մէկալ ա-
ւազակին վրայ ռայն անզգամին՝ որ
յուսահատ մեռաւ . աղէկ նայեցէք
տոտոր , ու փոխանակ մտուրնիդ
դնելու թէ մահուան ատենը դար-
ձի սիստոր դաք , սոսկացէք ու դո-
ղացէք ամէն վայրկեան :

Ուրեմն տարակոյս չկայ թէ
այն մեղաւորն որ իր դարձը կ'ու-
շացընէ ինչուան իր մեռնելու ատե-
նը , զինքը վտանգի մէջ կը դնէ որ
բնաւ չդառնայ , ու սուտումուտ
կարծեօք եղջերուաքաղ ապաշխա-

բութեան փուժ յուսով մը կ'իշխայ
իսկապէս անտաղաշխար անզղջու-
թեան անդունիդը :

Ազէկ մտածէ , ու անդադար
ըսէ քեզի հոգւոյն սրբոյ ըսածը .
Օրէ օր մի ձգեր : Աս օրուընէս
սկսէ . չէ նէ՝ գուցէ վաղը ատեն
չունենաս :

Պատճենիւն :

Աշխարհասէր մարդուն մէկը
շատ տարի մեղաց ու մոլութեանց
մէջ ընկզմելէն ետքը՝ վերջապէս
դարձի կուգայ , ու ինչլ մը ատեն
իւլք կը կենայ : Երբոր նորէն
իր առջի ճամբան բռնեց , ջանա-
ցին բարեկամները ասոր իւլքը
գլուխը բերել . բայց ճար չեղաւ .
վասն զի Աստուծոյ ամէն շնորհչքին
ալ ոտքի տակ կ'առներ , բարեկա-
մներուն խրանն ալ : Աս միջոցիս հո-
գեոր կըթութիւն մը ապսպրեցին
ամենուն շուտով ընելու . աս բանս

յալոմար ժամանակ երեցաւ որ այն
մեղաւորին ալ յորդորեն որինքն ալ
նոյն կրթութեան մտնելով՝ ճամբռու-
գայ Աստուծով, որ ասանկ միջոց
մը յաջողեց։ Ըստ անգամ խրատ
առուին բարեկամները . և թէպէտ
ինքը շատ գեմ կեցաւ, բայց եռքը
Եսքը խօսք տուաւ՝ որ ուրիշներու
հետ ինքն ալ կրթութեան մտնեւ :
Նայէ հիմա թէ ինչ եղաւ . նոյն ա-
ռաւօտն որ անիկայ սկսելու էր իր
կրթութիւնը, բօթ ձայն մը ելաւ
թէ այն ողորմելին յանկարծակիփ
է եկեր, իջուածքով մեռեր է՝ ա-
ռանց գիտնալու, առանց քահա-
նայ մը քովը ըլլալու, առանց սուրբ
խորհուրդներու : Աս սոսկալի դի-
պուածը զամենքը ստանեցուց, և
ամենուն սիրաը շարժեց որ ազէկ
կերպով ընեն հոգեւոր կրթութիւնը
և ամենայն սրբութեամբ իրենց
հոգւոյն միրկութիւնը շահին :

Ուրեմն իսկ սոլոմոնի թէ ի՞նչ

պես գեշ բան է դարձը ուշացրնելը։
Չարաչար կը վարենք ասեննիս՝
Երբոր դիւրին էր պէտք Եղածը
ընել։ Աստուած ալ հասարակօրէն
միջոցը կը վերցընէ։ Երբոր մէր
խելքին համեմատ կ'ուզենք աղեկ
բանեցընել։

Ե՞րբ է ան առենը որ մենք զմեզ
մտածենք։ ինչուան մահը պիտի
սպասէնք։ ՄԵնք որ մեզ չմտար-
տանք, ով պիտի մտամայ մեր տեղը։
ՄԵնք որ հիմա մեզ չմտածենք,
ասկէց ետքը պիտի մտածԵնք։ ա-
ռեն գտնենք պիտի արդեօք որ
մտածենք։

ԳԼՈՒԽ Ե .

Մահ Աշառուի , իւմ էպէտ անշնչա-
նիւն :

Աղեկ մամաս թէ ի՞նչ կըսէ
քեզի հոգեվար մեղաւորը :

Դիր թէ ներկայ է քեզի այն
մեղաւորը որ մեղաց մէջ կեանիքը
անցուցեր է , ու ինչուան ետքի
օրը ձգեր է իր դարձը . ու միտքը
գրեր է թէ մեռնելու ատենը կը
դառնայ կը զզջայ : Մէյմ'ալ նայիս
որ վտանգաւոր հիւանդութիւն
մը կուգայ վրան : Առջի օրերը հոգ
չըլլուիր . Բան մը չէ՝ բան մը չէ ,
կըսեն անեցիք : Ան միջոցին ցաւը
կը ծանրանայ , բանը գէշի կ'եր-
թայ . ան ատեն մէկէն բժիշկներ
կը կանչուին , խորհուրդներ կը լ-
ւան , գեղեր կը հոգացուին , ամէն
բան կը լլուի սոսկ մարմնոյն ճար-
ընելու . հոգւոյն հոգ տանիող մը

շկայ . Դեռ ատեն կայ , կ'ըսեն .
արտորալու բան շկայ . հիւանդին
աչքը վախցրնել պէտք չէ . վաղը
նայինք , թէ որ աւելի ծանրանայ
նէ , ան ատեն իրեն ալիմաց տանիք :
Աս ան ըսելով յայտնի կ'ըլլայ որ
մահարեր է հիւանդութիւնը . ան
ատեն անեցիք կը սկսին իրարու ե-
րեսնայիլ , ամենուն գեմքը տիտուր ,
կամաց ձայնով իրարու հետ կը խօ-
սին , չե՞ն թողուր որ հիւանդը բան
մը գիտնայ . իրար կ'անցնին՝ չե՞ն
գիտեր թէ ի՞նչպէս իմացնեն հի-
ւանդին : Ախ , ի՞նչ ըսեմ ասանել
անդութ գլժութեան և գեշ նկատ-
ման մը համար :

Վերջապէս հիւանդը վերջի թէ-
լը կը հասնի . սաստիկ մարմրուք
մը , այլայլութիւն մը կը կոխել վրան ,
անանկ որ խելքը միտքը կը կորուն-
ցնէ , լեզուն կը կապուի , զգայու-
թիւնքը անզգայ կը դառնան , ան
ատեն բոլոր անեցիք սահմուկելով
կ'աղաղակեն . Շուտ շուտ՝ խոստ

վանահայր մը կանչուի , մէկ քա-
հանայ մը , խոստովանահայր մը :
Բայց եկուր տես , ով անքննելի
տեսչութիւն , ով արդար զա-
տաստան սարսափելի . Ասու-
ծոյ քահանայ մը չգտնուիր . կը
վետուեն , կը սպասեն . աս ան ըսէ-
լու չմնար , հիւանդը կը մեռնի
կ'երթայ : Հիմա հասկըցար Քրիս-
տոսի ըսածը . Ի մեղս ձեր մեռա-
նիցիք : Դնենք թէ յանկարծ քա-
հանայ մը գտնուի , վազէ գայ .
բայց ան հասած չհասած՝ հիւան-
դը հոգին կը փշէ . և քահա-
նան խոստովանահայրը աս առջի
խօսքը կը լսէ , թէ Մեռաւ գնաց .
բանը ան է՝ որ ՚ի մեզս իւր մեռաւ ,
ինչպէս որ աւրին մեր ըսաւ : Ըսենք
թէ քահանան երբոր հասաւ՝ հի-
ւանդը զեռ կենդանի է եղեր . բայց
ի՞նչ կենդանութիւ , որսկիսի՝ կեանք
է ասիկայ : Յաւիտենական վրկու-
թեանը նայելով անանկ կենդանի
ըլլալը՝ արդէն մեռած ըլլալ է :

Ալ աւ անես որ գլուխը վար կա-
խուեր է վհասութենեն . աշուք-
ները գարձած մթընցեր են , երեսը
դեղնած մեռելի զոյն . անզամնե-
րը սառ կտրած , հոգեվարութեան
հետ կը կռաւըսի անհարակ և
ցաւագին : Վ՞ե միջոցին նշան մը
զզման չերենար , որ քովիններուն
հաստատ յոյս մը տայ սրտանց
դառնալուն : Ի՞նչ ցաւալի վիճակ
է որ իրեն կերենար թէ դարձի
առեն է , ու չեր կարծէր թէ մե-
զք պիսի մեռնի : Բայց ըսենք թէ
հիւանդին հասկըցուցեր են թէ
վերջի թելը հասեր է , ու խոստ
վանահայրն առենին եկեր հասեր
է . հիւանդին ալդեռ խելքը գլուխը
վրան ըլլայ , ազատութիւնն ալ հե-
տը . միթէ այսու ամենայնիւ ինքը
ապահով է իր դարձին վրայ : Հի-
ւանդին քովը մօտենանք , որպէս
զի ականատես վկայ ըլլանք առսա-
րանի մը , որ գրսի երեսութով չի-
նութիւն ըլլայ ու շահաւոր , բայց

իսկապէս աւելի սարսափելի է .
Կ'ուզէմ ըսել , դիտենք նայինք
թէ հասարակօրէն ինչ վիճակի մէջ
կը գանուին մահուան ատենք՝ ա-
նոնք որ ինչուան այն ժամանակը
ձգեր են իրենց դարձը : Աստուծոյ
դասաստանը ինչպէս երկիւզալի-
է : Մեծ մասը կը աւանենք որ ա-
սանկ չապաշխարող մեղաւորնե-
րուն բոլորը մէկմէկէ տարբեր .
բայց ամէնքը միապէս անզեղը կը
մնան . մեղաց գերի են իրենց կե-
նաց մէջ , և զոհ արդար դատաս-
տանին Աստուծոյ ՚ի մահուան ,
այսինքն մեղքով կը մեռնին :

Անզեղը մեղաւորն՝ որ իրեն ե-
զած ամէն ազգարարութեանց պա-
տասխան կուտայ ողաղ և առանց
ցաւելու՝ անզգայ անզգամութը ,
բանէ մը չարժիր , բանէ մը չառ-
նէր , ու մահուչափ կը գանի . Աս-
տուծմէ , ՚ի մեղս իւր կը մեռնի :

Անզեղը մեղաւորն որ մահուան
ատենը Աստուծոյ վրայ սոսկ կը

նայի առ մոքով թէ սարսափելի
դատաւոր մըն է և անհաշտելի
պատճող իր յանցանացը , բոլորո-
վին սրտակոտոր և յուսահատ կը
մնայ . ու նայելով իր չափազանց
անկարգութեանցը վրայ՝ կը կարծէ
թէ ալ իրեն համար թողութիւն
քաւութիւն և ողորմութիւն չկայ ,
ու Աստուծոյ ձեռքը ուրիշ բան
չտեսնելով բայց միայն փայլակ-
ներ ու կայծակիեր , ինքզինքը կը
դատապարտէ , և իր յաւիտեան
ողբալի յուսահատութեամբը խո-
րունկ կը դրէ իր սրտին մէջ իրեն
յաւիտենական վճիռը . Ի մեզս իւր
մեռանիցի :

Անզեղջ մեղաւորն որ ներհակա-
բար մէկալ ծայրը անցնելով չա-
փազանց յանձնապաստանութեան
մը մէջ կ'իյնայ , միտքը կը դնէ թէ
արարիչն Աստուծած այն չափ բարձր
է որ ՚ի հարկէ չուզեր իր ստեղ-
ծածը ՚ի կորուստ յաւիտենից իւր-
կել , և անհուն ողորմութեամբը

ամեն մեզքի գիւրաւ ներուսին կը
շնորհէ : Աս վստահութիւնը վերոյ
ի վերոյ լսողին քրիստոնէ ավայցել
բան մը կ'երևնայ , բայց խակապէս
ստուանայական յանդգնութիւն
է , որ կը մասնէ զինքը իր կորսուս
կան խելքին և կը հստակած իր
գամապարտութիւնը :

Անզեզը մեզաւորն որ սրբին մեջ
հաւառքը կը մարէ ու լի է մո-
լորութեամբք ընդդէմ կրօնի և
ընդդէմ աստուածակաշտութեան ,
ամբարշտութեամբ՝ չուզեր լսել
բան մը գարձի վրայ , կրօնիքի վրայ ,
և սուրբ խորհուրդներու վրայ , բո-
լորին աչքն ալ գոյելով՝ անկան
ալ . հոգին կը փչէ անանկ զար-
հուրելի հայհոյանքով ու սոսկում
ընըրելով քովի կեցողներուն , և
ասանկ լինցընելով իր ամբարշտա-
կան և գայթակղական կեանքը՝ բո-
լորովին չար և ողբալի մահով , ի
մեզս իւր մեռանիելով : Երբոր մե-
զաւորին բանք բուռաւ լմբնցաւ :

հոգին փւելով . մէկէն սգոյ զան .
գակներ կը զարնուին . ի՞նչ կայ
ըսես նէ , եղածը աս է որ սա
տնէն մարդ մը սկակաեցաւ , աշխար
հէս մարդ մը հեռացաւ , բայց որ
սոսկալին է՝ դժոխքին մէջն ալ մէկ
մարդ մը աւելցաւ :

Աս ի՞նչ տարսավելի մահ է , և
ով կրնայ առանց տակնուվայ ըլ-
լալու մոտածել աս բանս :

Ասանկ են հասարակօրէն , չեմ
ըսեր ամէնքը , բայց մեծ մասը մե-
ղաւորաց , որ իրենց տպաշխարու-
թիւնը եաքի օրը ու մահուան ատե-
նը կը ձգեն , անանկներուն սիրաը
քարացեր է իստասրտութեամբ .
կեանք մեղաւորաց՝ մահ որդւոց
կորստեան , յաւիտենական տան-
ջանք և յուտահատութիւն է :

Պատմութիւն :

Մէկ մեծ մեղաւոր մը որ կեանքը
չարաշար մեղերով անցուցեր էր .

վասնդաւոր հիւանդութք մը ան-
կողին ընկաւ : Իր բարեկամ քահա-
նային մէկը ի'երթայ ասոր այցե-
լութիւն մը ընելու , որ կարենայ
յորդորել զինքը՝ մամաալ մէյմը իր
հոգւոյն փրկութիւնը . բայց հի-
ւանդը բնաւ պատասխան չտոր
անոր : «Քահանան անոր տոֆեք կը
գնէ իր խեղճ մի ճակը , կը յորդորե-
որ խոստովանի : Ան ալ կ'ըսէ . կը
խոստովանիմ , խոստովանիմ պի-
տոր . բայց ըստածը ընելու պէս չէ :

«Քահանան սուրբ նախանձաւորու-
թեամբ շարժած՝ աւելի սաստիկ
յորդորանիք կ'ընէ ասոր . Ազէկ է
կ'ըսէ հիւանդը , վազն եկուր որ
խոստովանանիք ըլլամ : Ետեի օրը
կը գառնայ կուդայ քահանան .
կ'առանձնանայ ասոր հետ , խաչ
կը հանէ երեսը , որ սկսի անոր
խոստովանանիքը լսելու : Հիւանդը
քիչ մը կը կենայ առանց բան մը
լսելու , եռքը մէկ ահաւելի ձայնով
ի՛ւ սուրբ գրոց այն խօսքը կ'ըսէ .

Տեսցէ մեղաւորն և բարկասցի : Առ
կըսէ ու գլուխը վերմակին տակը
ծածկելով, Երեսը կը գոցէ՝ լուռ կը
կենայ . խոստովանահայրը լալով
կը դառնայ . Քեզի կ'ըսեմ կ'ըսէ ,
Խեցդ գլուխդ բեր , վեր ելիր . ան-
շընելու առեն չկայ , շուտով խոս-
տովանանք պէսք է ըլլաս : Պատաս-
խան կուտայ . հիւանդը . Անանկ
է . պիտի խոստովանիմ . Ետեւէն
ալ անմիջապէս կը կցէ նոյն բնա-
բանին խօսքերը . Կրծաւեսցէ զտոտա-
մունս իւր և հաշեսցի . ու մէկէ-
նիմէկ կը ծածկէ կը գոցէ զինքը
առջինին պէս : Կորէն կը բանայ
խոստովանահայրը , ու կ'երգուըն-
քընէ զհիւանդը որ զլսոտուած
միտքը բերէ ու խոստովանի : Հի-
ւանդն ալ նորէն կ'ըսէ . Ուրէմն
քիչ մը կեցիր որ խոստովանինք . ու
Երրորդ անգամ կը գոցէ զինքը , ու
աչուըները ասգին անգին տանե-
լով ալ աւելի կը ծածկուի . ու նոյն
սաղմոսին վերջի խօսքերը դուրս

կուտայ . Յանկութիւն մեղաւորաց
կորիցէ : Աս բանէս կը զարհուրի
քահանան , մեյմ'ալ կը բանայ ու
կը տեսնէ որ թշուառականը հոգին
փչեր է :

Ասանկ զարհուրելի աստուա-
ծային արդարութեան հարուած-
քին վրայ ես ի՞նչ կրնամաւելցընել :
Արցունքս թող զբուցեն ի՞նչ որ
բերնով չեմ կրնար խօսիլ : Սիրելի
ընթերցող , աղեկ մտածէ , խո-
րունկ մասնա : Ասկից ետե միայն
մտածելու համար ապրէ : Աս մտա-
ծութիւնս միայն ծառայէ քեզի
ամեն խրատի տեղը :

ԳԼՈՒԽ Ը.

Աստուծոյ ահաւոր դատաստա-
նը անանկ նիւթ մը նէ որ մտածել
կուտայ, ու սաստիկ գող մը կը
բերէ վրանիս : Բիւր անգամ կար-
դացեր Ենք Աստուծոյ դատաս-
տանաց մտածականը . բայց գուցէ
և ոչ մէկ անգամ խորունկ մտա-
ծեր Ենք . Հիմա է աս բանը ընելու
և զմեզ պատրաստելու առենք :

Ըոքի մը պէս աշխարհքս կ'անց-
նի . Հիմա կայ, քիչ մը ետե՝ մէյմ ալ
չկայ, կեանք ըսածնիս անյայտ կ'ըլ-
լայ երազի մը նման արթը ընեալնուս
պէս : Մարդիկ իրենց օրերուն մեծ
մասը կ'անցընեն մաքի զբաղմուն-
քով ցնդելով անհանգիստ ըլլա-
լով, ու մոռնալով զիրենք ալ՝ զԱս-
տուծ ալ : Անանկ կ'ասլրին՝ որ-
պէս թէ աս մահկանացու կեան-

քես ետև ոչ բան մը յուսալիք ու-
նին և ոչ ալ վախնալիք , միշտ
շարաշար գործածելով Աստուծոյ
ողորմութիւնը , որ անդադար զի-
բենք յապաշխարութիւն կը յոր-
դորէ :

Բայց առեն կուզայ արդար դա-
տաստանի , Աստուծոյ ձեռք սկիսի
առնու իր բոլոր իրաւունքը այն-
չափ աւելի իրաւամբ՝ որչափ որ
շատ ազեկութիւն ցըցուցեր է զե-
րագոյն գատաւորը :

Կուզայ օր մը , այն ահեղ օրը ,
որ սկիսի երենայ ինքն գատաւորն՝
զորն որ մարդիկ սրդողցուցեր են ,
անարդեր նախառեր են . ան ա-
ռեն նոյն անաշառ և անխնայ դա-
տաւորը կը ցուցինէ զինքը մեղաւոր
ներուն իր անպատճելի մեծվայել
չութեամբը . զոր իրենք արհամար-
հեր էին : Մտքերն ու չանցած բա-
ները իր իշխանութիւնն և ահաւո-
րութիւնը սկիսի աւետեն և իրեն
գալուստը , ու կարապետ սկիսոր

ըլլան իր գաստառանին ու վրեժ
ինդրութեանը :

Ախով վախով ու սոսկալով ո
մէհքը սպիտոր տեանեն որ նոյն դա
ստորին աստուածացին հրամա-
նովը արեգակը սպիտի խաւարի, ու
իր լոյսը ծածկէ մարդկան աչքէն .
լուսինն ալ արեան քրտինքով մը
երեսը գոցէ . հաստատութեան
աստղերը իրար անցնին . ահուելի
մութ մը սպիտի պատէ բոլոր աշ-
խարհքին վրայ, ու խաւարով ծած-
կէ : Բովանդակ երկիրս սպիտի սա-
սանի իր հիմերով, դողդըզայ ու գող-
ձգէ ամէն սրտի մէջ իր սարսելուն
աղէն . ծովը կատղի, իր սահման
ներէն դուրս ելլայ . բոլոր բնու-
թիւն արարածոց՝ տակնուվըայ սպի-
տի ըլլայ, շփոթ խառնակութեամբ
դիմէ յընդհանուր կործանում մը :
Ան առեն հողին տակէն վրեժիսըն
դրութեան կրակ մը վեր սպիտոր ել-
լայ, Աստուծոյ բարկութեանը
իշխանութ վառած հրահրած, որ

վԵրջապէս պիտի այրէ՛ մըկէ՛ ու
փճացընէ՛ աս սհագին ընդարձակ
հողագունոր . մարդկային ազգը
պիտի վԵրցուի և բոլոր աշխարհ
իր կատարածը պիտի տեսնէ :

Երբոր առանկ աս աշխարհը
փճանայ ու պարզ մոխրակոյտ մը
գառնայ թանձր ծխով մխով պա-
տած, ինչ կըսէս՝ ան առեն ալ գուն
հին խելքովց արդեօք կրնայի՞ր
մեծ բան մը սեպել աս անցաւոր
աշխարհս ու անշափ բազմանքով
անոր բաներուն կապուիլ, պէս
պէս բաներ միաքդ զնել . ասոր
անոր հետ իյնալ, անհանգիստ
ըլլալ, չափեդ գուրու ելլել . կամ
փարթամոթիւն փնտուել և հեշ
տութիւն, փառք պատիւ, և ինչ
որ կընար մէկը ունենալ: Չէիր
գիտեր առաջուց ալ թէ աս ամեն
բաները կը չքանասն, և պէտք է որ
օր մը ամէն բանը թողունք, ու
գԵրագոյն գատաւորին դիմացը ել-
լենք, ամէն բանի համար տալու:

Ահաւոր փողոյն ձայնը լսուածին
պէս՝ որ հրեշտակները պիտի զար-
նեն, բոլոր բովանդակ մեռած մար-
դիկը իրենց գերեզմանէն կ'ելլեն
կը ժողվին, այն երեելի ձորը, ուր
մէկտեղին պիտոր ամէն մարդիկ
որ եզած են ու գեռ պիտի ըլլան։
Այս այս, ամէնիքնիս պիտոր կան-
չուինք այն սոսկալի ատեանը, ուր
գերագոյն դատաւորը մեզի պիտի
հարցընէ, քննել ու դատէ ամէն
բանի վրայ՝ ամենայն ճշգութեամբ։

Դատէ պիտոր մեր մասած ութիւն-
ները, այնչափ գեշ և ամօթալի խոր-
հուրդները, այնչափ յանդուզն
դատողութիւնները։

Դատէ ու կշռէ պիտոր մեր խօս-
քերը, անսպիտան ու պարապ խօս-
քերը, համարձակ ու անվայել
խօսքերը, մեղանչական և դայթակ-
շական խօսքերը. ո՞հ, որչափ ա-
զէկ կըլլար եթէ որ մեր լեզուն
բռնած ըլլայինք։

Դատէ պիտոր մեր յօժարու-

թիւնները, և մեր սրաբին խորունկը
շափելով դուքս պիտի հանեւ այն
շափ անարգ և անարժան բաղձանիք
ները, ախտաւոր և անկարգ յօ^յ
ժարութիւնները, անիրաւ և սո
վորաբար անշնորչք բաղձանիքները.
և յիրաւի, ի՞նչ անկարգութեան
բաներ չեն ելեր մեր սրաբն՝ կրիւք
ու ախտիւք շարժած առենիս :

Դատէ պիտոր մեր գործքերը.
և բոլոր պատճառները՝ որոնց հա-
մար գործեր ենք, ինչպէս վա-
ռասիրութիւն, անափառութիւն,
անձնասիրութիւն, մարդկայիննկատ-
մունք, շահասիրութիւն, և այլ
անբաւ առիթներ, որ թունաւոր
որդերու պէս զանոնք կ'ապակա-
նէին :

Դատէ պիտի մեր արդարու-
թիւններն ալ, մեր բարի կար-
ծուած գործքերն, որ ըստ մեծի
մասին պակասաւորք են՝ գաղթու-
թեամբ, անհոգութեամբ, անհա-
ւատաբամութեամբ, որ գրեթե ա-

Ան քանի մեջ կը մտնեին ու կը
խանգարէին :

Վայ մեղի, որքան մեղքեր՝ որչափ
այլանդակ ծածկուած հրեշներ
դուրս պիտոր Երենան ան տաեն,
քանի քանի կեղծաւորութիւններ,
կեղծիք, ուստրուակներ, զազնի
անզգամութիւններ ու անկարգու-
թիւններ, անանկ մեղքեր որ մենք
ուրիշներուն ացքէն պահեր էինք,
կուղէինք որ մեղներ ալ ծածկենք,
որ չենք կրնար յիշել առանց
խպնելու, բոլորը ողիտի յայտ-
նուին և զմեզ խայտառակեն պիտի
բոլոր աշխարհիս ացքին առջեր
ինչպէս վատահամբաւութիւնն
ինչ ամօթ սիտոր ըլլայ յանցաւոր-
ներուն . Եկէք լեռներ՝ մեր վրայ
ընկէք, Եկէք ձորեր՝ մեզ ծածկե-
ցէք ըսելով պոռչան պիտոր խեզն
ողորմելինները, խելքերնին կորսըն-
ցուցած, վախցած, ամօթով լր-
ցուած, ամէն յուսոյ կարած,
Աարձարակ չունեցած, ուսնե-

ըով ի՞նչ որ արժանապէս իրենց կը
հասնի :

Աւ ի՞նչ կը մնայ , եթէ ոչ՝ որ
Ետքի գասակնիքը ելլէ , այն յա-
շխենական վճիռն որ բոլորովին
պիտօր կարե յաւիտեան և որոշէ
հաստատե յաւիտեան արդարինե-
րուն ու մեղաւորներուն վիճակը :
Արդարոց պիտի ըստ Երկնաւոր
գասաւորն . Եկալք օրհնեալք հօր
իմոյ , ժառանգեցէք զարքայու-
թիւնն Երկնից զարարաստեալն
ձեզ ՚ի սկզբանե աշխարհի . գուք
ձեր կենաց մեջ հառաջեցիք , լա-
ցիք , համբերեցիք , Եկէք հիմա
տուէք արդար հասուցմունքը ձեր
քաշածներուն , ձեր ախուվախին ,
ձեր հառաջանիքին . Եկէք կըսեմ ,
օրհնեալք հօր իմոյ . իսկ գուք
կամակոր մեղաւորներ , հեռա-
ցիք ինձմէ յաւիտեան , վասն զի
անիծեալ էք , գնացէք յաւիտե-
նական կրակը որ Սագայելի ու
իր ապստամբ հրեշտակներուն պա-

սրաստուած է . Երթայլք յինէն
անիծեալք ՚ի հուրն յաւիտենա-
կան , որ պատրաստեալ է սատա-
նայի և հրեշտակաց նորա :

Նոյն վայրկենին մէջ երկինքը կը-
բացուի , ու երկնաւոր գատաւորը
յաղթանակով վեր կ'ելլէ իր ըն-
տրելոց հետ . դժոխքն ալ կը բա-
ցուի , ու յաւիտեան կուլ կուտայ
մեղաւորները իր վրէժինդիր կը ա-
կին մէջ . ուր իրենց բաժինը կ'ըլ-
լայ լաց ու ողբ , դառնութիւն , կա-
տաղութիւն , յուսահատութիւն :
Ժամանակը բոլորովին կը լմբննայ
կ'երթայ . ամէն բան անվոփոխ կը
մնայ յաւիտենականութեան մէջ :
Ասոնք մատնանք ու բնաւ չդա-
դինք մտածելլէն . երանի մեղի թէ-
որ միշտ մտածելով մէր կենացը
մէջ , ՚ի վախճանի կարենանք դտնել
մեղի մէր դատաւորը ներողամիտ և
քաղցր մէր վրայ , և մէր կողմը ըլ-
լայ իր դատաստանը :

Պատաստար :

Բաղտասար Ք. աղջեացւոց անօ-
րէն թագաւորը մեծ սեզանի վրայ
իր մեծամեծաց հետ՝ հարբած
թաթխած փափկութեան մէջ, կը
հայհոյեր զլստուած, չարաշար
բանեցրնելով անոր ողորմութիւնը.
յանդգնեցու ալ սլզծել տաճարին
սուրբ ամանները, և անանկ կը
կարծեր թէ ան օրուան պէս ուրա-
խութիւն չկրնար ըլլալ: Խեղճը
չեր գիտեր որ իը դատաստանին
ատենը հասեր է. յանկարծ մեկ
ահաւոր ձեռք մը տեսաւ, որ սպա-
տին վրայ իր դատակները կը գրեր
աս խօսքերով. Տանէ, Անիւշ, Դարեւ-
այսինքն համրեցի, կշռեցի, բաժ-
նեցի. կուղեր ըսել, քու օրերդ
համրեցի, վերջդ հասեր է. քու
գործքերդ կշռեցի, որ զքեզ կը
դատասպարտեն. քու թագաւո-

ըստ միւնդ բաժնեցի , որ թշնամի ներուգ ձեռքը տամ : Ասանկ վՃիռ կարեցաւ իր զրան . և նոյն գիշերն ի գործ դրուեցաւ , և մեռաւ թշուառականը , մեռաւ որպէս որդի կորստեան , ինչպէս որ կեանքն ալ անօրէնութեամբ անցուցել եր :

Ուստի վախնանք Աստուծոյ խորոնկ դատաստաներէն , առ բանը մտածենք գիշեր ցորեկ . միշտ սկառաստ կենանք , սարսինք դողանք իր զօրաւոր ձեռքին տակը . ու ընաւ չմոռնանք թէ ինչպէս որ ինքն է Աստուծ ողորմութեանց . ասանկ ալ է Աստուծ վրէժինդիր : Ազէկ մտածէ առ բաներս :

Սուրբն Հերոնիմոս , որ Քրիստոսի Եկեղեցւոյն աղաշխարողաց մէջ հռչակաւորներէն մէկն է , աշխարհիո զբաղմունքէն աղմուկէն . ու Հռովմայ փառաւորութենէն ձանձրացած՝ Պաղեստին քաշուեցաւ , և գնաց որպէս թէ անտառով

թաղուելու . անպատմելի էր հոն
տեղը իր խստակրօնութիւնը , սաս-
տիկ ապաշխարանքը , մահացուց-
մունքը . զինքը հալել մաշելը , և
սուրբ ճշգութիւնը՝ որ բանեցուց
իրեն դեմ . Երբեմն քար մը ձեռքը
կ'առներ , անով կուրծքը կը ծեծեր ,
արիւնլուայ կ'ըներ զինքը . միշտ
ահուգողի մէջ ըլլալով անդադար
կը մոմտար . Աստուծոյ ճիշդ գա-
տաստանը : Աս մասձութեան խո-
րունկը մտնելով կը սոսկար կը գո-
շեր ըսելով . Ինձի այնազես կ'երե-
նայ թէ ամեն վայրկեան կը ըսեմ
վերջին փողոյն ահաւոր ձայնը՝ որ
զամէնքը դատաստանի պիտոր կան-
չե . զիշեր ցորեկ անկըճիս մէջի է-
նոյն ձայնը . սիրտս ալ հոգիս ալ
կը գողայ . շեմ կրնար չիշել զա-
հաւոր տէրն իմ , որ զիս պիտի
դատէ : Վսանկ վախնալով և սպա-
ռելով Աստուծոյ դատաստանին՝
անցուց իր կեանքը : Երանի իրեն
որ զիտցաւ աստուծային արդա-

ըութեան առջեք առնուլ ասանեկ
Երկար խիստ ազաշխարհանքով :

Ուրեմն մենք այ սորվինք Աս-
տուծոյ դատաստաննը մասմասու-
որովհետեւ մէկ օր մը աղեաք է որ
իր առեանը Ելլենք :

Սորվինք գատաստանէն վախ-
նալ որովհետեւ հոն պիտի կտրուի
մեր յաւիտենական վիճակը :

Սորվինք անոր պատրաստուիլ
որովհետեւ մեր պատրաստութենէն
կը կախուի կամ յաւիտենական Եր-
ջանկութիւն և կամ յաւիտենական
թշուառութիւն . մենք զմեզ անա-
շոռ դատենք, որպէս զի Աստուծ
իր ողորմութեամբը զմեզ դատե :

Ոտքի տակ առնունք մարդկանց
փունք դատմունքը, Երբոր զմեզ
վասնզի մէջ կը ձգեն Աստուծոյ
որենքէն հեռանալու :

Վերջապէս ազաշենք զտէր, որ
քաւիչև քաղցրահայեացըլլայ մեզի
այն սարսափելի վրեժինդրութե-
ռը :

ԳԼՈՒԽ թ.

Առ Աստված քոռնու, և իր ողբ-
հանեանց ազատնիւ:

Եկուր տառապեալ հոգի ՚ի
Եւան Գողգոթա, մեղքերդ մամբ-
տա, ցաւէ որ այսչափ ծանր վիշտ
տուեր ես և դառնացուցեր ես
զԱստուած քու մեղքերովզ . Եկու-
որ գեղ մը գտնես քու չարեացզ ,
և թողութիւն տոնուս ըրած սկակ-
սութեանցզ : Մարդու ձայն չէ
որ զքեզ կը կոչէ , հասկա բուն
Քրիստոսի արեանը ձայնն է : Աչքդ
վեր առ ու նայէ ՚ի խաչելեալ
տերդ , իր բացուած սրամն մէջ կը
գտնես ողորմութիւն մը , որ մեղա-
ւորաց վրայ կը նայի . կը նայի գուր-
գուրալով ու անոնց ցաւակից ըլ-
լալով , և յապաշխարութի կը կոչէ
զիրենք : Հասկըցիր որ աւելի ցա-
ւալի և ողբալի վիճակ որ մէկը կը կը նայ

ունենալ մեղաց վիճակն է . ան այ
ծանր ծանր մեղաց , և աւելի ան-
ճառելի բանը Աստուծոյ սրտին
մէջ՝ իր մէնծ ողորմութիւնն է , մն-
ծամեծ յանցանքը անոնք են որ
կը լլան առած մեծամեծ շնորհ-
քներու գեմ . մէծ ողորմութիւնն
ալ ան է որ ետ քաշել կուտայ
զվրէժխնդիր բազուկն արդարու-
թեան , որպէս զի մեղաւորին մի-
ջոց առյ խելքը գլուխը բերելու և
առ Աստուած գառնալու : Կոյն
ողորմութիւնն է որ ձեռուըները
կը բանայ կը տարածէ առ մեղա-
ւորս , կը յորդորէ կը կանչէ զա-
նոնք , կը դրդէ կը շարժէ . աչուը-
նին կը բանայ , կ'արթընցընէ զիրենք
իրենց խորունկ քընէն . ու չկար-
ծած՝ տեսնել կուտայ իրենց մեղաց
մոլորութիւնը , իրենց վիճակին
սոսկալի վտանգը , և փրկութեան
ճամբան՝ որով պիտի գառնան առ
Աստուած :

Մեծ է և անճառելի ողորմու-

թիւնն Աստուծոյ , որ կրնալով
գործադրել իր արդար վրեժիսրն-
դրութիւնը , աւելի կը սիրե զա-
նոնք դարձրիել , և միշտ պատրաստ
է ողջադուրել զմեղաւորն , թէ որ
անիկայ պարզ որտով կը դառնայ
իր շնորհքը ինոգրելու : Ըսէ ինձի
ով խեղճ մեղաւոր . քանի՞ մեղք
ըրած ունիս կենացդ մէջ քանի որ
մեղանչել սկսար , և Աստուած որ-
շափ աղեկութիւն ըրած է քեզի :
Ստոյգ չէ որ բիւր անգամ դժոխ-
քի արժանի եղար . այսու ամե-
նայնիւ օր մը եղան որ բարե-
գութ և մեր ողորմած հայրը քեզ
կանչած չըլլայ , իր սիրտը բացած
ու քեզի ցըցուցած չըլլայ , որ ստի-
պէ զքեզ ելլել այն անդունդէն՝
ուր ընկղմած էիր , ու հեռանալ
յափտենից մահուան դռնէն՝ ուր
իյնալու վտանգին մէջ էիր . ան ալ
առանց բնաւ ձանձրանալու քու
գէմ կենալէդ , առանց զզուելու
քու անհոգութենէդ , առանց վրեժ

ինդրելու քու անկարգութենէդ
ու կոպառութենէդ :

Հիմա ալ ի՞նչ վիճակի մեջ քեզ
կը գտնես իր առջեր , և ի՞նչպէս
բան կ'երևնաս իր ամենամաքուր
աչքին դիմացը : Ուստի հիմա ալ
որչափ անշնորհք և ողբալի կրնայ
ըլլալ քու վիճակդ դարշելի մեղեւ-
րովդ . որչափ ոտքի տակ ալ առեր
ես իր շնորհքները , գիտցիր որ եթէ
անառակ որդւոյն սլէս դաս ասանկ
ամենողորմ և սիրական հօր ոտքը
Եյնաս , ինքը պատրաստ է դիրկն
ալ սիրան ալ բանալ քեզ ներս առ-
նելու համար . քու ձշմարիտդարձդ
իրեն միիթարանիք մը կը սեպէ ,
բոլոր երկինքն ալ իրեն ուրախա-
կից կըլլայ . և քու դարձդ այնչափ
հաճոյական կըլլայ իրեն՝ որչափ
որ տհաճեր եր քու հեռանալուդ
համար :

Եւ որովհեամ մեծամեծ մեղեւր
գործեցիր , կարոտ ես ամենամեծ
ողորմութեան . ուստի եկու դող-

գոթա լեռը, հոն պիտոր վինտուես
զՅիսուս: Դու թափեցիր և սղծե-
ցիր Աստուծոյ մարդացելոյ արիւնը,
խաչեցիր ու մեռուցիր զինքը նորէն
քու մեղքերովդ, ուստի իր սորքը ըն-
կիր, իրեն վաթթուե. Թող որ քու
ցաւդ և ճշմարիտ զզջումդ Աստու-
ծոյ հետ խօսին. և ահա խկոյն
կը լսես ողորմութեան ձայնը, որ
քու փրկչիդ և Աստուծոյ սրբէն
ու վերքերէն կ'ելլէ՝ քեզ կանչելով,
ու համբոյր հաշտութեան տալով,
և գնելով քու շրթունքիդ վրայ իր
շնորհաց քաղցրութիւնը քու ցա-
ւոցդ գառնութեան հետը: Աս-
ասանկ որ ըլլայ, քու ցաւագնեալ
սրբիդ մէջ կը դիմաւորուին ողոր-
մութիւն և արդարութիւն, որ
Քրիստոսի սուրբ արիւնովը կա-
տարուի քու դարձդ ու մեղացդ
քաւութիւնը:

Ո՞վ սքանչելի ողորմութիւն իմ
ստեղծողիս, ո՞րչափ մեծ ես և
անպատմելի՝ դեպի ի դարձի եկող

մեղաւորները . թէ որ իրենք ասոր
յարդը գիտնային , ի՞նչպէս ա-
մէնքը քու գիրկդ չէին վազեր :
Ուստի ես ալ կուզամ քու գիրկդ
կ'իշնամ , և կ'ուզեմ հոն մնալ
յաւիտեան : Գ.թա ոզորմէ՝ Առ-
տուած իմ , խեղչ հոգւոյս , զոր
գուն ես սաւզձեր , նայէ իր վրայ
Երբե 'ի գործ ձեռաց քոց , և իրբե
'ի գին Երկրպագելի քու սուրբ
արեանդ . հանե խալքսէ սասա-
նային ձեռքէն քու ոչխարդ , զորնէ
որ մարթել կ'ուզեր . քու մեծու-
թիւնդ ցըցուր ինձի ներելովդ .
Ոչ դադարեցայց՝ օրհնել զոզոր-
մութիւնս քո , և Երգեցից քեզ
գովութիւնս 'ի կեանս իմ : Ե՞րբ
պիտի ըլլայ որ կարենամ յաւի-
տեան քեզ փառաբանել յԵրկինս .
Զոզորմութիւնս քո տէր յաւի-
տեան օրհնեցից երգով :

Ազէկ մոտածէ ով մեղաւոր . Առ-
տուած պատրաստ կեցեր է որ կը
հրաւիրէ զբեզ մասնակից ըլլալիր

ողորմութեանցը . ի՞նչպէս կարելի
է . որ շուզենաս իրեն առաջ քու
սիրադ . Երբոր ինքը բոլորովին իր
գլուխթեան գուռը բացեր է քեզի ,
ու սիրով իրեն կը հրաւիրէ :

Պատճառնեա :

[Եօս տարիներս մեծ իշխան մը
իր ետքի հիւանդութեան առե
նը՝ ծանր փորձութիւն մը քաշեց
թերահաւատելով Աստուծոյ ո-
զորմութեանը վրայ : Քովինները կը
յորդորէին յուսալ յԱստուծ .
իսկ անիկա կը պնդէր թէ Ալինծի
փրկութիւն չկայ , ես գատապար-
տուած եմ : Աստուծոյ քահանան՝
որ վերջի առենները քովը կեցեր
էր , ամէն հետրքը ձեռք առաւ ,
որ յորդորէ զինքը ազաւինիլ ու
վստահանալ Աստուծոյ մարդասի-
րութեանը վրայ , շատ յորդորան-
քով , արցունիք թափելով և ազ-

թելով, բայց շահ մը չէր ըներ՝ իշ-
խանին հոգին շահելու համար, որ
ստոկալի վախի մը մէջ բռնուեր էր:
Բայց եռքը եռքը՝ Աստուած որ
փրկել կ'ուղէր անոր հոգին, քա-
հանային բերանը դրաւ Դաւթի
այն մսիթարական և զօրաւոր խօս-
քը. Տէր, քաւեա զմեղս իմ, զի
բազում եղեն յոյժ: Ուստի ըստ
հոգեվարքին. Պարոն, մտիկ գիր
ասկաշխարող մարդարեին. դունալ
անոր պէս մեղաւոր մըն ես. ուստի
բոլոր սրբանց անոր հետ ըսէ. Տէր,
դթա ինձի պէս մեղաւորին վրայ
որ շատ մեղաց տէր եմ, ու ծանր
ծանր մեղաց. որովհետեւ Եթէ իմ
մեղերս մեծ են՝ նոյն իմ մեղերուս
մեծ ու ծանր ըլլալն ալ ըլլայ քեզի:
շարժիչ՝ որ ստիպուիս թողութիւն-
տալ ինձի: Աս խոսքովս իշխանը
ինքնիրեն եկաւ՝ ինչպէս թէ խոր
թմբութէ մը արթընեալով. սիրալ
բոլորովին շարժեցաւ, ու քիչ մը
եռքը՝ ի խորոց սրբեւ հառաշելով

ըսաւ քահանային բարձր ձայնով .
ինծի համար ըսուած են այն խօս
քերը . ուստի , ով Ասուած իմ .
զուն իմ վրաս սիստոր գիմաս . վասն
զի իմ մեղքերս մեծամեծ են , ահա
սպատճառ մը արժանի քու մեծու-
թեանդ . և որովհետեւ այսչափ
ծանր են իմ մեղքերս , այնչափ
կրնան մեծցընել ու զարմանալի
ցուցընել քու կարողութիւնդ , և
յաղթող՝ քու շնորհքդ :

Ան առեն մեծ վասահութիւն
առնելով Ասուածոյ մարգ ասիրու-
թեանը վրայ , ու սիրով մեծ ցա-
ռով շարժելով իր մեղքերուն վրայ .
խոստովանանքով խղճմանիքը մա-
քրեց , և ամէն վերջի խորհուրդ-
ները առաւ արտաքոյ կարդի ջեր-
մեռանդութեամբ . ուրախ սրտով
իր կեպնիքը զոհեց Ասուածոյ , և
աւեսնելով որ իր ետքի առենը կը
հասնի , խաչելութիւնը ձեռքը ա-
ռաւ , և ակար աչուցնելը անոր
վրայ անշարժ բռնելով , Յիսուսի

ձեռքը աւանդեցիր հոգին, և սուր-
բի մը պէս մեռաւ :

Աղեկ մտածէ ու միավոր դիր թէ
ողորմութիւնն Աստուծոյ աս վայր-
կենիս մէջ բացեր է իր գոգը :

Մտածէ ու Աստուծոյ մէկ միսի-
թարութիւն մը տուր քում ճշմա-
րիս դարձովզ : Մտածէ ու յափ-
տեան օրհնէ զոլեր աղեկ մտածէ
լուր համար : Վերջապէս նայէ որ
Աստուծ ողորմած է և բարի և
բարերար . բայց մի մոռնար բնա-
թէ արդար ալ է :

ԳԼՈՒԽ Ժ.

Աշուալուսունեան սիրտուն + և զգած
մուն + այն աւյին -ը խուլին ապէին ունից
Դաշտ եկեց է հասծելով այս սարսա-
քեւի ճշմարդութիւնները :

Ով մեղաւոր հոգի , ով ասկաշ
խարող անձ , որինքզինքդ Ճնշուած
կը տեսնես . քու պակառութիւննե-
րուդ բեռան տակը , ու կը հառա-
ցես տեսնելով քու անկարգու-
թիւններդ և չարիքներդ , Աստու-
ծոյ բարկութիւնը քեզ կը սպառ-
նայ , ու ամեն կերպով քու ետեղ
է՝ որ զքեզ իր բարկութեան տակը
Ճզմէ ու ՚ի կորուստ մասնէ : Արդ
աս աշխարհիս մեջ քեզի ուրիշ Ճար
շկայ , բայց միայն մեկ սպաստա-
նարան մը . ուրեմն Եկուր խաչին
սպքը ընկիր . հոս քու վշտալից
սիրուդ բաց , առջել զիր քու վեր-
քերդ , ու բժշկութիւն խնդրել յԱս-

առւծոյ որ ամենագթած տէր է, ու
աղեկ կը տեսնէ թէ որչափ է քու
վիրացդ խորութիւնը։ Հոս տեղու
բոլորովինզգածեալ արդարցաւով
ըստ իրեն սուրբ տալաշխարողին
հետք, որ է ձիչդ օրինակ ապաշ-
խարութեան։ Մեղայ յիրաւի Առ-
տուած իմ, մեծապէս մեղայ.
շատ տարիներ մեղօք անցուցի,
իրաւը կը խոստովանիմ. ուստի
կուլամ կ'ողբամ իմ ամէն մեղացս
վրայ. երանի թէ կարենայի ցաւե-
լով մեռնիլ այդ մեղքերը գործե-
լուս համար։ Վերջապէս քու աս-
տուածային լուսովդ լուսաւորեալ,
ու քու սաստիկ ազգու չնորհքովդ
շարժեալ, առ քեզ կը գառնամ,
ու պաղառելով կը խնդրեմ քու
անհուն ողորմութիւնդ. Ողորմեա-
ինձ Աստուած ըստ մեծի ողորմու-
թեան քում։

Դու վրկիչ իմ, որուն մեռնե-
լուդ ես պատճառ եղայ իմ մեղքե-
րովս, գու միայն ես որ քու ողոր-

մութեանդ առասութեամբը պի-
տի յարուցանես զիս 'ի շնորհս :
Ես չեմ կրնար իսկապէս ըմբռնել
իմ յանցանացս մեծութիւնը և
տգեզութիւնը . բայց կը հասկընամ
այնչափ՝ որչափ պէտք է ըմբռնել,
թէ հազար անգամ դժոխքի ար-
ժանի եղայ . Զանօրէնութիւնս իմ
ես ինձէն դիտեմ : Մեղքերս աչքիս
առջել միշտ կեցած են՝ որ վշտա-
ցրնեն և սկառըռտեն իմ սիրոս .
Եւ մեղք իմ առաջի իմ են յամե-
նայն ժամ : Մեղքայ , ու մեղքերովս
զքեզ դառնացուցի , զոր միայն պի-
տի պաշտեի ու սիրեի աշխարհքիս
թէջ . Քեզ միայն մեղայ , Աստուած
իմ . ան ալ քու աչքիդ առջել , և
ան ատենին որ դու քու շնորհ-
քովդ զիս կը հարստացրնեիր , ես
իստասիրաս զքեզ կ'անարգեի . Եւ
զար առաջի քո արարի :

Ով ցաւագնեալ և հոգեվարքը
հասած տէր իմ , ինձի համար և
իմ մեղքերուս համար չարչարուե-

շարու մեռար . քու սիրտով մտած
գեղարդը իմ սիրտս կը խոցէ դառ
նագոյն ցաւով , ինդրեմ շմերժես
առ բանս : Թէ որ ասանկ սիրտ
չունիմ , զուն իմ ներսս նորոգէ ,
և տուր ինձի սիրտ մը քեզի ար
ժամի . Սիրտ բեկեալ և խոնարհ :
Ով Աստուած իմ և փրկիչ , զուն
կը տեսնես իմ ամէն մեղացս տղե
զութիւնը . կ'աղաւեմ մէկտէզէ իմ
օդախս համար քու շնորհացդ բո
վանդակ դանձերը . փառաւորէ
քու ամենակարողութիւնդ , յաղ
թանակ կանգնել քու ովորմութեղ .
և ցըսուր ինձի պէս անբաւ մեղ
քի տեր մեղաւորին վրայ , թէ ի՞նչ
բաւէ անբաւ բարին Աստուած :
Թէ որ իմ կենացս զոհը կարենար
վճարք ընել քու արդարութեանդ ,
ամենայն սիրով կը նուիրէի քեզի .
ուր ես ասանկ շարաւար զոհեր
եմ իմ կեսանիս . աշխարհքի մեղ
քերուն . թէ կամեցեալ էիր , պա
տարագս մատուցանեի :

Ովզզումի եկած անձն, նուիրէ
խաշին սոքին տակը քու որտիզ
շարժմանիքը, քու փրկչիդ հետ
մեկ եղիր, որ քեզի նոր կեանիք
տալու համար իր կեանիքը զոհեց:
Ուստի ըսէ իրեն. Տէր ես կիմա-
նամ որ սիրոս վշաացած է մտա-
ծելով քու քաշածներդ, և իմ
մեղքերս. բայց ան առելի զիս կը
տանիջէ որ իմ սիրոս չափէ դուրս
ակար է՝ մեղքերս առելու ու լալու
համար. երանի թէ բոլոր մարդկանց
սիրոը ռւնենայի, և բոլոր սուրբ
ապաշխարողներուն արցունիքը՝ որ
քեզ նուիրէի: Տէր Նշանուած իմ.
նոր սիրոս մը ինձի ստեղծէ զքեզ
սիրելու համար: Ուր եր թէ ան-
սպառ աղբիւր արտասուաց ունե-
հայի. երջանիկ զիս կը սեպէի, թէ
որ տեսնէի թէ աչքերես հեղեղք
արտասուաց կը բիսեն, որ միացնէի
զասոնք քու սուրբ արեանդ հետ
որ հեղեղի սլէս թափեցիր: Ասյ
ինձի, ան ի՞նչ կեանիք եր որ ես

անցուցի : Թէ որ քու ոզորման
թիւնդ անհուն ըրլար , ես յու-
ահատութեան մէջ կ'ըյնայի . բայց
Աստուած իմ , շատ մեծամեծ ե-
ղան իմ հոգւոյս վերքերը . Եսու-
րիշ բան հիմա չեմ կրնար ընել .
բայց Եթէ զանոնք քու առջեղ
հանեմ , և անդադար աղաշեմ որ
բժշկես . գիտեմ որ ինչ բանի վրայ
լաւ կ'ըլլայ , անոր թողութիւն ալ
կրնայ ըլլալ : Ուստի որչափ որ
կեանք ունենամ՝ ախուվախ ընեմ
և լամ , ուրիշ բանի համար չտալրե-
լով միայն քու խայիդ ոտքին տակը
հառաշելու և լալու համար : Եր-
ջանիկ զիս կը սեպեմ թէ որ խա-
ցիդ ոտքին տակը սրտիս ցաւեն հո-
գիս աւանդեմ : Տուր ինձ Աս-
տուած իմ , որ ասկից եան բոլոր
կեանքս ուրիշ բան ըրլայ՝ հապա
անդադար հառաշանք մը . և եր-
կիրա ըլլայ ինձի արտասուաց հո-
վիս մը : Ես երկիրը շաղախներ եմ
իմ անօրենութեանցու աղտեղու-

թքը, երանի թէ կարենայի մաք-
րել իմ արիւնովս : Բայց առ բանը
սկզբը չէ . վասն զի քու ոռւրի ա-
րիւնդ է՝ որ ամէն բանը սլիտի որբէ-
հապա դու տէր լուա զիս , մաքրե-
և որբէ : Աս է՝ քու ողորմութեանդ
մեծ սքանչելիքը : Աս բանս սլիտի
քարոզեմ բոլոր մեզաւորներուն .
իմ օրինակս անանիկ շարժէ զիրենք
որ իրենք ալ խելուընին դլուինին
ժողվեն . և քարոզէ իրենց այն բա-
նը , որ կրնան ու պարարկան են
յուսալ քու անբառ բարերարու-
թենէդ : Աս կերպով ամէնքս իրար-
մէ աւելի ջանք ունենալով օրհնենք
դովենք յափառեան քու ողորմու-
թեանցդ մեծութիւնը , որ միշտ
վէր է քան մեր ամէն շարիքը :

Ով խաչ Աստաւծոյ իմոյ և եր-
կրպագելի փրկչիս . ևս կուզեմ
ապրիլ քու առքիդ քովը , և կը
յուսամ մռնիլ քու թեւրուդ
մէջը : Քանի որ իմ առ կեանքս
դիմանայ՝ դուն ըլլասս իմ օրինակս .

իմ կոթընելու տեղու . և մանաւանդ մահուանս առենը իմ յոյս և ապաւէնս :

Պատճառնիւն :

Սուրբ Վինչենցիոս Փեղերեան՝
իր առաքելական քարոզութեան
առենը հանգիստեցաւ մէկ մեծ մե-
ղաւորի , որ ինքզինքը տուած էր
ամէն անզգամութեան , անկար-
գութեան և չարագործութեան :
Սուրբը ցաւակցութիւն շարժե-
ցաւ տեսնելով զինքը անանկ ող-
բալի վիճակի մէջ , յորդորեց որ
աղեկ մամասայ իր հոգւոյն փրկու-
թեան և առ Աստուած դառնա-
լուն վրայ , կրթեց խրատեց , ու
սիրտ տուաւ . և ամէն հոգը ըրտ
անոր դարձին համար : Աստուծոյ
չնորհքն աւ յաջողեց իր ջանքը և
նախանձաւորութիւնը . ուստի այն
մեղաւորը գնաց ներկայացաւ սուրբ
առեանը ապաշխարութեան . ուր

ասոր սիրար խորունկ կերպով
մխուեցաւ կենդանի , գառն , խո-
րին ցաւ մը իրեն մեղացը վրայ ,
անանկ որ արժանի եղաւ շնորհաց
արձակման , և նոյն վայրկենին մէջ
հոգին աւանդեց սրբոյն ոտքին
առջել , որ ասսանկ եղական ճշմա-
րիտ դարձ մը տեսնելով արցունք
թափել սկսաւ : Տեսնենք թէ դու
ի՞նչ ցաւ ունեցեր ես ըրած անթիւ
մեղացդ վրայ :

Քանի անգամ որ խաչելութեան
մը վրայ կը նայիս՝ ջանա որ ասքա-
ներս միտքդ բերես : Նայէ թէ ի՞նչ
վիշտ է որ կը քաշէ Աստուածն
մարդացեալ , և ում համար կը քա-
շէ : Սիրելի ընթերցող , մի մոռնար
ամենեին իր խաչը , իր շնորհքը ու
քու մեղքերդ : Ծնորհք ինդրե-
յԱստուածոյ , որ մոտածես ու լաս-
քոլոր մեացած կենացդ մէջ աս քա-
ներուս վրայ :

Իրաւ է , հիմկուհիմայ զեռ խա-

չելութեան ոտքն ընկած ես , բայց
քիչ ատենէն Աստուծոյ արդարու-
թեան ատեանը պիտի երևնաս :
Ուրեմն ինչպէս որ մեղաւոր Եղած
ես նէ , պատրաստ Եղիր որ իրրե
ապաշխարող մը ներկայանաս իրեն :
Ո՛րչափ բարերար է Աստուծ , որ
քեզի ատեն կուտայ ապաշխարե-
լու . իսկ դուն ո՛րչափ յանցա-
ւոր կ'ըլլաս՝ թէ որ ատենգ չարա-
չար անցընես :

Մտածէ , սիրելի , բայց սոսկ մտա-
ծելի բաւական չէ . հասկա բա-
նեցուր Աստուծոյ սոււծ շնորհ -
քներն ալ , որպէս զի յաւիտենից
փրկութեան պտուղն ստանաս :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Աղաւնաբարութեան հարիսութեան :

ՄԵղքը քաւել պետք է ապաշ-
խարութեամբ , և միայն ապաշխա-
րութիւնն է որ կրնայ մեղքը քա-
ւել : Երկինք երթալու միայն եր-
կու ճամբայ կայ , անմեղութիւն և
ապաշխարութիւն . թէ որ անմե-
ղութիւնը նաւարեկեր է մեզօք ,
ուրիշ բան չմնար մեզի՝ բայց միայն
ապաշխարութեամբ փրկութեան
հասնիլ : Աս ալ երջանկութիւն
սիրով սեպենք , որ Առողուած մեզի
առեն կուտայ ապաշխարելու առ
աշխարհիս մէջ՝ որ անդին չմատ-
նուինք յաւիսենից տանիջանաց :

Պետքոս առաքեալը Հրեից հետ
խօսելով իսխա կենգանի կերպով
իրենց առջելը դրաւ այն ահազին
մեղքերնին՝ զորը բրերեն մասնելով
՚ի մահ զորդին Առողուածոյ Յիսուս .

զուրդն սրբոց . անանկ որ լսողները փշաքաղեցան , առհմբուկեցան , ու դառն արցունիքով ամէնիքը մէկէն սկսան գոչել . Զի՞նչ գործես ցուք արք Եղբարք : Պետքոս պատաժան տուաւ . Ասկաշաւեցէք , ապաշխարեցէք : Չէ նէ , եթէ ոչ ապաշխարիցէք , ամենէքին նոյն պէս կորնչիջիք , ինչպէս ըստ Տէրն :

Այն բանն որ Հրեաներուն ըստ սուրբն Պետքոս , մեզի ալ կըսէ թէ ապաշխարեցէք . մեզաւոր եզաք , պէտք է որ ապաշխարող ալ ըրաք : Առանց ապաշխարութեան մեզաց թողութիւն չէք գաներ . բնաւ ՚ի շնորհս չէք դառնար . Երկինքը բնաւ չէք մաներ , յաւիտեան թշուառ կը մնաք , դասապարտուած , անիծած : Ուրեմն ապաշխարեցէք , աս Համբան բռնեցին բոլոր սուրբերն ալ որ առաջ մեզաւոր եզած եին : Դաւթի մէյմը նայէ , որ միշտ աչքին առջևին

Էր իր մեղքը լալու համար : Մազ-
դաղենացւոյն նայէ , որ անմիտ
թար ցաւ կը քաշէր + սրբուհւոյն
Պեղագեայ ասպաշխարողին նայէ , որ
արցունքին մեջ ընկղմեր էր : Արքոյն
Օգոստինոսի նայէ , որ ախուվախ
կընէր իր կենաց բոլոր ատենը .
Նմանասպէս ուրիշ շատ սուրբ ա-
պաշխարողները , որ կեանիքերնին
անգագար դառն սրտի ցաւով ան-
ցուցին իրենց մեղացը համար . քա-
րոյրներու մեջ թաղուելով , որ
դրսէն ալ կը լսուեր հեծեծանաց
հառաջանիքնին : Դուն ալ որ ա-
նոնց նման , գուցէ անոնցմէ աւելի
ալ մեղաւոր ես , անոնց պէս ապաշ-
խարութիւն ըրէ . ապա թէ ոչ
վիճակդ յաւիտեան թշուառ կը-
լայ :

Դուցէ հարցրնես թէ ի՞նչ կերս
ապաշխարութիւն պիտի ըլլուի , որ
պէս զի Աստուած մեղքերնիս քա-
ւէ . ահա քեզի իր սուրբ նշան-
ները :

Ապաշխարութիւն պատրաստաւ կան . ուրիշ առենի մի ձգեր . վասն զի թէ որ այսօք կենդանի ես՝ գուցել վաղը կը մեռնիս :

Ապաշխարութիւն պարզ կամ անկեղծ . այսինքն սրտիդ մէջ ճըշմարիտ ցաւմը ունենաս զԱստուած վշտացրնելուդ համար : Մարդիկ դուրսը միայն կը տեսնեն , իսկ Աստուած կը թափանցէ ու կը տեսնէ զիսորս սրտից :

Ապաշխարութիւն խիստ ու անաշտա . որչափ աւելի ծանր եղած էն մեղքերը՝ այնչափ ճիշդ ու խիստ պէտք է ըլլայ ապաշխարանքը . որչափ որ շատ եղեր են , գիտնալով եղեր են . ու նոր նորանց իյնալով կրկնուեր են մեղքերը . այնչափ Երկայն և ճիշդ ապաշխարանք կը պահանջեն :

Ապաշխարութիւն հանրական . ամէն մեղքը թէ որ ըրեր ես , պէտք է որ ամէնը պատժես :

Ապաշխարութիւն մոքի , այնչափ

Համար խորհրդոցդ համար . ա-
պաշխարութիւն մարմնոյ , այնչափ
անկարգ բաղձանացդ համար . ա-
պաշխարութիւն մարմնոյ և զգայու-
թեանց , այնչափ անոնց չար կամ
քը ընելուդ համար : Բայորը մա-
լակոնած է յանցանքով , ուրեմն
բոլորը պէտք է լուացուի մաքրուի
ապաշխարութեամբ :

Ապաշխարութիւն համեմատ տե-
սակի և որակի մեղաց : Թէ որ բո-
լորովին ցնդած էս ողորմելաբար
աշխարհի մէջ , քեզ պատժէ որ-
շափ թող կուտայ վիճակիդ , առան-
ձին տեղ մը քաշուէ . թէ որ սիրադ
կապուած էր աշխարհի սորկին , ա-
ռատ առատ ողորմութիւններ ըրէ .
թէ որ գարշելի մեղքի մէջ ընկեր
էս , պաքով ծոմով զքեզ մաքրէ :

Արջապէս՝ ապաշխարութիւն
հաստատուն ու շարունակ , որ բո-
լոր կեանքիդ առենը դիմանայ ,
մէկ մահուշափ մեղք մը բաւական
էր տալ քեզի լալ ողբալ բովան .

դակ կենացդ մէջ . հապա ի՞նչ
ըսենք այնչափ ծանր մեղքերուդ :

Աղեկ մտածէ , վախեմ որ ին-
չուան հիմա աղեկ մը չես մտմտա-
ցեր : Մեր մեղքը անդագար կը
բողոքէ Աստուծոյ առջև . ջանա
որ քու հառաջանքիդ ու սրտիդ
ցաւոցը ձայնն ալ լսէ Աստուծ :

Թէ որ ասկաշխարութեանդ կրթու-
թիւնը քեզ գժուար ու տաժանելի
կ'երկնայ , միտքդ բեր Աստուծոյ
անբաւ մեծութիւնը՝ զորն որ դառ-
նացուցեր ես . միտքդ բեր քու
ըրած մեղքերուդ մեծութիւնն ալ .
հասկըցիր թէ ինչ խորունկ վերք
տուեր ես հոգւոյդ . հասկըցիր
այնչափ երկայն առենը՝ որ կորու-
սեր ես . որոճաւ այն անթիւ չնորհք-
ներն որ չարաչար բանեցուցեր
ես . իմացիր որ Յիսուսի Երկրապա-
գելի արիւնը ոտքի տակ առած ես .
գիտցիր անվրէսկ Աստուծոյ գա-
տառտանը , որուն տակը ընկած ես .
ամեն բանէ վեր՝ միտքդ բեր սար-

ասիելի յաւիտենական պատիմն՝
որուն արժանի եռ եղեր քու մեզ
քովդ : Գիտցիր որ մենք շատոնց
պէտք էր որ գժոխքը իյնայինք ա-
ռանց խալքութու յոյս մը ունե-
նալու՝ յաւիտենական յուսահա-
տութեամբ ու կատաղութեամբ :

Թէ որ ասանկ մեծ բաները մտմը-
տայինք և մտած էինք Աստուծոյ
առջեր կեցածի պէս, զիտե՞ս թէ
որչափ սիրով ասկաշխարութեան
հետ կը ըլլայինք :

Աս ալ գիտցիր որ եթէ ասկաշ-
խարութիւնը մեզի գժուար ու
ծանր երենայ, Աստուծ իր շնոր-
հօքը կը դիւրացընէ ու կ'անուշցը-
նէ . սիրո կուտայ ու կը զօրացընէ .
կը մաքրէ կը սրբէ ու կը փրկէ զմեզ :
Ասանկ փրկարար մտածութեամբ
ասկաշխարութեր որչափ ալ խիստ
ու ճիշդ ըլլայ՝ կամաց կամաց տա-
նելի կը ըլլայ, ետեւ ալ միսիթա-
րանք կը գտնենք : Ի՞նչ բաներ քը-
րին, ինչե՞ր չպաշեցին սուրբ ասկա-

խարողները . ի՞նչ բաներու շհամ-
բերեց մեր տէրն ու փրկիչը՝ և
գերահրաշ գաղափարը ապաշխա-
րողաց : Ուրեմն մենք մեզի գեմ
սրտոտ ըլլանք , վրէժինդիր ըլլանք
մեր անզգամութեցը որ ըրեր ենք
մեր ստեղծողին գեմ : Աւելլի լու է
որ անցաւոր և արդիւնաւոր նեղու-
թիւն մը քաշենք հռո տեղս . քան
թէ մասնուինք յաւիտենից պար-
ժոյն , որ պէտք է անդին յուսա-
հատարար քաշել :

Քեզ մամաս քանի որ անցաւոր
կեանքին մէջն ես : Իսկ թէ որ հի-
մա անհոգ ըլլաս ապաշխարանք
քաշելու , գուցէ վազը գտտապար-
տելոց հետ պարտաւորուիս որ
յաւիտեան պատժուիս :

Պատճեննեն :

Պանտիսս Լազարի անունով Ե-
րիստոսարդ մը իր կորձութեան
ստենը ինքզինքը տուելը եր ամէն

անզգ ամութեան, մոլութեան, գո-
ղութեան։ Երբոր Աստուած ասոր
սիրով շարժեց, ոկառ մամուալ
իր գործած շարիքը, և Աստուծոյ
ահեղդ աստատանին սպառնալիքը.
ուստի տուաւ զինքը կամաւ ամէն
կերալ խիստ ապաշխարութեան։
Ծաղկազարդի օրն ոք Եպիսկոպոսը
բոլոր Եկեղեցականները և ժողո-
վուրդը ժողվեր էր պատարագի
հանգիսին, աւետարան կարդալէն
ետե Եկաւ անցաւ Պանտիոս ամբո-
խին մէջէն՝ շապկանց, բոսկիկ ոտ-
քով, չուան վիզը մահապարտի մը
պէս, Եկաւ Եպիսկոպոսին առջելը.
ոորը ընկաւ, Թուղթ մը տուաւ
անոր ձեռքը, որուն մէջը զրած
էին իր ամէն մեղքերը, ու երդուըն-
ցընելով ազաշեց որ կարդալ տայրո-
լոր ժողովրդեան առջելը։ Կարգա-
լու ատենը՝ զաւազանով մը անզա-
դար ծեծել կուտար զինքը ու կը-
սէր։ Ամուր և անխնայ զարկեք
ինձի։ արցունքովն ալ զետինը կը

թըլքեր ու բարձր ձայնով կը կան-
չեր . Ես աս բոլոր մեղաց աէլին եմ,
և թողութիւն կը խնդրեմ յԱս-
տուծոյ և յամենայն մարդոյ : Աս
հանգեստ ամենուն սիրաը փողձկե-
ցուց , ու հետը կուլային : Երկրորդ
օրը Պոնտիոս իր ամեն ունեցածը
աղքատաց բաշխեց , ուրիշներուն
տալու պարտքն ալ վճարելով : Ան-
կից ետքը բոլորովին աշխարհէս
հրաժարեցաւ , ու զինքը խիստ ա-
պաշխարանքի տուաւ ինչուան ՚ի
մահ , ու սրբութեամբ մեռաւ :

Աղեկ մտմտա , մեղքէն ետքը ա-
պաշխարութիւն սկիտոր ըլլայ . չէ
նէ՝ առանց ապաշխարելու՝ ետեւն
գժոխք կուգայ :

Աստուծոյ ոչ կամի զմահ մեղա-
սորին , հապա անոր դարձը . ու-
րեմն դարձի եկուը՝ առանց ընաւ
ուշանալու :

Աստուծոյ շնորհակալ Եղիը որ
քեզի ապաշխարելու ատեն կու-

տայ , զոր շատին չէ տուեր : Աս-
տուած քեզնէ շպահանջեր ոչ հրա-
պարակական և ոչ խիստ ասպաշխա-
րութիւն մը . հասկա զայն միայն
որ դուն քեզնէ ընես , դուն զքեզ
դատես քանի որ Աստուած զքեզ
իր ատեանը չէ կանչած :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հաստիքար հունիւն առ ընորհ :

Աղեկ մոտածէ , մեկ վայրկեան
մը շնորհաց կրնայ վաստրկիլ յաւի-
տենական ուրախութիւնը :

Թէպէտ և ընդհանրապէս խօսէ-
լով՝ իրաւ է այն խօսքը թէ ամէն
ժամանակ շնորհքի ատեն է , և
թէ շնորհքը ատենէն ու վայրկենէն
կախուած չէ , և թէ Աստուած
տէր ըլլալով և բաշխող իր պար-
զեացը՝ ոչ առթէ մը կը ստիպուի
և ոչ պարագայէ մը , բայց այսու ա-
մենայնիւ աս խօսքս ալ իրաւ է թէ
մեղի համար՝ և ոմանց համար մաս-
նաւորապէս՝ աւելի պատուական
ատեններ կան և աւելի օդտակար-
օրեր , որ Աստուած զմարդը ա-
ռանձին կերպով կը կանչէ , շնոր-
հաց լոյսը աւելի կը փայլի , մար-
դուն սիրալ աւելի կը շարժի Աս-

տուծոյ ածութեամբը , կարծես
թէ երկինքը աւելի սիրով մեր վրայ
կը նայի , ու իր առասութիւնը կը
ժափի , մեր շահուն համար : Ա
սոնք կը սույն կետ շնորհաց , Եր
ջանիկ և մասնաւոր պարագաներ .
առ կ'ուզէ խմացրնել Պօղոս առա
քեալն ալ այն խոսքովը . Ահաւա
սիկ ժամանակ ընդունելի , ահա
օր փրկութեան :

Ազեկ մամուս առ բանս ու քու
օգտիգ բանեցուր . վասն զի աւե
լի 'ի մասնաւորն իջնալով ու ազեկ
հասկրցընել ուզելով , ժամանակ
շնորհացքեզի համար են մասնաւոր
առիթներ , որովք կարծես թէ
Վասուած քու աչքիդ վարագոյլը
կը բանայ ու աւելի յայսնի կը ցու
ցընէ մեծամեծ ճշմարտութիւննե
րը , աշխարհիս ունայնութիւնը ,
փափկութեանց սոսութիր ու խա
բեռութիւնը , փառաց անսպաս
նութիւնները , կենաց կարձու
թիւնը , բոլորը աչքիդ առջել զնե-

լով պայծառ տեսութեամբ շնոր
հաց : Ծնորհաց ժամանակ Են քեզի
ներքին դրդմանիք պղտորած ու
խռաված խղճմանիքի . որ կը հաս
կրցընեւ մեզի , թէ չենք անանիկ
ինչպէս որ պետք էր մեզի ըլլու .
ու պետքը չեւ անանիկ ասլրիւ , և
ոչ մեսնիլ ասանիկ անշնորհք վիճա-
կի մէջ , հասպա պետք է խելա-
բերիւ , և առ Աստուած դառ-
նալ : Ծնորհքի ժամանակ է՝ մէկ
գօրաւոր քարոզ մը լսելը , մէկ հո-
գեշարժ բան մը կարդալը , մէկ
բարի օրինակ մը տեսնելը , մէկ գե-
ղեցիկ ազգարարութիւն մը . ուրիշ
առեն առ բանելու ասանիկ շարժիչ
չեին ըլլար , մէր սրախն շատ չեին
դալչեր . բայց այն երջանիկ վայր-
կենին մէջ բոլորը մեծ տպաւորու-
թիւն ու շարժում կուտան :

Ավ ի՞նչ բաեմ , շնորհքին առե-
նը կը լսայ մեզի մէկեն յանկարծա-
կան մահ մը , մէկ ախուր դիսկուած
մը , որ մենիք ալ ականատես Ենք :

Ասանկ միջոցին ի՞նչ կը մնայ որ
մենք մեղի քրսենք . ի՞նչ ողորմելի
բան է եղեր աս աշխարհքս . ա-
սանկ կեանքը կեանք է . ի՞նչ ենք
մենք աս երկրիս վրայ : Ընորհ
քի ատեն է մէկ տրամաւթիւն մը
ալ , խաչ մը , նուստառաւթիւն մը
քաշելը , մէկ ձախողութիւն մը
առուտրի , մէկ վառաւոր հիւան-
դութիւն մը . ատեն մարդո
ինքնիրեն կուգայ , երկրիս ամէն
բանին փուծըլլալը կ'իմանայ . ամէն
բան իրեն դառն կ'երենայ , ամէն
բանէն կը զզուի . ուրիշ միսիթա-
րանք չգտներ՝ բաց յԱստուծոյ :
Տեսար որ ասոնք են ահա ժամա-
նակ շնորհաց , ահաւասիկ օր փըր-
կութեան : Ասանկ եղան Աստու-
ծոյ ողորմաւթեամբը այն երջանիկ
վայրկեանները , որ այնչափ սուր-
բեր բանեցուցին մարդկանց մէջէն :
Գուցէ ինձի համար ժամանակ
շնորհաց է , աէր Աստուծ իմ , աս
վայրկեանս , յորում կը մտմասմաս

մեծ հշմարտութիւնը, և դուն կը
խօսիս իմ սրտիս մէջ, որ իս բոլո-
րովին քեզի քաշես :

Այս զի համար այնչափ շահաւոր
և հարկաւոր բան մը չկայ, ինչպէս
հաւատարիմ ըլլալ առ շնորհս :
Բաւական չէ առած շնորհքնիս
ճանաչնալը, հասկա բանը զանոնք
շահով բանեցընելն է, հոգեշահ
գրգմանց ետեւն երթալ, չոտա-
րացընել կամաւոր անհոգութը,
իրեն գեմ չգնել գիտնալով և կա-
մօք. և պարզապէս աշուշնիս չխփել
լոյս տեսած ատենիս. հասկա պէտք
է որ պատրաստ ըլլանք գռներնիս
բանալու Աստուծոյ՝ Երբոր կու-
գայ. մեր սիրալ զարնելու, և չարա-
մեցընել զհոգին սուրբ :

Փրկութե գործքը ամեն գործ-
քերուն պէս զլուխ կ'ելլէ, ամեն
բան իր ատենը ունի որ կատա-
րուի. և ամեն բանի յաջողութիւնը
կախուած է մասնաւոր յարմար
ատենեն. որն որ Եթե ձեռքերնեն

փախցընենք, մէյմ' ալ չդառնար .
ալ դուն նայէ թէ ասանկ անհո-
գութենին ի՞նչ մեծ վնաս կը հե-
տեի : Աղէկ մտածէ աս բաներս :

Երկու գլխաւոր ճշմարտութիւն
կայ ու հարկ է որ վրանին մտա-
ծենք : Սրբութեան ճամբուն մէջ
անանկ սպասուական և բարձր վի-
ճակ մը չկայ ուր չկարենայ հասնիլ
շնորհաց առիթը՝ Երբոր ինչպէս
՚ի պէտք է գործ դրուի , և ան-
զգամութեան ճամբուն մէջն ալ
չկայ անանկ ողբալի և գեշ վիճակ
մը , ուր չկարենայ հասնիլ մէր ան-
հոգութեր որ առած շնորհաց դեմ
կը բանեցրնենք : Չկարծենք թէ
Աստուծոյ շնորհը մեզի կը սպակ-
սի . չէ . Աստուծոյ շնորհը չպակ-
սիր , հասպա մէնք ամէն օր իր շնորհ-
քին առջև կը սպակսինք . չենք բա-
նեցրներ : Բան մը բաւմ որ բաւա-
կան է մեր սիրոը տակնուվայ
ընելու ու վախ ձգելու , այսինքն՝
առ շնորհի առիթներն որ ան-

Հոգութեամբ կը փախցինենք՝ Աստուծոյ դիտաւորութեանը կը հակառակին. վասն զի չարաշար դորձածելը՝ Աստուծոյ դէմ զնել է. խափանելմբն է մասնաւոր շնորհքը. ու աւելի գժուարացընել մեր դարձը. տրամեցնել է զհոգին սուրբ մեր սրաբին մէջ. մէկ խօսքով ասքանեն սկսել է հոգւոց կործանումը: Ուստի աղեկ մտածէ քու հոգւոյդ փրկութեան վրայ:

Ուրեմն ի՞նչ ընելիք ունիս դուն ասանեկ մեծ բանին մէջ:

Նախ մեծ բան սկսոր սեազես շնորհքը. յարդը դիտաս այն անդին վայրկենին որ քեզի ընդ առաջ կ'ելլէ:

Երկրորդ՝ բոլոր սրաբնց վախնաս սկսոր որ անոր դէմ չկայնիս ու չմերժես:

Երրորդ՝ անդադար Աստուծմէ թողութիւն խնդրես ասանեկ շնորհաց դէմ զնելուդ, ու խօսք սասս որ ասկէց եմն աւելի հաւատարիմը ըլլասս:

Չորրորդ՝ աղաջես զԱստուած
որ տայ քեզի աս աշխարհքիս մէջ
քաւել քու անհաւասարմութեղ
առ շնորհս :

Հինգերորդ՝ աղեկ աչքդ բանաս
մասնաւոր զրդմանց շնորհաց՝ որ
աւելի նշանաւոր և անգին են :

Վեցերորդ՝ միանդամայն ալ ա-
ղեկ նայիս որ գուն քու խելքովդ
չարժիս, ու չխարուիս առանձնա-
կան քու վախճաններուդ նայե-
լով. վասն զի սասանան կրնայ կեր-
պարանիլ 'ի հրեշտակ ըուսոյ, ու
քեզ մոլորցընել որ շխտակ ճամբան
չերթաս :

Ուստի Աստուծոյ հետ մէկ ըլ-
լանիք, հաւասարիմ ու առաքինի
ըլլանիք, որ ինիքն Աստուած մեր
ձեռքէն բռնե, առաջնորդէ և հա-
ցնե մեր փրկութեան նպաստակը :

Պարմանելիուն :

Ըստ մեծ օրինակ է մեր գիտա-
որութեան այն բանն որ աւետա-
րանը կը պատմէ Քը թառոսի տեառն
մերոյ վրայ , թէ մէկ անդամ մը
Երուսաղեմայ վրայ նայելով լա-
ցաւ . Տեսեալ զքաղաքն Ելաց ՚ի
վերայ նորա : Ով ողորմելի քաղաք ,
ըստ . Եթէ գիտեիր զիսաղաղու-
թիւն քո , թէ որ գիտնայիր , թէ
իմ մտքիս մշջ ուրչափ ողորմութիւն
և աղեկութիւն կայ քու վրադ ,
որչափ շնորհք կան քեզ սկատրաս-
տուած , քու թշնամիքդ պիտոր
վախնային , քու բնակիքդ քաղցր
խաղաղութիւն պիտոր վայրէին , դուն
պիտի պահէիր քու փառաւորու-
թիւնդ ու պայծառութիւնդ : Բայց
ով ապերախտ և անդամ քաղաք -
քանի՛ անդամ ուղեցի իմ զիրկս
ժողվել քու որդիքդ ինչպէս հաւը
իր ձագերը թեին տակը . իսկ գուն

միշտ գեմկեցար, չուղեցիր աև զիք
տալ իմ սիրոյ հրաւիրմանն . ուստի
ասկեց ետե քու թշնամիքդ չորս
դիդ սկառեն պաշարեն պիտոր .
անսպիտանացընեն զքեզ, ու քար
քարի վրայ չթողուն : Ինչու հա-
մար . • Փոխանակ զի ոչ ծանեար
զժամանակ այցելութեան քո :

Աս բաներս բոլոր կատարուե-
ցան . անանկ որ ինչուան հիմա Ե-
րուսաղեմայ աւերակները կը սոս-
կացընեն բոլոր աշխարհք թէ, աս
ի՞նչ վիճակի հասեր է :

Քանի քանի անձինք նոյն յան-
ցաւոր Երուսաղեմայ վիճակը ու-
նեցեր Են . վասն զի իրենց անդա-
դար չնորհաց գեմդնելովք՝ այնչափ
աւելի թշուառութեան հասած Են,
որ յաւիտեան թշուառ սլիտի մնան:

Ազէկ մտմտա , չնորհքը զմեզ կը
գրգէ . բանը հաւատարիմ մնայն
է . ո՞հ, որչափ մեծ թշուառութիւն
է չարաչար գործածել զնորհս :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՆԵՂԱԾԻՆ + Ն ՎԻՉ :

ՃՆԱՅԻԼ, ՆԵՂՈՆԾԻՆ ՔԱՇԵԼ,
մԵռՆԻԼ, աս է ամէն մարդու վի-
ճակը : Ի՞նչ է մեր բոլոր կԵանքը
Երկրիս վրայ, բայց եթէ շարու-
նակ բան քաշել : Դուն տառա-
պեալ անձն նեղութիւն կը քաշես,
շատ առեն է որ կը հԵծես կը հա-
ռաջես քու նեղութեանցդ բեռան
տակը, և ամէն ոտք փոխելուդ
ձանձրալի վիշտ մը գէմդ կ'Ելլէ :
Ճամբու մը վրայ կը քալես՝ ուրիս-
չեր ցանուած են . կԵրած հացդ
քրտինքով շաղուած է . որչափ օր
ունիս, այնչափ ալ դժբախտու-
թիւն կԵնացդ մէջ . Ճնողքդ քեզ
Երեսէ, կը ձգեն, բարեկամներդ
քեզ կը մատնեն, միտքդ դրած
բաներուն նԵրհակը կ'Ելլեն, օրերդ

կ'անցնին լի ցաւք և արտմութք .
ամեն բոսկէ կը տեսնես որ կ'եւել
նան քեզի գառնութեան գետեր .
որ հեղեղի պէս քեզ կը կոխեն .
կարծես թէ ուրիշ բանի համար
աշխարհք չես եկած , բայց եթէ
բան քաշելու : Գիտեմ որ կը քա-
շես , կը լսեմ քու ողբերդ ու հա-
ռաջանաց ձայներդ . ցաւակից եմ
քաշածիդ , սիրտս կը ճիշէ քու
ցաւդ . ցաւակից կը լլամ քեզի ոչ
այնչափ բան քաշելուդ համար ,
որչափ անոր համար որ չես գի-
տեր քաշածներէդ պատուզ մը հա-
նել միաքդ բերելով մեծամեծ միի
թարական բաները որ քու կրօնդ
քու խելքդ ալ առջեդ կը զնեն .
ուրեմն աղեկ մոտածէ . վիշտերուզ
համար կ'ողբաս . ախ , հասկա մեղ
քերուդ վրայ Երբ լացեր ես :

Դուն քու քաշածիդ կը գան-
դասիս . մէյմ'ալ նայէ քու մար-
գացեալ Աստուծոյդ վրայ , թէ
ինչը քաշեց քեզի համար . մէյմը

նայէ իր խաչը , արիւնիք , ցաւերը :
ու մասածէ քիչ մը թէ իրառունիք
ունիս լալու ողբայլու :

Դուն մեզք գործեցիր , ու մեզ-
քերուդ համար գժոխոց արժա-
նի եղար . թէ որ Աստուած ան-
ատենիք քեզ աշխարհքէ վերցը-
նէր , իրաւ չէ որ նոյն վայր-
կենին ՚ի հուրն յաւիտենից գլո-
րած ընկած կը լլայիր : Ուրեմն մեկ
քանի անցաւոր նեղութեան հա-
մար մի գանգը բախիր :

Դուն կը քաշես եղեր . սուրբե-
րը ինչե՞ր քաշեցին . անոնց ըրած
զոհերուն հետ համեմատութիւն
մը ունի՞ն քու վիշտերդ : Դուն ալ
կ'ուզես անոնց պէս սուրբ ըլլալ .
բայց անոնց հետ բան մը քաշել
չես ուզեր :

Վիշտեր կը քաշես նէ , ասոնց-
մով կրնաս մեղքերդ քաւել , Աս-
տուծոյ ողորմութեանը արժանի
ըլլալ ու երկինքը վաստվկիլ : Ո՛վ
կրնայ տարակուսիլ թէ աս քա-

շածներդ՝ Աստուծոյ դիտաւորու-
թեանը հայելով մէջմէկ շնորհք էն,
ան ալ՝ անգին շնորհք :

Միթե Երկինք Երթալու ուրիշ
ճամբայ կայ՝ առ խաչերեղ զուրս:
Բան կը քաշես նե, անհանգիստ
կը ըստաս կը ցաւիս, տրանջալու վոր
ձութիւն ալ կը զդաս . Ըայց առ
անհանգիստ ու նեղսիրս ըստալովդ
քու վիշտերդ կը թեթևանն . չես
հասկրնար որ ատով աւելի կը
սաստկացրնես . վարձքդ Աստուծոյ
առջե կը կորսնցրնես, և անարժան
կը ըերես ալ ուրիշ գմբազդու-
թիւններ ու ձախորդութիւններ :

Վերջապես՝ զուն որ կը քա-
շես Եղեր, չես ուզեր որ քիչ մը
նուեր ունենաս քուփրկչիդ խաչն
տաքին տակը գնելու : Հոն որ իր
սուրբ արիւնը կը տեսնես, մեծ
բանն է որ քու արցունիքդ ալ հետը
խառնուի :

Ով մեղաւորք, Եկեղեց Երթանք
բուն չարեաց բխած աւզը, մեր
սրտին մէջ մանենք ու տեսնենք,
ի՞նչ բանի արժանի ենք Եղեր մենք
Աստուծոյառջև: Դոնեւ մէկ անգամ
խոսառվանինք թէ մեր մեղքերն
են պատճառ մեր քաշածներուն.
Հեռու կենանք գանգատ ընելէն,
հեռու կենանք զԱստուծած մե-
ղադրելէն՝ թէ խիստ է իր իրկածը.
մեղադրելէն՝ թէ արարածք մեզի
կ'անիրաւին, ու կոյր բախտոր պատ-
ճառ դնելէն. մեզի դէմեւ մեր մե-
ղացը դէմ դարձընենք ամէն մեղա-
դրանիքը: ՄԵղքն է չարաչար լուց-
կիքը՝ որ Աստուծոյ բարկութիւնը,
և վրէժինդրութեան կրակը կը վա-
ռէ: ՄԵղքն է ան մահարեր թոյնը
որ Երկրիս վրայ տարածուելով
պատճառ եղաւ տառապանաց ոգ-
ւոյ, գառնութեան սրտի, բոլոր
տան խեղճութեան, Երկիրներու
կործանման և թագաւորութեանց
քայլքայելու: Աստուծած Երկրիս

վրայ ատեան մը կանգներ է վրեժ-
ինդրութեան. ուսկից գործ կ'ածե-
իր ահեղ դաստանաները մեղա-
ւորաց վրայ, կամ անկարգութիւն-
ները սկասուելու համար, կամ գայ.
Ծակզութիւնները խափանելու .
կամ սկասուիրազանցները 'ի պա-
տուիրանապահութիւն և յօրի-
նապահութի յորդորելու համար :

Ուստի մէյմը բաց աչքով նայինք
մեր նեղութեանցը վրայ, ու չը-
սենք հեթանոսաց ալէս՝ ինչպէս
հասարակօրէն կըսենք թէ զի-
պուած մըն էր, դժբախտութիւնն մը
է, մեր թշնամեաց չարութիւնն
նէ, մեր բախտէն է, կամ ասանկ
սիստի ըլլայ եղեր մեր թշուառ վի-
ճակէն. հապա վեր ելլենք, մեր
չարեաց սկիզբը սկրագտէնք. ատով
աղէկ կը հասկընանք թէ Աստուծոյ
ձեռքը արդարութեամբ սպառա-
զինեալ է մեր վրայ : Մէնք մեղան-
չեցինք ու իր սիրոը խոցեցինք .
մէնք իր օրէնքը մէկդի ձգեցինք .

ինքն ալ մեզ թող տուաւ , որ աս
թշուառութիւնները քաշենք . մենք
իր ողորմութիւնը արհամարհէ
ցինք , ինքն ալ զմեզ իր արդարու-
թեան անաշառութերը տակ ձգեց :
Մեր խեղճութիւնները քանի կ'եր
թան կը շատնան , վասն զի մեր
անզգամութիւններն ալ իրարու
վրայ կը բաղմապատկին : Օրէ օր
աւելի թշուառ կ'ըլլանք , վասն զի
օրէ օր ալ մենք գեշ կ'ըլլանք : Աս-
տածոյ սկատիմները դադրած չեն .
իր բարկութեան շտեմարանները
սկարպուած չեն , և իր ձեռքը միշտ
մեր վրայ բարձրացած է . Այլ
տակաւին ձեռն նորա բարձրա-
ցեալ է :

Կ'ուզենք որ մեր ողորմելութիւն-
ները դադրին , մեղքերէն հեռու
կենանք . լանք ողբանք մեր չարու-
թիւնները , խոնարհինք Ասու-
ծոյ ձեռաց ներքեւ . սկադնենք ան-
ձեռքը՝ որով մեզ կը ծեծե . ան ա-
տեն՝ երկինքն որ մեղք դեմ չար-

ժեր էր, կը հաշտուի, ամենաբրդար
վրեժինդրութիւնն Աստուծոյ՝ իր
բարկութեան թուրք ետ կը քաշէ.
ու խառնակ ամսկերն որ փայլակ-
ներ կայծակներ կը սպառնային
զմեզ գնացրնելու, անուշ ցօզ մը
կը փոխուին մեզ սուրբ ընելու:
Մեր մեծ միսիթարանքն ալ ան է
որ ինչպէս մեր մեղքերը իրենց հետ
բերին մեր գլուխը աս պատիժները
որ կը քաշենք, նոյն պատիժները
կը լլան ի քառութիւն մեր մեղա-
ցը, ու մեր փրկութեանը կ'օգտեն,
և մէկ օր մը կուտան մեղի վայլել
այն Երանելի խոստմունքը, որ խոս-
տացուած է անոնց՝ որ համբերու-
թեամբ կը քաշեն իրենց նեղու-
թիւնները. Երանի սղաւորաց:

Ահա քեզի գովելի մոտածմունք.
ներ, որով պիտի յանձն առնունք
սիրով մեր տառապանքները, թէ որ
քրիստոնեայ Ենք նէ:

Ապաշխարութեան մոքեր կը-
սեմ, վասն զի մեղաւոր ենք: Երաւ-

որ երջանիկ Ենք մենք, որ ունեցեր
Ենք մէկ միջոց մը քաւելու աս
կերպով մեր մեղքերը աս աշխարհ-
քիս մէջ, քան թէ հարկ ըլլար
յաւիտենական պատիժ քաշեւ
անդին :

Համբերութեան մոքեր կ'ըսեմ.
Աստուած ասանկուզերէ, ասկարձ
խօսքը ամէն բանը կը վճարէ . Աս-
տուած ասանկ կ'ուզէ ու թող
կուսայ: Ուրեմն փուռ կ'ըլլայ մեր
գանգատը, փուռ կ'ըլլայ մեր տըր-
տունջը, որովհետեւ ինչպէս կընանք
ամենակարող ձեռքը թօթվել, եր-
բոր Աստուած է՝ որ կը պատժէ
մեզի պէս մեղաւորները :

Վստահութեան մոքեր ալ կ'ը-
սեմ. վասն զի Աստուած վիշտ կօւ-
տայ մեզի մեր օգտին համար . ու
ինքն է՝ որ անով կը թեթևացնէ, կը
միմիթարէ և կը սրբէ պատիժնե-
րը : Մեր մարդացեալ Աստուածը
կամաւ քաշեց մեր մեղքերուն հա-
մար, մենք ալ կամաւ քաշենք ի՛ւ,

սիրոյն համար . Հիմակուընէ ցա-
նենիք արցունիքով , որսկէս զի մէկ օր
մը հնձենիք ուրախութեամբ . և
հաստատ գիտնանիք որ մէկ քանի-
տարի վորձանիքի ու պատերազմի
համար վարձք սվիտոր ըլլայ յափ-
տենական վառք և երանական
կեանիք :

Մտածենիք ու մսիթարուինիք
ասով մեր ամեն տառապանաց մէջ .
որովհետեւ գիտենիք որ մեր մեղքե-
րը շատ աւելի բանի արժանի են
քան զայն՝ որ կը քաշենիք :

Պատճառնիւն :

Կը պատմեն թէ Երբոր սուրբն
Պետրոս հալածանաց ատենը Հը-
ռովմ քաղքէն դուրս ելեր կը
փախչէր , գիմացր ելաւ Յիսուս
փրկիչն իր ծանր խաչովը . Պետրոս
հարցուց իրեն , թէ Տէր , ուր կ'եր-
թաս . Յիսուս ալ ըստ . Հռովմ
կ'երթամ որ նորէն խաչ ելլեմ քու

աեղդ , որովհետեւ դուն չես ուզել
ինծի համար խաչուիլ : Ամբացաւ
սուրբն Պէտրոս իր տկարութեանը
վրայ , և բոլոր սրբով ցաւելով
Հռովմ գարձաւ , և արժանի Եղաւ
խաչով մարտիրոսանալ 'ի վառս
երկնաւոր վարդապետին խրոյ :
ՄԵՆՔ որ Պէտրոսի տկարութեանը
հետեւող Եղանք նէ , Երբ պիտի ըլ-
լայ որ իր կորի Ճառաբինութեանն
ալ հետեւինք :

Ո՞հ , քանի անգամ Վրիստոս
նոյն բանը կրնար մեղի ալ ըսել .
Ես նորեն կ'երթամ ձեղի համար
մեռնելու , որովհետեւ դուք խաչեն
կը վասիչիք : Վասն զի մենք բան
մը քաշել չենք ուզեր , մէկ պղտիկ
միշտ մը վրանիս որ գայ , նոյն առեն
կը սկըսինք տրանջալ դանդըտիլ .
սոսկ նեղութեան անունը՝ սոսկ
մտածութիւնը մը սիրոք դող կը
ձգեւ . ան է արդեօք քրիստոնեայ ըլ-
լալը , և աշակերտ Աստուծոյ խաչի
վրայ մեռնողի : Աստուծած իմ , դուն

որ այնչափ բան քաշեցիր ինծի
համար, ինծի ալ քաշել սորվե-
ցուր. և օգնէ ինծի որ քաշեմ, ու
որբէ զիս իմ չարչարանկովս՝ քու
չարչարանացդ հետ միացնելով
ու սրբելով:

Ուրեմն աղեկ մամառանք, ու փո-
խանակ մեր քաշածին վրայ գան-
գըտելու՝ շնորհակալ ըլլանք Աս-
տուծոյ, որ մեզ միջոցներ կուտայ
մեր յանցանքները մաքրելու:

Ո՛վ բան քաշել չդիտեր, սիրել
ալ չգիտեր. ճշմարիտ սերը ուրիշ
բանով չճանցուիր, ինչտես դոհ
որտով բան քաշելով. Յս փրկիչն
խացը տնկեց Երկնից ճամբան մեզ
ցուցընելու համար. և կը ցուցընե-
զայն մարդկան՝ որպես զի տռաջ-
նորդէ յաւիտենից Երանութեան,
որուն վրան է աչքերնիս. Առանց
բան քաշելու սուրբերուն, մենծ
մասը հիմա դժոխիքը կ'ըլլային. շատ
գատապարուելներն ալ բան քա-

շած ըլլային նե՛ մեծամեծ սուր-
բեր եղած կ'ըլլային։ Ուրեմն ա-
ւելի լաւ է հիմա լալ ու ողբաշ՝ քան
թե մեզանչել. լաց հիմա ապաշխա-
րողներուն հետ, որպէս զի մէկ օր
մը Երանութիւնը վայելես ընտրե-
լոց հետ։

ԳԼՈՒԽ Ժ.Գ.

Յանահետ ՆԵՐԵԼ և ՍԵՐ + ՀԻՄԱ
ՆԵՐԻԱՆ :

Որովհետեւ վերջնոց մասնու-
թիւնը սկսած բանեցրնենք բարի
գործքելը ընելու համար, ահա ա-
ռնեց մէջ էական բանը ուշըն է, և
ներել մեր թշնամեաց : Քրիստոս
ուշըն մեր իր աստուածային հրա-
մանովը յայտնի ապսոլուեց մ.զի, որ
ներումն ասնիք մեր թշնամեաց, ու
սիրենք ու զիրենք քրիստոնեական
սիրով . ըստ այնմ. Այլ ես ասեմ
ձեզ, սիրեցեք զթշնամիս ձեր : Չեն
սկակսիր աշխարհիս վրայ չարաշար
իսուքեր ձեզ մոլորցընելու համար :
Աշխարհո որ միշտ հակառակ է
Քրիստոսի սկզբանցը՝ կըսէ ձեզի,
թէ վրեժինդիր եղիք . մոլեկան
կիրքը կամ ախտընոյնպէս իստացը
նելով ձեր սիրով՝ կըսէ թէ զրեժ

խնդրելու է : Անկարգ սովորութիւն
ալ օրենքեն դուրս ելլելով զբայ
կուտայ, թէ վրեժինդիրը ըլլալու է:
Բայց ես որ, կ'ըսէ Քրիստոս, ձեր
Աստուածն Էմ, ձեր թագաւորին
Էմ, ձեր տէրին Էմ, ձեր գլուխն Էմ,
իմանէծքիս սպառնալեօքն ալ, նե-
րեցէք, կ'ըսէմ ձեղի, աս ալ բա-
ւական չէ, հապա ձեր Ծշնամիքն
ալ սիրեցէք, և բարի արարէք ա-
տելեաց ձերոց, և այնոցիկ՝ որ
լլկենն զձեղ և հալածեն : Վեր-
ջապես կ'ըսէ . Եզերուք նմանողք,
կամ զի եղինք որդիք հօրն ձերոյ
երկնաւորի, որ զարեզակն իւր
ծագէ 'ի վերայ բարեաց և չարաց,
և ածէ անձրե 'ի վերայ արդարոց և
մեզաւորաց : Տեսակը Երկնաւոր
պատգամը, լուցի՞ր պատուելը՝
զոր կը դնէ քու Աստուածդ՝ պար-
տուորութեամբ յախտենից զա-
տասպարտութեան : Ուրեմն մտիկ
Դիր ու աղեկ մը մտմաս :

Ուստի ամենքնուուսպարտն է հաշ-

տուիլ թշնամոյն հետ, ան ալ ճըշ
մարիտ և սրտանց : Եւ աս հաշտու-
թիւնս՝ յայտնի ընել բարեկամուլ-
նշաններ տալով : Սիրել դարձեալ
մեր թշնամիները՝ անոնց աղեկու-
թիւնը ուզել և փափաքիլ : Իրենց
համար աղօթք ընենք, ու Աստու-
ծոյ առջե անոնց բարին ուզենք :
Ասիկայ էական բան մըն է՝ նոյն ա-
ւետարանին խօսքովք . Աղօթս ա-
րարէք՝ ի վերայ այնոցիկ որք լկենն
զձեզ և հալածեն :

Անտարակոյս աս բանս է օրինաց
պարտաւորութիւն, հարկաւորու-
թիւն, սրբութիւն, և կատարե-
լութիւն :

Անանկ մեծ պատուէր է, որ
Քրիստոսաւորին մեր յայտնիկերուով
և պարոք գնելով վրանիս՝ ըստ
Այլ ես առեմ ձեզ : Անանկ սոի-
պողական կերուով մ' ալ որ արեք
չմտած սլետք է հաշտուիք կ'ըսէ . Ա-
րեգակն 'ի վերայ բարեկութե ձերոյ
մի մոցէ : Անանկ սուրբ պատուէր

որ պատարագդ ալ թող կ'ըսէ՛ ի վե-
րայ սեզանոյ . Երթ նախ հաշտեաց
ընդ Եղբօր քում : Որ է ըսէլ , ա-
նանկ սուրբ պատուիրան է , որ ս-
ռանց ասիկակ կատարելու չես
կրնար մասնակից ըլլուլ սուրբ խոր-
հրդոց Եկեղեցւոյ . և Եթէ աս մի-
ճակին մէջ հաղորդուիս , սրբապլղ-
ծութիւ կ'ընես : Վ Երջասրէս անանկ
անանօրինելի պատուերմը , որ Եթէ
չկատարես , չես կրնար հայր մէր-
մըն ալ ըսէլ՝ առանց դատապար-
տելու ինքզինքդ , առանց անեծք
կարդալու դուն քեզի . չես մի ըսէր
ան տեղը . Թող մեզ զպարտիս մէր ,
որսրէս և մէք թողումք մէրոց պար-
տապանաց . ուստի թէ որ դուն չնե-
րես քու թշնամեացդ , կ'ըսէս Աս-
տուծոյ , թէ դուն ալ ինձի մի նե-
րեր : Նոյն է թէ ըսէիր . տէր .
զլխուս զարկ , վրէժ պահանջէ-
ինձմէ , քու բարկութիւնդ վրաս
թափէ , քու անեծքներդ վրասին-
ջեցուր , քու կայծակովդ իս կոր-

սընցուր : Ասանկ սարսափելի ա-
զօթքը Երբ ընել կ'ըլլայ . ամէն ահ-
դամ՝ Երբոր մէկը աղօթք կ'ընե՞ ա-
տելութիւն ունենալով ու վասփաք
վրէժխնդրութեան իր սրտին մէջ :
Վասն զի ապով դուն կը խնդրես
որ այն սկատի՛ սկատուհասներն՝ որ
կ'ուզեիր տեսնել թէ կը թափուին
քու թշնամոյդ վրայ , քու գլուխդ
իշնան : Մտածէ աս բաներս , սար-
սափէ դողալով :

Ճեզի կ'ըսեմ , դուք որ կ'աղա-
չէք՝ ձեր երկիաւոր հօրն որդիք
ըլլալ , ներեցէք ձեր թշնամինե-
րուն . ձեր ստեղծողն է ձեզի հրա-
մայողը : Միայն նայեցէք որ սկարզ
սրտով ներէք , ոխ մը՝ ատելութիւն
մը չպահէք բնաւ ձեր սրտին մէջ :

Նայեցէք որ ամենուն ներէք ,
մէկն ալ դուրս չհանելով . վասն զի
ամենքիս ալ սկարտական Ենք ի-
րարու ներէլու :

Նայեցէք որ շուտով և յօժար
սրտով ներէլք՝ առանց ըռովէ մը ու-

շացընելու, վախնալով որ յաջորդ
ըսպէին քըլլայ թէ մահը ձեր գըլ-
խուն հասնի:

Նայեցէք որ հաստատուն կեր-
պով ներեցք. անանեկ որ Աստուծոյ
ըրած զոհերնիդ յափառեան զո-
հուած ըլլայ:

Մէկ խօսքով, անանեկ ներեցէք՝
ինչպէս կ'ուզէք որ Աստուծած ձեզի
ներէ. այսպէս կը կատարեց օրէնքը,
այսպէս Աստուծոյ շնորհաց ար-
ժանի կըլլաք, այսպէս ձեր փըրկ-
չին հետեւող կ'ըլլաք, այսպէս կը
վաստրկիք արքայութեան փառքն
ու պատկը: Թէ որ աղէկ մասածէք,
ինչպէս կրնաք ասչափ գժուարու-
թիւն քաշել ուրիշի ներելու հա-
մար: Լաւ ու հաստատուն կեր-
պով մոքերնիդ դրէք որ Եթէ դուք
չուզէնաք ձեր եղբօրը ներել. բնա-
ներում չէք դոներ յԱստուծոյ:

Պատմութիւն :

Սուրբ Յովհաննես Գուալբեր-
տին Եղբայրը՝ իր թշնամոյն ձեռ-
քը իյնալով սպաննուեցաւ : Առեն
անցնելով Ետքը՝ օր մը սուրբն Յով-
հաննես Տամբու վրայ մարդասպա-
նին հանգիսկեցաւ անանկ տեղ մը,
որ ոչ ան և ոչ աս կրնային փախչել-
ուստի այն մարդասպանը հասկը-
ցաւ որ բանը գեշ է՝ անոր ոտքը
ընկաւ բազկատարած , ու ազա-
շեց Երդուընցելով . Խաչելեալ
փրկչին սիրոյն համար կեանքս ին-
ծի շնորհէ , ըստ : Գուալբերտին
սիրար շարժեցաւ , ներեց անոր ,
գրկեց սիրով . Ետքը գնաց ազօթք
ընելու խաչելութեան մը տռջեւ :
Նայէ Ետեւէն ինչ մեծ բարիք Եղաւ .
շուտով մը զինուորական զգեսար
ձգեց , աշխարհքէ հրաժարեցաւ ,
կրօնաւոր Եղաւ , ու հիմնադիր

Ալլումագրողայ կամ Հովանեսոր
ձոր ըստուած կարդին :

Տեսանք բարի օրինակը , տեսանք
ինչպէս կըլլայքրիստոնելին սիրութ :
Մտածէ ու տես թէ քու սիրադ ալ
ասանիկ է արդեօք : Կը ներեն գուն
ալ քու թշնամիներուզ ասանիկ
անկեղծ և ճշմարիս սիրով : Կը
սիրեն զընկերդ իբրև զանձն քո , ըն-
կերդ կը տեսնեն անանիկ . իբրև թէ
դժբիստոս տեսնայիր : Ուստի քըն-
նէ ու գտակ զբեզ Աստուծոյ առ-
ջել :

Ո՞վ քրիստոնեայք , մէկ հօր որ-
դիք ենք . սիրենք մէկզմէկ , սիրենք
յԱստուած և Աստուծոյ սիրոյն
համար սիրենք՝ անխարդախ , զոր-
ծոնեայ և հաստատուն սիրով .
սիրենք մէկզմէկ աս աշխարքիս մէջ ,
որպէս զի յաւիտեան անդին ա-
պրինք կատարեալ միութեամբ սի-
րոյ :

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱՆՀԱՅ ՊԱՐՎԵԾ ԵՐԵՆԻ ՂԱԽԵՐԱՆ
ՀՐԱՄԱ :

ՈՌՀԱՓԻ ՔԻչ Ե՞ն աս հարկաւոր
բանս մտածողները : Ծնողք իրենց
մէջ Աստուծոյ վոխանորդն Ե՞ն ի-
րենց զաւկըներուն վրայ : Ինչպէս
որ իրենք պատճառ եղեր Ե՞ն անոնց
աշխարհք դալուն , պարտըկան Ե՞ն
զանոնք արքայութեան արժանի
ընելու : Պզոի բան է անոնց մահ-
կանացու ու խեղճ կեանք մը տալը .
թէ որ չպատրաստեն զանոնք , ինչ
պէս որ պարտական Ե՞ն , յաւիտե-
նից կենաց հասնելու որ անոնց
գոյանալէն աւելի աղնիւ բան է .
չէ նէ՝ յանցաւոր կըլլան Աստու-
ծոյ առջեւ , և պատճառ կորստեան
իրենց ալ իրենց որդւոցն ալ : Եւ
ինչ թշուառութիւն կըլլար ծնո-
ղաց աս բանս , որ ուրիշ բանի

Համար զաւակ բերած յըլլան աշ-
խարհքս, բայց եթէ գժոխքին մէջ
դատապարտեալներ աւելցրնելու:
Եւ աս բանն է իսկապէս որ շա-
տերը պիտոր յանդիմաննեն իրենք
զիրենք, ու վախնան բոլորովին:
Ո՞րչափ ծնողք կան որ չէ թէ
միայն անհոգ են ազէկ կրթելու
իրենց զաւկրները, հապա իրենց
անկարգութեամբն ալ և վատթար
վարքով ան խեղչերուն չար օրի-
նակ կուտան, առիթ մեղաց և զայ-
թակղութեան կ'ըլլան: Ո՞հ, ի՞նչ
ըսեմ ասանկ շմտածող ու չցաւող
և անհոգ ծնողաց՝ զաւկրներուն
փրկութեան վրայ: Ասանկներուն
զաւկրները հազիւ կրտեսնեն մէկ
քանի դործ կրօնի և աստուած-
սկաշտութեան կամ բարեգործու-
թեան. անկեց գուրս բանի մը հոգ
տանիլ չկայ. ոչ Աստուծոյ ունե-
ցած պարագերնին հատուցանել
առաւօտ իրիկուն ազօթք ընել տա-
լով, ոչ սուրբ խորհուրդներու

ստեղ մօտենալ, և չպակսիլ Առ-
տուծոյ ծառայութենեն և 'ի
քրիստոնիւնկան պարագաց :

Բարկասիրու ու կատաղի ծնողը
կան որ չեն զիտեր խօսիլ առանց
կրտել զառնալու, առանց տահմըն.
կելու խօսքեր բերնեւ հանելու,
առանց վախցրնելու՝ տակնուվայ
ընելու բոլոր տունը : Աստուած՝
որ է Աստուած խաղաղութեան,
ի՞նչպէս կարենայ թագաւորել ա-
սանել սկզբորութեան ու խոսվու-
թեան մէջ :

Կան անկարդ և անհամեստ ծը-
նողը, որ իրենց անշնորհը կերպը
կանցընեն իրենց զաւկըներուն,
թող տալով որ անոնք տեսնեն ի-
րենց անկարդութիւնները: Ո՞րչափ
չոր օրինակ կը տրուի տղոց, որ ի-
րենցմէ զեստ 'ի վասթարութիւն
կ'երթան, ու ասանել զիւրաւ գեշ
տպաւորութիւն կ'առնեն, ու ա-
սա՞ կը տանիին ապականեալ ընու-
թեան ընթացքը :

Ագահ , արծաթառեր , շահաւ-
սեր և անիլուա ծնողք կան , որ ի-
րենց որդւովը տո ջեւ քերութիւնն
անյագութեւ մը տնկւոյ ու աշխար-
հիս բաներուն . ուրիշ բանի մեջ
չեն խօսիր բաց ՚ի մեծնութեն և շա-
հերէն ու անցաւ որ դանձ գիզելըն .
Ափսոս որ չեն հատկութար թե ա-
սով իրենց զաւկութարուն գլխուն
կը դիզեն Աստուծոյ բարկութեան
նետերը :

Կան քինախնդիր ծնողք՝ դառն
մաղձով լեցուն , որ իրենց տղոց
սիրուր կը լեզնեն . քինախնդրու-
թեան թոյնը , որ կ'առձի անոնց
սրաբն մէջ . Երբեմն ալ որդւոց
որդի և ցեղէ ՚ի ցեղ կ'անցնի .
որով անջնջելի կը մնայ անոնց մէջ
ոդի առելութեան և ոխակալու-
թեան իրենց հետեանքովը : Ասի՞նչ
թշուառ ժառանգութիւն է այն
դժբախտ զաւկութարուն համար :

Կը լսան Երբեմն ծնողք ամսա-
րիշոք , անհաւատք , անկորոնք , ո-

ըռնիք իրենց զաւկըներուն սիրաք
սկզբունքը բարեպաշտութեան և
կըօնի տնեկելու տեղը՝ կ'աւրեն ա-
նոնց աստուածապարդե շնորհք-
ներն ալ. այնչափ՝ որ կը մնան ա-
ռանց հաւատքի, օրենքի, խղճմը-
տանիքի, և առանց Աստուծոյ: Խեղչ
տղաք, որ ասանկ չար ծնողաց հան-
գիպեր են. վայրենի և բարբարոս
ծնողք, որ քան զայս աւելի ան-
դուժ և անողարմ չեին կրնարըլլալ:

Բայց վայ է այն ծնողաց, որ
իրենց զաւակացը ասանկ դայթա-
կղական օրինակներ տուած են.
Ե՞նչ սոսկալի համար սիմոնի տան
մէկ օր մը. Ե՞նչ սարսափելի դա-
տաստան սիմոնի ընէ անոնց Աս-
տուած: Ալ աղեկ չէր ըստ իմիք
այն տղոց որ օրօրոցի մէջ խղդուած
ըլլային, քանի թէ ասանկ դժոխք
իյնային:

Բարբարոս ազգերու համար
կը սկասմեն, թէ ծնողք իրենց
տղաքը զոհ կընէին չաստուա-

ծոց, և իրենց ձեռքովը կը մոր-
թէին անոնց սեղանին առջելը :
Իրաւ որ բարբարոս էին այդ ազ-
գելը, բայց քրիստոնէ անուն ու-
նեցող ծնողք աւելի անդութ ան-
ողորմ չեն, Երբոր չար օրինա-
կով սատանայի կը զոհեն իրենց
որդիքը, և այնչափ զոհեր կը պա-
տրաստեն՝ որ Երթան յաւիտեան
այրին դժոխի մէջ :

Աս ի՞նչ սոսկալի բան է՝ որ ա-
նանկ ծնողք գտնուին որ իրենց
անօրեն կենօքը մշյմեկ դահիճ ըլ-
լան իրենց զաւկըներուն, աւելի
անինայ քան զուրիշ դահիճները,
որ սոսկ ժամանակաւոր կեանքը
կը բառնան, իսկ անզգամ ծնողք
իրենց զաւկըներուն անմահական
և Երանելի կեանքը կը վերցընեն .
ուր որ պարտական էին զանոնք
շակելու :

Բայց ան աւելի սոսկալի է, որ
Երբ ասանկ զաւկըներ գտնուին
իրենց ծնողաց յանցանքովը դա-

տասպարտուած, յաւիտեան զա-
նոնք սիմափ տառեն, գարշին, անփ-
ծանեն նզովլեն, որ պատճառ եղեր
Են իրենց կորստեանը :

Ո՞ւչափ ծնողք դժոխք գացեր են
անոր համար որ աս բաները չեն
մամուացեր: Ձեզի կ'ըսեմ ծնողք,
դիացեք որ դուք պարարկան էք
զանոնք աղեկ մեծցրնել ու կըր-
թել, խրառել, անոնց բարի օրի-
նակ տալ, ու ձեր վիճակին և կա-
րողութեանը համեմատ աղեկ տեղ
մը տեղաւորցրնել. ասոնք ձեր
պարագերն Են: Աղեկ մամուացեք
ու կատարեցեք. ապա թէ ոչ, ձեր
յաւիտենական կորուսոր յայտնի-
է. դուցէ այլոց զաւկըներուն կո-
րուսոն ալ, որ ձեզի հետ զանոնք
ալ դժոխքը կը քաշեք՝ ուր յաւի-
տեան մեկզմեկ անիծանեք, և իրա-
լու առեջանիքն ալ սաստկացրնեք,
թշուառութիւնն ալ՝ յուսահա-
տութիւնն ալ աւելցընեք:

Պատմութիւն :

Հեղի Հրեից քահանայասկետը
Երկու զաւակ ուներ , որ իրենց
անկարգութեամբը , անիրաւութե,
և անզգամութեամբ անպատիւ կը
եմն իրենց սուրբ պաշտօնը , ու
բոլոր Խրայելի ազգին գայթա-
կղութիւն եմն ու զանգատելու
պատճառ : Խրաւ որ իրենց հայրը
զասոնք շատ անգամ խրատեր էր ,
բայց վախկառ սրբով , և անոնց
զիջանելով պարսաւելի կակղու-
թեամբ , և չուներ սիրու մը և
կործութիւն մը անոնց դեղ մը
ընելու : Ինչուան որ Աստուած
սրբովելով ասանկ բանի վրայ՝ Սա-
մուել մարդարեմն ձեռքովը աղ-
գեց Հեղիք , որ շատ շերթար
անանկ ծանր պատիւթ զլազնուն-
կը բերէ որ բոլոր լսողները սար-
սամին : Անանկ ալ եղաւ . մեծ
կոիւ բացուեցաւ Խրայելացւոց

ու Փղտացւոց մէջ . ան առեն Աս-
տուած իր վրէժինդրութը ցրցուց .
Հրէիցմէ Երեսուն հազար մարդ ըն-
կաւ , տասկանակը թշնամեաց ձեռ-
քը անցաւ . Ովնի և Փենե հեզ չե-
զեայ որդիքն ալ ընկած մեռած
գոնուեցան՝ իրենց արեանը մէջ
թաթխած : Աս բօթը անոնց հօրը¹
հասաւ նէ , ան ալ արտամութենէն
խկոյն ընկաւ մեռաւ , գլուխը
պատռած , ուղեղը դետինը ցնդած :
Ասանկ մէկ օրուան մէջ վհճացաւ
այն Երեւլի տունը՝ ի պատիժ մեղա-
դրելի վախկոսութ ծնողին , և դայ .
Թակզական վարուց իր որդւոցը :

Ո՛վ հարք և մարք , աղեկ միաք
առեկ աս բաներս , ու ձեր զաւկը .
ները կրթեցեք աղեկ մամալու :

Մէկ սաստիկ հալած մունքի մը ա-
ռեն . ի ճագոն ընդդեմ ուղղափառ
հաւասքի ; մէկ հայր մը՝ ու մէկ
մայր մը քրիստոնեայք . ամէն օր
կը սպառեին թէ իրենք ալ պիտոր

մարտիրոսանան , և ջերմեռանդ
աղօթքով կը պատրաստուէին : Ա-
սնիք մէկ նորահաս որդի մը ունէին ,
որուն համար մ.ձ հոգ կ'ընէին :
Օր մը կրակի քով նստած՝ աս բա-
նիս վրայ կը խօսէին՝ ըսելով . ՄԵՆՔ
կը յուսանք որ Աստուծոյ շնորհ-
քով համբերենք մարտիրոսութե-
վասն հաւատոց , բայց աս փա-
փուկ տղին գլխուն ի՞նչ կուգայ .
կրնայ սիրո ընել որ տանջանք-
ները քաշե . չէ նէ թշուառու-
թեան մը պիտի հանդիպի հաւատ-
քը ուրանալով : Տղան կ'երենալ
թէ ինքնիրեն կը խաղար , ու անոնց
խօսքին ուշ չեր դներ , ձեռքն ալ
մէկ Երկար մը կրակին մէջ կը
տաքցըներ . որ Երբոր կարմրցաւ
կրակի պէս , գուրս քաշեց , ու
կարիք անվախութեամբ մը իր ձեռ-
քին դպրցուց : Աս բանիս ձնող
քը սակենուվրայ եղան , ըսին թէ
ի՞նչ կ'ընես , ի՞նչո՞ւ ատանկ բան
ըրեր : Տղան համարձակ ըստ

կորի ճկերպով մը . Անոր համար որ
յայտնի ցուցընեմ ձեզի թէ Աս
տուծոյ օգնութելը այնչափ սիրա
պիտի ունենամ որ հերիք ըլլայ՝
ձեզի հետ մարտիրոսութիւն քաշե
լու՝ քան թէ հաւատքես ելլելու :
Հիացան ափշեցան ծնողքը , ու
սրտանց . ողջագուրեցին զինքը ,
և ուրախութենէն սկսան լալ և
փառք տալ Աստոծոյ որ իրենց
ատանկ զաւակ տուեր է : Եսքը
իրեքն ալ արժանի Եղան մար
տիրոսութեան պսակին : Աս ի՞նչ
դեղեցիկ փոխարեն է աղեկ զաս
տիարակութեան , որ տուեր էին
առ սիրելի զաւկին իր իմաստուն
ծնողքը , և հոգեոր յառաջադի
մութեան՝ զոր քաղեր էր այդ
ողան անոնց ինամօրկութենէն :

Ակզբուհք աստուած պաշտու
թեան երբեմն աւելի կենդանի և
տաքուկ կը ըլլան հաւատքի նոր ե
կածներուն մեջ՝ քան թէ ուրիշ

քրիստոնեաց : Առաքելական քարոզութեամբ դարձածներուն մէջը մէկ քրիստոնեայ տուն մը կար՝ քան զուրիշները զարմանալի : Հայրու մայր սուրբ կեանք մը ունեին, սոսկ իրենց պարտքին ու վիճակին հոգ ունենալով, և իրենց փրկութեանը : Ամեկ օր հոգեոր և ջերմեանդ բան կը կարդային առ բանիս համար մէկտեղ ժողվուած ընտանեացը : Ասոնց մէկ տղան՝ գեռ հինգ վեց տարեկան՝ Քրիստոսի չարչարանիքները լսելով՝ անանկ սիրուը վառուեցաւ Յիսուսի հետեւլու ու անոր սիրոյն բան մը քաշելու, որ ամէն օր կ'երթար կը քալէր Եղիշներու վրայ բռնիկ ոսքով ինչուան սկսեր արունուիլ . ասկից 'ի զատ սկսակ մըն ալ շիներ եր սուր սուր վշերէ, որ գիշերները եր երեսի բարձին վրայ կը դներ, ու ան բարձին վրայ գլուխը կը հանգչեցըներ Յնի պատուոյն համար . աս որ իմացան ծնողքը :

արգելեցին . միանգամայն հասկը^{ցան} որ Աստուած ան տղուն վրայ
մասնաւոր բան մը կը դիմէ : Ա
նահել ալ տեսան . վասն զի տղան
շափաւոր ատենն որ հասաւ , եկե-
զեցական կարդ մտաւ , քահանայ
եղաւ , ու առաքելական քարոզու-
թիւն կըներ . և շատ հրաշքներ
ալ ըրաւ . և վերջապէս ասանկ
սուրբ վարքով կեանքը լինցուց :
Ասկից մեծ միսիթարական մտածու-
թիւններ կ'ելլէ . Երանի այն ծնո-
ղաց՝ որ կրնան առ Տամրան բռնել :

ԳԼՈՒԽ ԺԵ

Չառիչներուն պարզուց առ ծնողս :

Ինչպէս ծնողք սկարտքեր ունին
առ որդիս, նմանապէս զաւկըներն
ալ սկարտքեր ունին առ ծնողս, և
պէտք է որ մեծ վախ ունենան
երբոր իրենց սկարտքէն սկակսին :

Սուրբ գիրքն ալ յայտնապէս
կը սկասուիրէ թէ ի՞նչպէս զաւկը-
ները պիտի կատարեն իրենց ծնո-
ղաց ունեցած պարտքերը: Անոնցմէ
առած են իրենց կեանքը, որ բնու-
թեան բոլոր բարիքներուն առջինն
ու մեծն է: Ի՞նչ փոյթ սիրոյ և
շնորհակալութեան պիտի ցուցը-
նեն իրենց ծնողացը: Այսու առե-
նայնիւ ինչեր ալ չեն քաշեր խեղչ
ծնողք իրենց զաւկըներուն համար:
Չառակ որ կը լլայ, երջանիկ զի-
րենք կը կարծեն, և կը միսիթա-
րուին. թէ որ կարենային առա-

ջուց գիտնալ՝ թէ Եռքը ի՞նչ բան
սկիսի ըլլային անոնք, ուրախա-
նալու տեղինչ խորունկ սրախ հա-
ռաջանքներ չենին ընելը, և ի՞նչ
արցունքներ չենին թափեր անոնց
օրորոցին վկայ :

Կան խօսք չհասկըցող զաւկըներ,
որք կը պակսին հնազանդութիւն և
հպատակութիւն ընելէն . անոնց
կամքեն ասպատամբ են, ոտքի տակ
կ'առնեն անոնց հրամանը, իրենք
զիրենք ծնողացմէ անկախ կը սե-
պէնի, որ Աստուծոյ օրենքը սահ-
մաներ է :

Կան դատարկապորտ որդիք,
աշխատանքէ մախոչող, պարա-
պորդութեան զիրենք տուած, և
անպիտան և ինքնազլուի, որ բան
մը չեն ուղեր սորմիլ ու ընել, թէ-
պէտ և ծնողքը իրենց քրտինքովը
դանելու են ասպրուստ մը :

Կան որդիք ցոփակեացք, որ
տմէն մոլութեան մէջ մալակոնած
են, անկարոդութեանց և ախախց .

անսպատիւ կը հեն զիրենք ալ իրենց
ծնողքն ալ, և իրենց անսահնձ կենօ-
քը վասնդի կը մէջ դնեն իրենք
զիրենք, և ետքերնին աւելի դեշ
կըլլայ:

Կան որդիք ազատութեան եամե-
րիկած որ ոչ բարեպաշտութիւն
զիրեն, ոչ կրօն, և ոչ Աստուծոյ
վախը, վատթար ընկերներու կա-
պուած, որ զիրենք դիւրաւ կրնան
մոլորդինել, և ամէն անկարգու-
թեան և թշուառութեան խորիս-
րատը ձգել. վասն զի ո՞ր չարեաց
մէջ չկրնար իյնալ ան մարդը որ
կռնակ բարձուցեր է Աստուծոյ
գեմ:

Կան որդիք ապերախտք, բիրոք,
բնութեան գեմ կռուողք, որ
չեն յանձն առնուր ծնողաց պի-
տոյքը ճարել անոնց ծերութեան
առենք, իւղձութեան առենն ալ
երեսէ կը ձգեն, որ նեղութիւն
կարօտութիւն քաշեն, ու յաւօք
և արտմութեամբ անցընեն մնա-

ցած օրերնին, որ քանի զմեռնիլը
դժուար բան է :

Արդ ասանկ անշնորհք անզգամ-
ները, որ ձնողաց ձեռքով աշ-
խարհք եկեր են, զաւանկ պիտի
ըսուխն թէ ցուցանիք : Ծնողըը
կարծէին թէ անոնցմէ գույժ և
միսիթարանիք պիտոր գտնեն իրենց
կենացը մէջ, ու իրենց կռնակ պի-
տի ունենան ծերութեան ատեն-
նին . բայց տեսան որ իժ են եզեր
իրենց որովայնը պատրուտող, և
թշուառացրնող իրենց կեանքը,
մախող իրենց գոլքը, նախատինիք
իրենց տանը . անանկ որ իրենց ան-
կարգութեամբը և վատթար վար-
քովը՝ կերպով մը կը ստիպեն-
ցաւագին ձնողըը, որ յուստհաս
մնացեր են, սոսկալի անէծքներ
թափել անոնց վրայ : Երաւ որ զէշ
է աս բանս, բայց խորք զիսորս
կարդան : Ուրիշ բան ալ չկայ՝ որ
այնչափ գրդուէ զաւկըներուն վրայ
Աստուծոյ բարկութիւնը և անէծ-

ՔԸ. ինչպէս ծնողաց սկատիւը պակ-
սեցընելլը : Առ բանս շատ տեղ
սպառնացեր է Աստուած . և ի՞նչ
սոսկալի սկատիմներ չեն եղած
ամէն առեն , ամէն զինակի և ամէն
հասակի մէջ , որ ամէն աշխարհը
սարսափեր է անանկ սոսկալի սկա-
տուհասներնեն :

Երանի՛ բարի ծնողաց , որ իրենց
արժանաւոր զաւակ ունեցեր են ,
վասն զի զանոնք քրիստոնէաբար
մեծցընելէն եաբը՝ վերջապէս կը
քաղեն անոնց անոյշ սկտուզը իրենց
հանգիստ ծերութե առենը , և կը
տեսնեն զիրենք որպէս թէ վերը-
սին ծներ են իրենց զաւկըներուն
վրայ , որ իրենց ուրախութիւն և
մսիթարութիւն են :

Դաւիթ մարդարէն գեղեցիկ կը
նկարագրէ աղէկ տունը . կը ձևացը-
նէ թէ աղէկ կարգով նստեր են մէկ
բարելից սեղան մը ուր կարծես
թէ հրեշտակներն ալ կը կանչուին՝
որ ուրախանալով տեսնեն ասանկ

տեսիլ մը: Աս տունս Եղողներն Են,
նախ մէկ հայր մը՝ որ աչքը ուրիշ
բանի չէ, բայց ազէկ ծառայէ.
Աստուծոյ, ու տեսնէ որ իր տանը
մէջ ազէկ ծառայութե կ'ըլլայ Աս-
տուծոյ. հետն ալ անոր կինը, որ
աշխարհիս վրայ ուրիշ ուրախու-
թիւն չնայիր, բայց միայն հաճոյ
ըլլալ Աստուծոյ ու իր Երկանը,
և տեսնել որ չնորհօք և իմաս-
տութեամբ կը մէծնան իր զաւկը-
ներն, ու իրենց մէջ մէկ սիրու՝ մէկ
հոգի Են. միշտ միացած Են մէկ
սիրուն համաձայնութեամբ մտաց
և կարծեաց, որ առաջ Եկած է՝ ի
բնութենեն և՝ իբարի կրթութենեն,
և օրէ օր իրենց հասակին հետ կ'ա-
ճի: Ուստի ասանկ տան մէջ կը
թագաւորէ խաղաղութիւն, հան-
գալոտութիւն, միաբանութիւն -
միանդամայն և բարեպաշտութիւն
և սուրբ Երկիւղն Աստուծոյ: Ա
սանկ տան վրայ անձրւի պէս կիջ-
նան բիւր օրհնութիւնք, զոր Աս-

տուած իրենց պատրաստեր է . զոր
պիտի վայլեն Երկինքը միաբան ,
ու բնաւ իրարմէ շբաժնուին :

Ո՞վ զաւակք և ծնողք , աս բա-
ներս աղէկ մտմտացէք . ձեր տունը
ըլլայ պատկեր մը արքայութեան ,
և անոր օրինակովը ձևանայ ու գե-
ղեցիկ կարգաւորած ըլլայ :

Աստուծոյ առաստ օրհնութեան
արժանի ըլլալու համար՝ զաւկը-
ները պէտք է որ կատարեն իրենց
պարտաւորութիւնը իրենց ծնո-
ղացը : Պարտքերնին է պատիւ և
պատկառանք , հնազանդութիւն ,
սեր , Երախտագիտութիւն , պիտա-
նաւորութեան ստեննին ալ պէտք
Եղած օգնութիւնն ալ ընել : Ասանկ
որ ընեն նէ , կ'ըլլան նաև Աս-
տուծոյ որդիք , և անկից իրենց
հատուցումը կ'առնուն :

Պատմութիւն :

Չարագործ և անզգամ մարդ

մը զաւակ մը ունեցեր եր իրեն
պէս անզգամ: Երկուքն ալ ամէն
մոլութեանց տէր՝ օրէ օր գէպ ՚ի
գէշը կ'երթային: Տղան անհնա-
զանդ, անխրատ, բարկասիրտ,
կատաղի. ամէն օր իրարու հետ
կռիւ ոլլ՛, մէկմէկու անեծք կար-
դալով կ'անցընելին: Հայրը տարիքն
առած՝ մէկ օր մը ոկտաւ յանդի-
մանել զտղան իր գէշ վարքին հա-
մար, ան անցյամն ալ կատղեցաւ,
հայրը տակն առաւ, գետինը ձգեց,
մաղէն բռնեց, տանդղէն վար գլո-
րեց որ տնեն դուրս ընէ: Ան ա-
ռեն թշուառական հայրը ձայնը
վերցուց, և տղուն ըստ. Կեցիր
կեցիր, ես որ քու տարիքդ եի,
իմ հայրս չարչըկելով ասկից աւելի
հեռու չտարի: Ասով իմացուեցաւ
Աստուծոյ արդար վրեժինդրու-
թիւնն, որ թող տուեր եր որ-
պէս զի իր հօրը ըրածը իր զաւկէն
գտնէ:

Ի՞նչպէս սոսկալի և ահաւոր է

Աստուծոյ արդարութիւնը : Իայց
դուք անզգամ որդիք ո՞րչափ ծանր
յանցաւոր էք . նայեցէք որ ձեր
ծիովքէն պատկառիք , որչափ ալ
անշնորհք ըլլան : Իրաւ որ ասանկ
անկարգութիւններ՝ սոսկ բիրտ
և կոսիտ մարդկանց մէջ կ'ըլլան ,
բայց աւելի աղնուական քաղա-
քացւոց մէջն ալ թէալէտ և ա-
սանկ անճոռնի բաներ չըլլան ,
քանի քանի անկարգութիւնք կ'ըլ-
լուին , որ թէ և մարդկան աչքին
թէթէ երևնան՝ գուցէ Աստուծոյ
աչքին առջև ասկից պակաս ծանր
չեն գանուիր :

Զեզի կ'ըսէմ զաւկըներ , ձեզ
աղէկ մամացէք . Աստուծոյ զա-
տաստանը ձեզի կը սովասէ : Առ
բանիս վայ մէկ ուրիշ դիպուած
մըն ալ սլատմէմ : Մէկ հայր մը բան
չեր թողուցէր որ չըներ իր զաւա-
կը աղէկ կրթելու՝ բարի օրինակով ,
աղէկ իրասաներով . իսկ որդին գէշ
ընութեան տէր էր , ամէն մոլու-

թիւն ուներ . ուստի ամէն օր ցաւ
կուտար հօրը սրտին նոր նոր ան-
կարգութիւններովք : Եսքը իմա-
ցաւ հայրը՝ որ աղան զինքը սպան-
նելու միտք ունի , որ իր ժառան-
գութիւնը առնու և ինքնազլուխ
ասլի՛ : Ան առեն խորունկ ցաւ
զգալով ուզեց վերջի փորձը ընել
իր անզգամ աղին սիրար կակրագը-
նելու . ուստի օր մը ըստաւ ասոր .
Եկու աղաս , Ելլենքքիչ մը մէկ տեղ
քալենք . ասով ինծի հաճոյական
բան մը կ'ընես : Ան ար , խիստ ա-
ղեկ ըստաւ . դուցէ միտքը դրաւ թէ
ասով իր չար դիտաւորութիւնը
դիւրաւ առաջ կարենայ տանիլ .
հայրը առաւ զասիկայ՝ կամաց կա-
մաց առաջ տարաւ , ինչուան որ
անտառի մը մէջ մոտան . հոն տե-
ղը կանկ առաւ , դարձաւ տղին՝
ըստաւ . Որդեակ իմ , իմացայ ստոյդ
որ զիս սպաննել կ'ուզես . ես որ-
շամի ցաւ ունենամ քու վրադ ,
միւս իմ զաւակս ես , ու զբեզ կը

սիրեմ. ուստի ուզեցի իմ սիրոյս
վերջի նշանը քեզի ցուցընել. քեզ
բերի հոս հեռու տեղ աս ան-
տառս, ուր վկայ մը չունինք, ու
քու ընելիք անօրէնութիւնդ մարդ
չկրնար խմանալ: Հանեց թուր մըն
ալ որ ծածուկ պահեր էր. Առ
որդի, ըստու, աս թուրս, և ու-
զածդ ըրէ. կատարէ քու անօ-
րէնխորհուրդ, զարկ զիս մեռցուր,
ինչպէս որ միոքդ դրեր ես. որ
գոնէ ասանկ անբնակ տեղ մեռնե-
լով՝ զբէզ գատառորներու ձեռքէ
խալլսէմ. աս ըլլայ վերջին ցոյց
իմ հայրական սիրոյս, ու իմ ետքի
ցաւոցս մէջ գոնէ աս մսիթարանքս
ունենամ որ քու կեանիքդ պահե-
ցի, երբոր դուն զիս կը մեռցինէիր:
Ան ատեն տղան տակնուժրայ ե-
ղաւ, սիրոյը այլայլեցաւ, սկսաւ
հառացէլ ու լալ, իր հօրը ոտքը
ընկաւ, հազար անդամն թողու-
թիւն ինդրեց իր անզգամութեւ-
ու երգութնցաւ Արտուծոյ առջե-

անկեւ Ետքը իր վարքը փոխելու ,
և իր տմարդութիւնը ձգելու առանձի
սիրական հօրը դեմ . Խօսքին վրայ
ալ կեցաւ , և Եղաւ Ետքը իր հօրը
այնչափ մեծ մխիթարյութիւն , որ
չափ առաջ անոր սրաբին տրամաւ
թիւն ու ցաւ Եղեր Եր : Աս պատ-
ճռեթենես ի՞նչ աղեկ օրինակիներ
կրնան առնուլ հարք ու զաւկըներ :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Արդածոյ ուրբ ուն զերտ է ու ԹԱ
Հասձևնու :

ՄԵՆՔ ուրիշ բանի համար չենք
եկած աս աշխարհքս, բայց միայն
զԱստուած սիրելու և Աստուծոյ
ծառայելու . ինքն է տուեր մեզի
անանեկ սիրումը, որ կրնայ իր տոեղ
ծողը սիրել, ու բոլորովին Աստու-
ծոյ նուիրել իր ամէն յօժարու-
թիւնը, ինքը կեանք տուեր է մեզի
և ժամանակ՝ իր սիրոյն ծախելու
մեր բոլոր սերը, որպէս զի ար-
ժանի ըլլանք զինքը հոս սիրել և
անդին վայելել :

Աստուած յայտնի պատուիրեր
է որ զինքը սիրենք, ըսելով. Սի-
րեցէս զաւեր Աստուած քո յամե-
նայն որուէ, քումմէ, յամենայն ան-
ձնէ, քումմէ և յամենայն զօրու-
թէ քումմէ : Ուր իրաւամբք կ'ազա-

զակե սուրբն Օգոստինոս . Միթէ
հաղթէ էր , Աստուած իմ , որ մեզի
ապասպէս զքեղ սիրելու , ու ըս-
պառնաս՝ թէ որ չսիրենք . բաւա-
կան չեր որ մեզի թողուիր , որ քեղ
սիրենք . և միթէ քեղ սիրելը՝ մեզի
մեծ շնորհք և երջանկութիւն չեր :

Աստուած արժանի է մեր ան-
բաւ սիրոյն : Այն ամենայն բանի՝
որ մեր սիրաը կրնայ շարժել , իրեն
քաշել ու զուարձացրնել , արդէն
ինքն Աստուած ունի , և մեր առ-
ջեր կը դնել . իր ծայրագոյն բա-
րութիւնը , իր անսպասմելի գե-
ղեցկութիւնը , իր անսահման ո-
ղորմութիւնը , իր անբաւելի սիրե-
լութիւնը , իր ամեն կերպ կատա-
րելութիւնը , և անհասնում աղ-
բիւրը ամենայն բարեաց , ի՞նչ բան
կրնայ ինքը բաղձալ , որ չգտնուի
յաստուածութեան իւրում , և ու
չբռնագատէ զմեղ զինքը սիրելու :

Ով սէր աստուածային , սիրելի
առաքինութիւն՝ վասն զի ամեն

զուարժութիւնը մեզ կը ցուցինեւ .
գերազանց առաքինութիւնն , վասն
զի մեզ մեզնեւ վեր կը վերցնեւ և
մասնակից կ'ընեւ երկնաւոր խմա-
ցականութեան հրեշտակաց . ընդ-
հանրական առաքինութիւնն , վասն
զի զայլ ամենայն առաքինութիւնն
կը պարունակեւ , անոնք ալ կ'ազ-
նուացրնեւ ու կը կասարելագոր-
ծեւ . Երկնային առաքինութիւնն ,
վասն զի Փրիստոս փրկիչն մեր ե-
կաւ , որ Երկընքեն մեզի բերեւ առ
սուրբ կրակը . կը փափաքի ալ որ
ասով վառուի բորբոքի մեր սիրալ-
աստուածային առաքինութիւնն ,
վասն զի կերպով մը կ'առնեւ կը աս-
նի զմեզ բուն Սասուծոյ գողը .
որ կենդանի ըլլանք իր կենօքը
քանի որ կ'ապրինք , ու առենով
մասնակից ըլլանք իրեն բուն Երա-
նութեանը . Վերջապէս՝ անանկ
առաքինութիւնն է , որ բացարձա-
կապէս , էապէս , և ամեն կերպով
հարկաւոր է յաւիտենական փըր .

կութեան համար : Վասն զի զԱս-
տուած որ չսիրենք , հեռի Ենք 'ի
նորա շնորհաց , 'ի սրտեն և յար-
քայութենեն :

Երբոր զԱստուած չսիրենք , թէ
և ամէն բարիք , ամէն դանձ , թագ ,
դաւազան ու զբովանդակ աշխարհ
տոացած ըլլանք , սակայն տռանց
սիրոյն Աստուծոյ բան մը չենք
վաստրիիր : Թէ որ զԱստուած չսի-
րենք , Երկինք չենք մաներ , և սրբոց
հետ մասն ու բաժին չունինք :
ԶԱստուած որ չսիրենք , ուրիշ
բան չենք Ժառանգեր , բայց Եթէ
զգժոխս և զթշուառ յաւիտեան
յանդունդս թշուառութեանց , ա-
խուվախի : և տանջանաց :

Աղեկդիացիր որ կամ զԱստուած
սիրել պէտք է առ կեանքիս մէջ .
կամ միշտ թշուառ ըլլալ անդին ,
կամ պէտք է վառուիլ բոցով սի-
րոյն Աստուծոյ Երկրիս վրայ , կամ
միշտ այրիլ բոցով վրեժինդրու-
թեան գժոխիքի կրակին մէջ : Առ

Երկուքես դուրս ուրիշ բան չկայ
մեղի . թէ որ ասլրինք ու մեռ
նինք 'ի սերն Աստուծոյ, ասլահու
վարար կը ժառանգենք յաւիտեան
ամեն բարիք . թէ որ առանց այս
սուրբ սիրոյն ասլրինք ու մեռնինք,
ինքզինքնիս ամենայն թշուառու
թեանց խորը կը ձգենք :

Ո՛րշափ մարդիկ որ կանք աշ-
խարհքիս վրայ և քանի որ կ'ա-
սլրինք, պէտք է զԱստուծ սի-
րենք . որ է մեր արարիքը և փրկիքը .
մեր թագաւորը, մեր հայրը, մեր
մէկ հասիկ բարեկամը, և մեր ա-
մէն բանը . անկէր դուրս ամեն բան
փուծ է, և 'ի սալառ ոչինչ : Սի-
րենք զԱստուծ, վասն զի մեր
պարաքն է, մեր վարձքն է, մեր
Երջանկութիւնն է և մեր փառքը :
ԶԱստուծ սիրելին աւելի ի՞նչ
մեծ բան կրնայ ըլլալ . ի՞նչ Երջա-
նիկ միջակ կայ բան սիրելի ըլլալ
Աստուծոյ :

Սիրենք զԱստուծ բոլոր ոլլ-

տանց : Ո՞վ կայ կամ ի՞նչ կայ որ
մեր սրտին ամէն յօժարութեանցը
արժանի ըլլոյ , Եթէ ոչ ան՝ որ է
մեր առջի սկիզբը , և ան սպիտոր ըլ-
լոյ մեր վերջին վախճանը :

Սիրենք զԱստուած յամենայնի .
ամէն բանեն առաջ , ամէն բանէ
վեր , նախասպատիւ ընելով զինքը
քան զամէն բան : Սիրենք զԱս-
տուած , և շսիրենք Աստուծմէ զատ-
որիշ բան , կամ ամէնքը յԱս-
տուած , բայց միշտ Աստուծմէ վար :
Սիրենք զԱստուած , և սիրելով
զինքը՝ ուրիշ վարձք շփնտուենք .
բայց միայն եւելք միշտ զինքը սի-
րել :

Իրաւ որ Երանի՛ է ան սրտին որ
իր սաեղծողը կը սիրէ . վասն զի ա-
սով այն բանը կ'ընէ , ինչ որ կ'ը-
նեն սուրբերը յաւիտեան Երկին-
քը : Վայ այն անձին , որ զԱս-
տուած շսիրեր . վասն զի ասով
կը մօտենայ վիճակի դատասպար-
տելոց :

Տեր իմ և փրկիչ, շնորհը տուր
որ սիրեմ զքեզ, տուր որ զքեզ
սիրեմ Աստուած իմ. սրախո փա-
փաքը, իմ հանգիստ և իմ յոյսա :
Տուր ինձ որ զքեզ սիրեմ Աս-
տուած իմ. սիրեմ զքեզ հալող
մաշող սիրով մը, պարզ և անկեղծ
սիրով, դործունեայ և ազգու սի-
րով, անշահասեր սիրով, հասա-
տուն սիրով, ան սիրով որով դուն
զքեզ կը սիրես : Տուր որ քեզ սի-
րեմ աս աշխարհիս մէջ, որպէս
զի կարող ըլլամ աւելի կատարեալ
սիրով քեզ անդին սիրել յաւի-
տեան : Ազէկ մատձէ աս բանս ով
մարդ, սիրենք զԱստուած և կեն-
դանի ըլլանք և ապրինք Աստո-
ծով :

Պատմութիւն :

Առևնով Ազէքսանդրիա քաղա-
քին մէջ բարեպաշտ և աստուա-
ծասեր կին մը մէկ ձեռքը աման մը

ջուր առած, մէկալ ձեռքը վա-
ռած ջահ մը հրապարակը ելաւ:
Հարցուցին իրեն, թէ Ի՞նչ եր առ-
բանը . պատասխան տռաւ . Կ'ու-
զէի աս ջահովս վառել բոլոր եր-
կինքը, և աս ջուղս մարել դժոխ-
քին բոլոր կրակը, որպէս զի ասկից
ետքը բնաւ մէկը զԱստուած անոր
համար չսիրել յուսով հասուցման
կամ վախով պատժոց, հապա պար-
զապէս միայն իրեն համար, և իր
աստուածային իատարելութեցը
համար : Տես թէ ինչպէս աղեկ
հասկցելը եր թէ ինչ լսել է
Աստուած սիրելը, և թէ ինչպէս
կ'արժէ որ մեր սրբին բոլոր յօժա-
րութիւնը իրեն հետ միայն կա-
պէնք :

Ճափոնցոց համար կը պատ-
մեն թէ Երբոր աւետարանը կը քա-
րոզեին, ու կ'իմանային զմեծու-
թիւն և զգեղեցկութիւն, և զան-
բաւ սիրելութիւն Աստուածոց, մա-

նաւանդ Երբոր կը սորվէին քրիստոսական կրօնին մեծամեծ խորհուրդները, և ինչ որ Աստուած մարդուս ըրեր է, և թէ ինքն Աստուած մարդ Եղեր ծներ է, չարշարուեր ու մռեր է մարդկան սիրոյն և անոնց փրկութեանը համար, սկսան բորբոքեալ սրտովել լի ուրախութեամբ և հիացմամբ՝ որպէս թէ իրենցմէ դուրս ելլելով ազաղակել ու ըսել. Առ ի՞նչովէս մեծ բան է Եղեր քրիստոնէից Աստուածը, որչափ բարի և բարերար և սիրելի. ու Երբոր կը լսէին թէ մասնաւոր պատուեր կայ զԱստուած սիրելու, և սպառնալիք շնիրողին, շատ կը զարմանային, ու խելքէ դուրս կը սեպէին. Առ ի՞նչ է կըսէին, բանական մարդուինչ պատուեր ոկտօք պիտոր ըլլայ զԱստուած սիրելու, որ այս չափ սեր ցուցրցեր է մարդուս: Չ Աստուած սիրելն մեծ Երջանկութիւն կրնայ ըլլալ. զԱստուած

շսիրելէն ալ աւելի մեծ թշուա-
ռութիւն կրնայ ըլլալ : Բայց երբոր
կ'իմանային որ քրիստոնէից մէջն
ալ կան՝ որ չէ թէ միայն չեն սիրեր
զԱստուած, հասլա կ'անարդեն ալ,
կը սկսէին կրակ կորիւ բարկու-
թեամբ, ու մեծ ձայնով ըսել . Ո՛վ
անզգամ ժողովուրդ, ով բարբա-
րոս և ապերախտ սիրու . Ե՞նչպէս
կարելի է որ քրիստոնէայ մը գտնուի
ասանկ անկարդ և անօրէն . ո՞ր ա-
նիծեալ երկիրը կը ընակին ասանկ
բարասիրու մարդիկները :

Չեզի կ'ըսէմ ով քրիստոնէայ
Եղբարք, ամենայն իրաւամբք ար-
ժանի . Ենք մենք աս յանդիմանու-
թեանս . օր սփտի գայ՝ որ ան-
օտար ազգերը մեզի գէմ վկայ կան-
չուին, ամբաստանէն ու գատա-
պարտեն զմեզ Աստուծոյ առջեւ :

Մտածենք ու մտուընիս դնենք
թէ Աստուծոյ սէրը՝ առջի և
գոյացական բան է իրեն պատուի-

բանացը մէջ, և լրութիւ ամենայն
օրինաց :

Սիրենք զԱստուած բոլորով
սրտիւ, ինչ սիրով որ սիրեցին սուր-
բերը :

Ան է ցաւալին որ գուցէ ին-
չուան հիմա չենք սիրած զԱս-
տուած արժանապէս. ուրեմն գոնէ
մնացած կեանքերնիս նուիրենք
զԱստուած սիրելու :

ԳԼՈՒԽ ԺԵ

ԱՐԴԱՎԱՐԻՆ :

Աղեկ մասածէ թէ առ է մեր
երջանկութեան ծայրը . նայէ որ
առ ըլլայ քու բոլոր հարկաւոր
բանդ գործ :

Հասկրցրինելու համար թէ ի՞նչ
պէս անբաւ և անպատմիլի բան է
արքայութեան աղեկութիւն, պէտք
եր որ այն Երանեալ հոգիներէն
մէկը Երկնիքէն իշխար, ու պատմէր
անոր խելքէ դուրս սքանչելի ըլ-
լալը : Տես ի՞նչ կ'ըսէ սուրբն Պօ-
ղոս . Զոր ակն ոչ ետես, և ունկն
ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ
անկաւ, զոր պատրաստեաց Աս-
տուած սիրելեաց իւրոց :

Մեր խելքով նայինք թէ որ
կրնանք բան մը հասկընալ, թէ
որսիսի ուրախութիւն պիտի ու-
նենայ հոգի մը իր արքայութիւն

մասն օրը : Ո՞չ , ինչ վասփաքելի
վայրկեան սլիտի ըլլայ երբոր վեր-
ջանայ աս կեանքիս ողորմելու
թիւնը , ու սկսի այն յաւխենա
կան երջանկութիւնը : Ի՞նչ հա-
ճռեթիւն , ինչ զուարձութիւն ,
ինչ խելքէ վեր զմայլումն , երբ
վերջապէս տեսնէ հոգին զԱս-
տուած որ երբ տեսնէ թէ յա-
փական սպահով և իր երանելի
պիճակը :

Ո՞րչափ կ'ուրախանայ մէկ գերի-
մը՝ ասրիներով շղթան կապած ,
Երբոր տեսնէ որ իր ազատու-
թիւնը դառաւ , Ելաւ 'ի ցաւալի գե-
րութենէ : Ի՞նչովէս կ'ուրախանայ
բանտարկեալ մը որ շատ ատենէն
մատնուած ըլլայ խոր խաւարը՝
Երբոր վերջապէս լցու տեսնայ .
ինչ ուրախութիւն կ'ըլլայ ան մար-
դուն , որ աղեկոծեալ ծովու մէջ
Երկար առեն տանջուեր է , մէկ
դիէն ժայռեր , մէկալ դիէն մըրիկ .
որ շատ անգամ խոզուելու վտանգի .

Հասեր է , երբոր ետքը ետքը եր-
ջանկապէս հասնի , ի նաւահան-
գիստն , որուն այնչափ հառաջելով
կը սպասէր Երկար ատեն : Ասոնք
փուճումաւ օրինակներ են և շատ
անկատար Երեակայութիւն՝ այն
ուրախութեան առջե , այն միսի
թարութեան և Երջանկութեան
հոգւոյն , որ աս աշխարհքիս գե-
րութենէն ետքը , ցաւագին սղան-
դիսութենէ ետքը , և այնչափ տա-
ռապանք քաշելէն Ետե աս արտա-
սուաց հովհար թողու և մտնայ այն
փրկութեան նաւահանգիստը , յԵր-
կիրն կենդանեաց . և յաւիտեան
ասզրելու ընկերութեամբ ամենայն
սրբոց , կենօք Աստուծոյ կենդա-
նութեանը , որ է պատճառ իր
գոյանալուն , և լրումն իր ամեն
բազմանացը և կեդրոն իր հանգըն-
տեանը , առանց վախի մը մէյմալ
կորսրնցնելու , և ապահով միշտ և
յաւիտեան ժառանգելու , երա-
նեալ բուն Աստուծոյ երանութիւ :

Յիրաւի որչափ աղեկ որչափ
քաղցր կուգայ որ աշխարհքիս սիր-
որ չէ կապեր, հեռու գանուեր է
աշխարհքիս վտանգներէն, մասն
ու բաժին չէ ունեցեր աշխարհ-
քիս սուտ վայելներէն, հապա մէկ
քանի տարի մը, նեղութիւն քաշ-
լը յանձն առեր է, որպէս զի յա-
փուեան կատարեալ երջանկու-
թիւնը վայըլէ: Ի՞նչ անսպասմելի
մսիթարութիւն պիտի ըլլայ իրէն
որ Աստուծոյ ծառայեր է, առա-
քինութիւն դործեր է:

Ան առեն ի՞նչ կ'երևնայ իր աչ-
քին աս աշխարհքիս սուտ ուրա-
խութիւնները, անցաւոր բարիք-
ները . հարստութիւն ըսածդ .
փառք սպատիւ ըսածդ, զուար-
ճութիւն ըսածդ: Ի՞նչ կը սեպէ-
ան առեն աս բաներս . ի՞նչ ալ
իր ափը սիմառի մնար, թէ որ ատոնք
ալ վայըլած ըլլար նէ, և բոլոր
կեանքը ատոնց ծախած ըլլար:
Ե հարկէ մէկ օր մը զասոնք սիմառի

թողուր, և ուրիշ ի՞նչ բան պիտի
մնար իրեն, բայց զգջում մը թէ
ի՞նչպէս առանձիկ բաներու սիրոյն
զինքը մասներիւ :

Հիմա նայե՛ որ Արլահամու զո-
գը հանգչիլ կայ սրբոց հետ, որ է
ապահովութիւ յաւիտենական եր-
ջանկութեան, առանց վասնգի և
խեղճութեան և վախի և առա-
պանաց աս մահկանացու կենաց-
ահա ուղիսք մասիկութեան կը վա-
զե՞ն, անփոփոխ ժառանգութեամբ
ծայրագոյն բարիքներու, ընկդմե-
լով յանհուն ովկիանուն երկրագա-
գելի կատարելութեանց գերա-
գոյն էակին, խորը մանելով միշտ
և յաւիտեան իր ստեղծագին բա-
րութեան, գեղեցկութեան և
անչափ սիրելութեան : Չէ թէ
կատարուած է խոստուին Քրիս-
տոսի, մուտք յուրախութիւնն
քո . Հապա նոյն ուրախութիւնն
ալ իր ծառային սիրող և հոգին
մասն է : Ան է իր բոլոր կետիքը

կենդանի սլյատի ըլլայ և թաղաւորե-
ային ուրախութեան մէջ յաւի-
տեան , անանկ որ՝ հոն ոչ վովու-
խութիւն կայ ժամանակաց , ոչ
անսառոյգ դիպուածք , ոչ դառնու-
թիւն , և ոչ վախ մը բնաւ , որոնք
կարենան իր երջանեկութիւնը սլըդ-
ուրել : Քանի որ Աստուած՝ Աս-
տուած է , ընդ ամենայն յաւի-
տեանս , և ընդ ամենայն անվախ-
նան յաւիտենականութ՝ ինքը միշտ
նոյն կը մնայ , միշտ գոհ , միշտ ե-
րանելի , և միշտ ապահով և հան-
գիստ սրտով կը վայելէ իր երջա-
նիկ վիճակը . և կը գոչէ բոլոր
ընարելոց հետ . Գախ զոր սիրեաց
անձն իմ . զայ վերջապես իմ
բոլոր բաղձանքին նալսանակը :

Ահա ասանկ է ան երջանիկ հոգ-
ւոյն անձառելի երանութիւնը .
ասանկ բան է անսկառմելի ուրա-
խութիւնընարելոց յերկինս : Մենք
ալ նոյն երանութեան համար Ե-
ղած ենք . մենք ալ մէկ օր մը առ

ուրախութեանս մասնակից կը ը-
նանք ըլլալ . մեզնէ ամէն մէկը որո-
շեալ տեղ ունի Երկինքը . ամէնքս
հոն հրաւիրուեր Ենք , հոն կրնանք
համնիլ , դէպ՚ի հոն պէտք է հառա-
շենք փափաքանօք : Բայց հարկ է
որ արժանի ըլլանք արդեամբք :
Նայինք ուրեմն թէ մենք ի՞նչ ըրած
ունինք հիմա աս բանիս համար .
ի՞նչպէս և ի՞նչ բանով մեզ արժանի
ըրեր Ենք . աղէկ մտածեր Ենք .
զմեզ արժանաւոր կրնանք սե-
պել աս մեր վարքովք : Գիտենք
որ թափոր լւոր ելլել ըրպեր , թէ
որ առաջ Գոզգոթա լւոր չելլենք
նէ . ուստի հարկ է պատերազմի
համբերել՝ յաղթութիւն վասար-
կելու համար . հարկ է որ մենք
զմեզ բռնադատենք՝ որ Երկնաւոր
թագաւորութիւնը ձեռք ձգենք .
ի՞նչ աշխատանք քաշած ունինք
որ փառաց պսակին արժանի ըլ-
լանք , և որ տեղը կրնանք տեղաւո-
րուիլ սուրբերուն կարգին մէջ :

Կ'ուզե՞նք որ սրբոց Երջանկութել
հասնինք . զիտե՞նք թէ անոնք ին-
չե՞ր ըրին , ո՞րչափ բան քաշեցին .
մենք ի՞նչ ըրած ունինք , ի՞նչ բան
քաշեր ենք :

Այս , Երկնաւորդ Երուսաղեմ ,
արդեօք ևս ալ արժանի պիտի ըլ-
լամ մէկ օր մը քու ծոցդ մանալ :
Ո՞վ հոգիք սրբոց և ընտրեալք ,
ևս ալ մասնակից պիտոր ըլլամ
ձեր մասացը , և ձեր յաւիտենա
կան զուարձութեան : Աս մամուա-
ցէք ո՞վ քրիստոնեալք . մամուալէն
մի դադրիք , և մասնաւանդ աշխա-
տեցէք՝ որ հասնիք յաւիտենից Ե-
րանութեան : Քանինմը չմամուալ-
լուն համար գուրս մնան պիտի
յաւիտեան :

Պատճառին :

Արտաշէս Պարսից թագաւորը՝
Մուրթքէի հաւատարիմ ծառայ
ութել փոխարէն մը ընել ուզե-

Ըսմէ իր ալլքունի ծիրանին հագուեց
ցուց անոր , ամէն վայելուչ փառ
քով փառաւորեց , և իր թագաւոր
բական ջորւոյն վրայ հեծ ծցընել
տալով , Համան մեծ իշխանին պա-
տուիրեց որ բոլոր քաղքին մէջ
պալատցընել զինքը : Մարդիկ ալ
դրաւ որ Մուրթքէի տռջելն եր
թալով կը կանչելին թէ Արտաշէս
թագաւորէն փառաւորուած է աս
մարդը :

Թէ որ Աստուած կերպով մը
ցուցիներ մէզի արքայութեան մէջի
եղած երանելեաց մէկը՝ իր փառ-
քովը , ցուցիներ զարձեալ Երկնից
Շերկրութիւնը , միսիթարանիքը և
քաղցրութիւնը՝ զոր կը վայելեն
սուրբերը , և ըսէր մէզի թէ Ասանկ
կը փառաւորուի ան զոր կ'ու-
զէ փառաւորէլ Երկնաւոր արքայն .
մէսէք ու զարմացէք ով մարդիկ
թէ ինչպէս , կը փառաւորէ , և
կը վարձատրէ Աստուած իր սուր-
բերը . ատանկ որ տեսնայինք նէ ,
ինչպէս պիտի զարմանայինք :

Ամենէն առելի վաստակը մարդի
ու ասանել պիտի ըսէր . Ի՞նչ պիտի
ըլլայ աշխարհիս փուճ փառքը
և պատիւը այն փառաց և պա-
տույն առջե , որ պիտի արուի ըն-
տրելոցն Աստուծոյ : Ագահը պիտի
ըսէր . Ի՞նչ են բոլոր ապականացու-
բարիք , ի՞նչ են փուճ հարստու-
թիւնք երկրիս՝ այն անչափ գան-
ձուց առջե . զոր Աստուծ Եր-
կինքը պատրաստէր է : Փափկասէր
և հեշտասէր մարդը պիտի ըսէր .
Ի՞նչ են ան ամօթալի հեշտու-
թիւնք , խաբերայ անուշութիւնք ,
որ կը մոլորցընեն զմեզ անցաւոր
զուարձութեամբ , այն անպատմե-
լի փափկութեանց առջե : Աս ի՞նչ
տեսարան է , աս ի՞նչ անձառելի
հանդիսարան , որ խելք չհասնիր .
որ կը զանեցընէ մեզի բոլոր աշ-
խարհիքիս խաբերայ աչք խարող
բաները , և կուտայ մեզի յամենայն
սրտէ հառաջել և փափաքիլ հաս-
տատուն և մշտառե բարեաց անմա-

Հական վաստաց : Առ բանս որ մեր
աչքը հիմա չտեսնե՞ր , հաւատքը
մեզ կը ցուցընե՞ , կամ գոնե՞ յու-
սալ կուտայ :

Ուրեմն ամեն փոյթ և հոգ ու-
նենանք որ սուրբ վարքով արժա-
նի ընենք զմեզ անմահական կե-
նացք : Երկինք մեզի կը սպասեն ,
ուրեմն Երկրիս հետ կապուած
կեանք մը չվարենք . գիտենք որ
հսու մնացական քաղաք շունինք .
հապա մեր հայրենիքը Երկինքն է :

Մտածենք ,ու անանկ մտածենք
որ բան վաստղկինք : Երանի անոր
որ բոլոր կեանքը մտածելով ան-
ցուցեր է , թէ Երբոր մեռնինք ուր
պիտի Երթանք , որը մեզի պիտի վի-
ճակի , արքայութիւն թէ դժոխք :
Լութեր թշուառ սղանդապետը
մահուան որ մօտեցաւ , սկսաւ
ըսել . Կ՞նչ մեծ բան է արքայու-
թիւնը . ավասն որ ես զքեզ չտես-
նեմ պիտոր : Ով ցաւալի ճանաչում :

ինչ սոսկալի մահ է այս կերպով
մռնիլը : Մայր մը իր զաւկին՝ որ
մարտիրոս պիտի ըլլար , ըստու . Ու-
գեակ իմ, Երկինք նայէ : Նոյն բա-
նը մեզի կ'ըսէ եկեղեցին . Երկինքը
նայեցէք , արժանի Եղէք հոն մտնե-
լու և ժառանգելու մեկ օր մը . նայե-
ցէք որ ձեր վարքը անանկ ըլլայ՝
որ կարենաք զձեզ հոն տանիլ :

— օօօօօ —

ոյ , ով պրոշ է աթեք , ովք ի՞ն-
չոս կընաք ցազ այս լուսաբնեն
ումք ցիցով ուսունական ինչո՞ւ
ուսունական ինչո՞ւ մասնաւ ինչո՞ւ
մաս ինչ պատճեն անուան ինչո՞ւ
անուանար մի է , ոմք ունենակիք
է ունենար ինչ պատճեն անուան ունենակիք

ԳԼՈՒԽ ԺՂ.

Ազալեաբութե սիրանի սուրբ գրաց
խօսէրավ:

Ողորմեա ինձ Աստուած ըստ
մեծի ողորմութեան քում, և ըստ
անշափի խօրութեան իմ ողորմելու
թեանս :

Մեղայ յերկինս, և առաջի քո :
Մեղայ, և մեղք իմ առաջի իմ
Են յամենայն ժամ :

Մոլորեցայ Ես որսէս զոջսար
կորուսեալ, որ օտարացաւ 'ի սի-
րաբուն հովուեցի իւրմէ :

Ո՛վ տէր, գլժա 'ի հոգի իմ, որ
թանկագնոյ Եղե քեզ՝ քանզի ար-
ժանի համարեցար փրկել զնա-
գնով արեան քո :

Տէր մի սրամութեամբ քով յան-
դիմաներ զիս, և մի դատեսցեռ
արդարութեամբ քով, որսէս և
արժանի եմ :

Աստուած իմ, սրբութիւն սըր-
բոց, թէ կամիցիս գատել զիս ա-
նաշառ արդարութեամբ, ո՞ կարէ
կալ առաջի քո:

Այլ դու Աստուած ողորմու-
թեան, մի անտես առնելր զազա-
շանս իմ, և մի անարդեր զհեծու-
թիւնս սրտի իմոյ:

Վասն անուան քո տեր քաւես
զմեզս իմ, զի բազում եղեն յոյժ:

Աստուած իմ, գարշխմ յանն
նայն սրտե ի մեզացիմոց . և քոյովզ
շնորհիւ յանձն առնում մեռանել.
քան թէ միւս անգամ գառնացու-
ցանել զքեզ:

որու մահթառքը, ոկ օտարուն
ու ուժ յանու արքանով էն, ուստ
իշխես Աստուշը սպառագետ էն
իւնին՝ ստուշելի և զերմատանդ ա-
շունց, Քրիստոնեան հասնելու համար :

Աստուած իմ, հաւատամ ՚ի
քեզ, իմ հաւատքս զօրացուր .
յուսամ ՚ի քեզ, յոյսս ապահով-
ցուր . սիրեմ զքեզ, սերս աւել-
ցուր :

Կը զզամ մեղքերուս մրայ,
զզումս շասցուր :

Քեզ կը սկաշում, որ իմ առջի
սկիզբս ես . քեզ կը փափաքիմ, որ
իմ վերջին վախճանս ես : Ընոր-
հակալ եմ որ միշտ իմ բարերարս
ես, քեզ կը կանչեմ, որ իմ մեկ
հասիկ սկաշուպանս ես :

Տեր իմ և Աստուած իմ, քու
իմաստութեամբդ զիս կառավարի .
քու արդարութեամբդ զիս վախ-
ցուր . ողորմութիւդ զիս միիթա-
րէ, կարողութեամբդ սկահպանի :

Քեզ կը նուիրեմ իմ միաքս ,
խօսքս , գործքս ու քաշածս . որ
ասկէ Ետքը զքեզ միայն մատնամ ,
քու վրադ միայն խօսիմ , քու կա
մացդ համեմատ գործեմ , ու քեզի
համար միայն միշտ քաշեմ :

Այն բանիը կ'ուզեմ տէր , ինչ
որ գուն կ'ուզես . քու կամքդ
կ'ուզեմ , ինչպէս որ կ'ուզես , որ
չափ որ կ'ուզես :

Կ'ազաշեմ տէր , միտքս լուսու-
սորէ , կամքս վառէ , մարմինս մա-
քուր սպահէ . հոգիս սրբէ :

Դու ինձ օգնէ Աստուած իմ ,
որ կարենամ անցած մեղքերս քա-
ւել . գալու վորածութիւններուն
յաղթել . վատթար բնութիւնս
ոսքի տակ առնուլ , և ինձի ընկած
առաքինութիւնները կատարել :

Սիրաս լեցուը սիրով քու ինձի
ըրած բարիքներուդ համար . ա-
տելութեամբ՝ իմ մեղքերուս գէմ .
աղէկ սրտով ու ջանքով իմ եղբօրս
համար , ու բանի տեղ չսեպելով
աշխարհիս ամէն բանի :

Միտքս խօթէ ու յորդորէ որ
միշտ իմ մեծերուս հնազանգիմ.
իմ հպատակացո հետ սիրով վա-
րուիմ. բարեկամներուս հաւա-
տարիմ ըլլամ, թշնամիներուս սրբ-
տանց ներեմ:

Օդնեւ ինձ տեր, որ մարմինս
Ճնշելով՝ հեշտափրութիւնը կո-
խեմ. ողորմութիւնը ընելով աղա-
հութիւնը կոխսկուեմ. հեզ ըլլա-
լով բարեկութեան յաղթեմ. ջեր-
մեռանդ ըլլալով՝ դաղջութիւնը
հեռացընեմ:

Տուր ինձի Առողուած իմ. որ
խոհեմ ըլլամիմ գործքերուս մէջ,
սրտոտ՝ փորձանիքներուն մէջ, ձա-
խորդութեան առենը համբերող,
յաջողութեան առենը խոնարհ:

Մի թողուր որ մոռնամ խելքս
գլուխս աղօթք ընել, ուտելու
խմելու չափը պահել, զգուշաւոր
ըլլալ ամէն բանի մէջ, ու հաստա-
տուն մնալ բարի մորի վրայ:

Չիս շարժէ որ ճշմարիտ փոյթ

ունենամ խղճմտանքս միշտ մաքուր
սկահելու . ամէն շարժմունքիս մէջ
սկարկեշտ ըլլալու . ամենուն բարի
օրինակ տալու , ու առաքինի վար-
քով ասլրելու :

Քեզմով ջանք ունենամ ամէն
իժիր ընութես յաղթելու , շնորհ-
քիդ գործակից ըլլալու , օրէնքներդ
սկահելու , ու յաւիտենական փըր-
կութեան արժանի ըլլալու :

Շնորհէ ինձ տէր , որ Ճանշնամ
երկրիս սկզբիկութիւնը , երկնքին
մեծ ութիւնը , առև.նին կարճու-
թիւնը , յաւիտենականութեան
անվայնՃան ակողութիւնը :

Տէր Աստուած իմ , առւր ինծի
զիս մահուան սկարաստել . քու
դաստաստանէդ վախնալ , դժոխքէն
հեռանալ , և արքայութիւնդ ժա-
ռանգել շնորհչը և ողորմութեամբ
քու անբաւ մարդասիրութեանդ ,
և արդեամբք տեառն մերոյ Յի-
սուսի Ք.րիստոսի . ամէն :

ԳԼՈՒԽ ՎԵՐ ՃԻՆ :

Իրեւ մէծ-մէծ աղվելու բանեց ճարդ :
իւաց շարմանչին և իրենց իսորու-
թեանը վրայ . ամէն զուրցածներու ճարդ
թող իր վրան առնեն :

Առջի ասլշելու և միանգտմայն
ցաւելու բաներ աս է .

Ես ուրիշ բանի համար աշխարհք
չեմ եկած , բայց միայն Աստուծոյ
ծառայելու և զինքը սիրելու . իսկ
ես գրեթե ուրիշ բանի համար
չեմ կեցեր աշխարհքիս երեսը .
բայց զԱստուծն նեղացրնելու հա-
մար : Կ' նչ կեանք ունեցայ ին-
չուան հիմա . քանի որ կեցեր եմ
երկրիս վրայ , կը մտած եմ արդեօք
թե որուն նուիրեցի իմ սիրոս ու
իմ յօժարութիւններս : Կ' նչ բան
ըրած ունիմ Աստուծոյ համար .
իմ սաեզծ ողիս , իմ առջի սկզբանս
և իմ վերջին վախճանիս . ի՞նչ սիրու

ի՞նչ վոյթ ունեցայ իր սուրբ ծառայութեանիը համար , ի՞նչ նախանձաւորութիւն , իր վառացը համար :

Վայ ինձ , անոր ներհակ՝ իմ սերեսս սիրտի զարնուին՝ որչափ օրինազանցութիւնիք և անհաւատարմութիւնք առ շնորհս Աստուծոյ , իր կամացը գեմ կենալո , ու հակառակ ըլլալս մուաց աստուծային նախախնամութեան . Աստուծոյ ծառայելու տեղ՝ բոլոր կեանքս անցուցի զինքը վշտացընելու , ու իրեն հաճոյից գեմ բաներ ընելու :

Աս ի՞նչ եղաւ . ան բանիս համար Աստուծ զիս սուզձեց , ու երկրիս վրայ դրաւ : Ի՞նչ բանի պէտք էր՝ որ ևս իմ միտքս զբաղեցրինի . Եթէ ոչ իր մեծութիւնը մուծելու , ի՞նչ բանի պիտոր շտկինի իմ սրտիս յօժարութիւնները , Եթէ ոչ՝ իր անապատելի գեղեցկութիւնը սիրելու , ի՞նչ բանի սիրու

ծախելի իմ բոլոր վրոյթու և ջանքս ,
բայց միայն իրեն ծառայելու , և
հոգիու փրկելու : Աշխատրակոյսու
ըիշ բանի համար պիտոր չապրելի ,
բայց միայն իրեն համար , և սա-
կայն դուցէ օր մըն ալ չեղաւ կեան-
քիս մէջ , որ զինքը ստուգապէս
սիրած ըլլամ , զինքը ապերախու-
թեամբ վշտացուցած ըրլամ : Ու
ըեւմն ի՞նչպէս չեմ մտածեր . յըլայ
թէ քիշ մը ատենեն իր առջեր
իմ բոլոր կենացս և իմ դործքե-
րուս համարը տալու ելլեմ . ան ա-
տեն ի՞նչպէս զատնիք իր դիմացը
հանեմ :

Ով ամենասեր արարիշ իմ , և
դատաւոր իմ վիճակիս , իս որ աշ-
խարհքս բերիր , քու մոքիդ մէջ
ի՞նչ մեծամեծ և գեղեցիկ գիտա-
ւորութիւններ ունեիր իմ վրաս
քու մարդասիրութեամբդ , և ի՞նչ
աղեկ բաներ պիտի ըլլար ինձի .
այլ վայ ինձ , ես ներհակ գտնուե-
ցայ քու երկրուպագելի մոքիդ . երբ

որ աս իմ ապերախտութիւնս կը
յիշեմ, բնչպէս ես իմ վրաս բոլո-
րովին ապշութիւն չունենամ իմ
սրտիս անկարգութեանը վրայ :

Երկրորդ ապշելու բանն աս է :
Կարելի՞ էր արդեօք, որ քեզնէ
այսափ անգին շնորհքներ առնե-
լէս ետքը այսու ամենայնիւ ասանկ
ամենաբարի ստեղծողիս դէմ միշտ
ապերախտ ըլլամ, ասչափ ծով և
վատ, այսչափ մեղապարտ և բոլո-
րովին անարժան : Թէ որ այնչափ
անհաւատներ կոտապաշտներ ա-
ռած ըլլային այն շնորհքներն՝ որ
ինձի պարզեց տէրն, մէյմէկ մեծ
սուրբ կըլլային . Ծէ որ այնչափ
մեղառիներ, մեծամեղներ ալ աս-
չափ երախտիք դտած ըլլային Առ-
տուծմէ կ'ապաշխարէին իսորդով
և մոխրով :

Երբոր միաքս կը բերեմ ան ամեն
բանն ինչ որ Աստուած ինձի համար
ըբեր է բովանդակ կեանքիս մէջ,
այնչափ վտանգները՝ յորոց զիս

պահեր է, այնչափ առիթունը՝
որոնց մէջ ինծի թիկունք եղեր
է, այնչափ փորձանելքներն՝ որ ինծի
կրնային հանդիպիլ, որոնց մէջ
հազար անգամ կրնայի կորսուիլ.
մաստանդ այնչափ ներբին և մաս-
նառը շնորհքները, որ անգադար
ինծի ըրաւ, ազդու տպաւորու-
թիւններ, քաղցր ախորժակներ.
փրկարար խայթ խղճի, ուր ես կը-
հեռացրնեի ինծմէ այդ գաղտնի
ձայնը, զոր անպակաս լսել կու-
տար ինծի և կը կոչեր զիս 'ի խոս-
տացեալն իմ հաւասարմութիւն,
այս ամենայն բարիք որպիսի զգաս-
տութիւն սիստի շտային իմ սրտիս:
Գիտեմ որ աս շնորհքներն եղան
ինծի, շատ սոսասապես եղան բայց
ես ի՞նչպես բանեցուցի, ի՞նչ պը-
տուզ քաղեցի: Երբոր Աստուած
իմ երեսս զարնե մէկ կողմանէ այս
ամենայն ինծի ըրածները, և մէ-
կալ կողմանէ համար ուզէ թէ
ի՞նչ բանի բերիր, ի՞նչ պատասխան

ունիմ տալու : Գիտի ըսէ . Զի՞նչ
ինչ առնել էր այդոյ խմոյ , և ես
ոչ արարի : Ու մքայ պիտի բերէ .
Հասկա ես քեզնել ինչե՞ր պիտի պա .
Հանջէի իրաւամբը : Կայր առարի .
Նութիւն՝ որ պարտական շեիր ընել
լու . որ սստիճան որբութեան
վեր չելլեյիր պիտոր . և այսու ա
մենայնիւ նայէ թէ ի՞նչ Երեսով
իմ առեանս կ'երևնաս : Գիտեիր
որ առ շնորհքները մուռ տեղ
շարուեցան քեզի . ազէկ գիտեիր՝
որ մէկ օր մը քեզնել համար պի .
տոր ուզէի . և ահա եկաւ հասաւ
ան օրը . համար տուր իմ արդա .
րութեանս՝ իմ քեզի ըրած ոզոր .
մութես բավանդակ կենացդ մէջ .
Տուր զհամար անետսութեան քո :
Այս տէր , Աստուած անբաւելի
բարութեամբ , և ս ի՞նչ պատաս .
խան պիտոր տամ , և ի՞նչ պիտոր
ընեմ , բայց եթէ ոտքդ իյնամ .
գառն արաւառոք լամ առջեղ .
Նորէնքու ոզորմութիւնդ ինդընէմ .

զորին որ չարաշար բանեցուցի
ու պաղատիմ որ չզոկես զիս 'ի քո
պարզեացդ , ինչպէս որ արժանի
էի . և չհեռացնես ինձմէ քու աս-
տուածային լոյսդ , ու թողուս զիս
իմ սոսկալի խաւարիս մէջ , որ
կըլլայ իմ կուրութեանս վերջի
ծայրը , և ծագ ամենայն թշուա-
ռութեանցու :

Հազար ի՞նչ ասկը լու և ցաւելու
բան է աս , որ ես ալ գիտեի՝ թէ
երկրիս վրայ շատ առեն կենալիք
չունիմ , քիչ մը առենեն ետքը ան-
մերջանալի յաւիտեանկը ինձի կը
սպասէ . այսու ամենայնիւ ես ապ-
րեցայ անցաւոր ժամանակի հա-
մար՝ աչքէս հեռացրնելով անանց
յաւիտենականութիւնը : Գիտեի
որ քանի մը օրը , կամ քանի մը
առրին շուտով կը վերջանան .
ուր հազար տարին ալ շատ չէր
զիս պատրաստելու յաւիտենակա-
նութեան , յոր ամէն վայրկեան
կրնայի մանել . այսու ամենայնիւ

աս Քիչ մը առենն որ ունեցայ,
ուրիշ բանի ջանցուցի, Եթէ ոչ
անշահ և ոչինչ բաներու, վուշ
զբոսանքներու : Եւ ահա աս ա-
տենն ալ մօտ է աներեսոյթ ըլլա-
լու աչքէս, ու յաւիտենականու-
թիւնը պիտոր բացուի ոսիցս տակ՝
որ իս իր ծոցը թաղէ :

Բայց աս յաւիտենականութիւնը
պիտի ըլլայ ինձի կամ երջանիկ,
կամ թշուառ յաւիտեան : Ո՞հ
ժամանակ, ո՞հ յաւիտենականու-
թիւն, ո՞հ ցաւալի կուրութիւն :
Իրեք շորս օր կայ ապրելիք աս աշ-
խարհքիս մէջ . իսկ անդին յաւի-
տենականութիւն կայ . և այսու-
ամենայնիւ՝ աս իրեք շորս օրուան
համար և մարդկանց հոգը փոյթը .
բնաւ փոյթերնին չէ յաւիտենա-
կանութեան համար : Ո՞ւր մնաց
հաւատք, ուր մնաց բանականու-
թիւն :

Բայց մէկ ապշելու բան մ'այ-
կայ՝ ամենեն առելի, որ ինքն Առ-

առաջ բարի և բարերար, որ եւ
զինքը մոռցեր գացեր եմ, այն Աս-
տուածն որ եւ առշավ անարդեր
եմ, գեռ սիրով պատրաստ է զիս
ընդունելու, թէ որ հիմա աս վայրը
կենիս սարզ սրտով և անկեղծ
մոք իրեն գառնամ: Աս ասանկ
է, գիտնանիք: Ո՞րչամբ որ տգեղ
եղած են իմ իրեն գեմ ըրած
մեղքերս, թէ ալետե եւ արհամար-
հեր եմիր սուրբ օրենքը, թէ ալետե
չարաշար բանեցուցեր եմիր շնորհ-
քները, ինքը յօժար և պատրաստ
էներումն տալ իմ անօրենութեցու,
թէ որ իմ սիրաս ասոնցմէ զզուի
գարշի . և թէ ալետ եւ չարաշար
անցուցեր եմ ժամանակս, այսու-
ամենայնիւ մեծ յոյս կուտայ ինձի
իր ովորմութեամբը հասնիլ 'ի յա-
փառենական երանութիւն:

Ո՞վ ամենովորմ Աստուած, աս
աստիճանն կրնայ Եղեր հասնիլ քո-
բարուիդ, մանաւանդ կը համար-
ձակիմ ըսել, աս չափազանցութիւն

դեմ՝ ի քու արարածդ , որ քեզի
դեմ ասչափ ապերախտ Եղած է ,
ասչափ անհաւասարիմ և ասչափ
մեղապարտ : Կրնայ ըլլուլ Եղեր ,
որ այսու ամենայինիւ քաղցր և
գթալից աչքով նայիս իր վրայ :
Հասկա կարելի բան է որ ես
անարդել ուզեմ ասանկ մեծ
շնորհըք , որուն յոյս պիտոր չու-
նենայի , ասանկ վաստիար կեանք
վարելու Եսքը : Չե չէ , ով Աս-
տուած անսահման բարութեամբ ,
քաւ լիցի թէ ես ուզեմ չարա-
չար վարել բնաւ քու պարզե-
ներդ : Կը զարմանամ քու անբաւ
մեծութեանդ վրայ , բայց Երկրու-
սպագեմ և կ'օրհնեմ քու անձառե-
լի ողորմութիւնդ : Աս օրես՝ աս
վայրկենես կը սկսիմ 'ի փառս քո
անցընել բոլոր ժամանակս , որ
չափ որ մնամ առ Երկրիս վրայ :
Եւարդ ամենաբարիդ Աստուած ,
ընկաւլ զհարկ պարտուցս , զոր հիմա
քեզ կը մաստոցանեմ : Կը խոստո-

վանիմ որ իմ կեանքս եղաւ շա-
րունակ կուրութիւն . շարունակ
ճամբէ խոսորութիւն . կը խոստվա-
նիմ որ աս կենացս մէջ ամէն բան
փուռ ամէն բան ունայնութիւն
է և ոչինչ . աս աշխարքս բոլոր խա-
բէութիւն է , մալորութիւն է , չկայ
ճշմարիս մսիթարութիւն և հաս-
տատուն երջանկութիւն , բայց միայն
'ի քեզ , 'ի ծառայելն քեզ , 'ի սի-
րելն զքեզ . 'ի ներքսապէս միա-
նալն ընդ քեզ , իսկապէս ամէն
բանէն կորուելով :

Տէր , մահուանս առեն ուրիշ
բան գտնելիք չունիմ , բայց միայն
զքեզ . ուստի կենացս ժամանակն
ալ պէտք է որ քեզի հետ կա-
պուիմ : Ան ի՞նչ չնորհք է որ ինձի
կընես , դեռ քիչ մը առեն տալով
ինձի , որ աչքս բանամ իմ սիսալ-
մունքիս վրայ , ու նայիմ որ չկոր-
ծանիմ : Այս ինձ , ես ինչուան
հիմա խոշոր խոշոր քայլով կը վա-
զէի , գուցե արդէն ան վայրկեանը

Հասկը Եի՝ որ գլորիմ կորսուիմ
յաւիտեան :

Ասոր համար ասկից և ազրը չէ. մ.
ուզեր ուրիշ բանի համար ապրիլ.
բայց միայն իմ պակառութիւնները
լալու, քու սուրբօրէնքդ պահելու,
և բանի բերելու քու ամեն շնորհ
քներգ, և վերջապէս զիս պատ-
րաստելու այն վատվաքէլի յաւիտ-
նականութեան, ուր կ'ուզես ինձի
ալ տեղ մը պահել : Երանի ին-
ձի թէ որ ուրիշ համբայ մը բնու-
րոնած չըլսայի, բայց զայե միայն
որ պիտի տանելը զիս 'ի մշտնջե-
նաւոր երանութիւն :

